


Բարի

ՅՈՒՆԻՈՒՆ 85



Digitized by A.R.A.R.©

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.— Ն. ՊԵՏԻԿՈՒՇԼԵԱՆ Միքրոմեգիա
- 10.— Յ. ՊԵՏԻԿՆԵԱՆ Էրենսք-Հեմինկուէյ
- 13.— Է. ՀԵՄԻՆԿՈՒԷՅ Մաքսիմ, լաւ լուսաւորուած տեղ մը
(հայացուց՝ Յ. ՊԵՏԻԿՆԵԱՆ) .
- 17.— Պ. ՍՆԱՊԵԱՆ Միքմաքար — 4
- 29.— Փ. ՃԵՐԱՆԵԱՆ Իշխտա
- 30.— Յ. ՕՇԱԿԱՆ Շահպազը
- 47.— * * * Հրեուալիք բարեշրջում
- 48.— Ս. ԹՈՓՉԵԱՆ Անհունի անդրադարձը
- 51.— Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ Տիրան Զրաքեան
- 55.— Վ.Լ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Ինտրա
- 57.— Գ. ԱՃԵՄԵԱՆ Դրական քննադատութեան
նոր եւ եզակի եզանակ
- 66.— Մ. ՄԻՆԱՍԵԱՆ Հրաշքայ Անտառանի ճամակները
Վիեննայի Միջաբաններուն
- 69.— Հ.Ր. ԱՃԱՌԵԱՆ Նամակ՝ Հ. Յակոբոս Տաշեանին
- 73.— Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ Յակոբ Յակոբեանի հետ
- 78.— Մ. ԻՇԽԱՆ Պ. Սնապեանի «Արադի»-ը
- 79.— * * * Մշակութային լուրեր

Կողքի նկար՝ գործ ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆԻ

170-2800

digitised by A.R.A.R.@

Բազմ

ԱՂԱՅԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՅԻ

Ի.Բ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1 ԵՐԵՎԱՆԻ 1965 ՎԵՐԱԶԻՐ

Ներկայ Բառերախաղը մեկն է Նշան Պելիկ-
Քալիանի շատ տարածված վերջին գործերից, որը ող-
բացեալ երգիծարանը յղած է գեղարվեստի ճիշտ
այն տեսն, երբ Նշանաւոր հանգիւշը, իր կարգին,
կ'ապրէր իր վերջին օրերը: Այս պայմաններուն
մէջ գործը յայտնէ տեսած ու մտապիտեղ պահ
զրուած է խմբադէպ ու գրականութեան պատմիչ
Միշտ Թէօֆիլանի մօտ, որ ազնուօրէն զայն
ալ աւագործից գիտադիմանէ:

Սփիւռքահայ գրականութեան երգիծական
մարդին դրօշակերն էր Նշան ՊելիկՔալիան եւ
իր մահով զգալիօրէն պակսեցան մեզի ծիծաղը,
անոր հաճախն ու հալոսանները:

Երկին իսկն կը վիճակուէ լեցնել այդ բացը,
գիտելով իրենց անուն այս երգիծախաղով, որ ան-
կախ իր գրական արժէքէն՝ կը կարդացուի, ինչ-
պէս կ'ըսեն, հեւ ի հեւ:



Ն. ՊԵԼԻԿՔԱԼԻԱՆ

Մ Ի Ք Ր Ո Ն Ե Զ Ի Ա

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՎ)

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՆՈՒՐՀԱՆ ՊԱՐՈՅՐ
ՕՀԱՆՃԱՆ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ

(40 տարեկան)
(50 տարեկան)

digitised by A.R.A.R.@

70897-807
90231-ԱԳ

ԲՐԼԱՆԹԻ ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ	(40 տարեկան)
ԳԵԴԵՈՆ ԲԱՄՊԱԿԵԱՆ	(45 տարեկան)
ԷԼՊԻՍ ԲԱՄՊԱԿԵԱՆ	(40 տարեկան)
ՇԱՀԱՍՊՐԱՄ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ	(30 տարեկան)
ԳԵՂԵՑԻԿ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ	(45 տարեկան)
ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔ ԱԲՐԱՀԱՄԵԱՆՑ	(45 տարեկան)
ՇԱՐԱՄ ՇՄԱԻՈՆԵԱՆ	(65 տարեկան)
ԱԲԻԿ ԿՈՐԵԱՆ	(35 տարեկան)
ՃԱՆԻԿ ՃԻՈՒՆԵԱՆ	(40 տարեկան)

Գործողութիւնը տեղի կ'ունենայ միջին Ֆրանսայի երկրորդական քաղաքներէն մէկուն մէջ, 1950ին:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Բեմը կը ներկայացնէ բնդարձակ, գաւառական ճիւղասնճեակ մը, ինքն ճնշով բայց շփեղ կառ-կարասիով: Խորը կայ մուտքի դռնը: Զախակողմն ալ դռն մը, իսկ աջակողմը կամ պատուհաններ: Մէջտեղը տեղան մը՝ ծաղկազարդ: Պատերուն վրայ բնանկարներ: Թիկնաքառներ եւ աքառներ: Բրլանթի ճըստած է ձախակողմը եւ ռնկի քաղաքը ու մատիտ: Օհամման նստած է աջա-կողմը, պէրէսով է, ու կը ծխէ ճեղքորած:

1

ԲՐԼԱՆԹԻ.— Եթէ բարբարոսներու միջազգային մրցում ըլլայ՝ առաջին մըր-ցանակը կը շահիս դուն:

ՕՀԱՆՃԱՆ.— Որովհետեւ բնական, բնականն, բնազէտ մարդ եմ:

ԲՐԼԱՆԹԻ.— Այսինքն՝ բնաւ մարդ չես:

ՕՀԱՆՃԱՆ.— Իսկ եթէ փախուկներու մրցում ըլլայ, առաջին մրցանակը, հետն ալ ոսկի, հաստ շղթայ մը, քեզի կու տան:

ԲՐԼԱՆԹԻ.— Միշտ խենթ համարուած են կեանքը յեղաշրջել, կեանքը գեղեցկացնել ուզողները: Խենթ համարուած են՝ տափակութեան գետի-նէն սահելով դէպի բարձունք թռչողները: Միշտ խենթ համարուած են ճշմարտութեան, որ գեղեցկութեան ուրիշ մէկ ձեւն է, քարոզիչ-ները: Այո՛, խենթ համարուած են հանճարները, հերոսները, հաշա-կաւոր մարդիկը: Ես ալ այդ կարգի խենթ մըն եմ: Պարծանքով կ'ըն-դունիմ խենթ ըլլալս: Բայց գլխադիր խենթ մըն եմ, որովհետեւ հա-սարակ, տափակ, խոհանոցի խեղճ կիւն մը չեմ: Գրազէտ մը կ'ընայ ըմբռնել ու դնահատել զիս:

ՕՀԱՆՃԱՆ.— Խեղք միտքը գրողներու հետ է: Թող գրողի մը հետ կարգը-ւէիլ ու զիս փորձանքի մէջ չխոթէիլ: Կրողը տանի քեզ ալ, գրող-նե՛րն ալ...

ԲՐԼԱՆԹԻ.— Ակն ընդ ական: Քանի որ դուն զիս փորձանքի մէջ խոթեցիր՝ զիս խաբելով, ես ալ քեզ փորձանքի մէջ պիտի խոթեմ: Փորձանքի մէջ միասին պիտի մտնենք: Զէ՞ որ միացած ենք, ու ամէն տեղ միա-սին պիտի մտնենք, դուն առջեւն, ես ալ ետեւէդ համեմատօրէն:

ՕՀԱՆՃԱՆ.— Արդեա՞ր, ո՛ւր որ գացած ենք, ամէն անգամ դուռէ մը ներս մտնելու, նախ՝ քեզի ճամբայ կու տամ, նախ՝ քեզ ներս կ'անցընեմ. դո՛ւն է որ առաջ կը մտնես, ես ալ ետեւէդ կու գամ: Եւ՝ հակառակ վայրենի բլլալու: Ես կըթուած մարդոց անգամ օրական տասը դաս կընամ տալ: Ես, այո՛, կըթուած մարդ եմ, քանի որ կնոջ ճամբայ կու տամ: Հակառակը կընա՞ս ըսել...

ԲՐԼԱՆԹԻ.— Այդ միակ կըթուէ՞ր իր փոխադարձ օր մը: Երբ խոնդիքը գերեզմանի դուռին դայ, ե՛ս քեզի ճամբայ պիտի տամ, որ առաջ դո՛ւն անցնես: Եւ կանուխէն անցնես... Ինձմէ ալ շատ առաջ անցնես: Կըթուէ՞ր կըթուե՞ն փոխարէն:

ՕՀԱՆՃԱՆ.— Շատ պիտի սպասեմ ատ օրուան: Գիտցի՛ր, որ հայրս մեռած է 98 տարեկան, իսկ մայրս՝ 102 տարեկան: Երկուքին միջինը կ'ընէ 100: Հօրս եւ մօրս տասներեքերորդ զաւակն եմ ես: Բայց ես պիտի ապրիմ մօրմէս շատ աւելի, որովհետեւ զբաւուած եմ տղթ. Վորա-նովի կողմէ եւ զինուած եմ Պոկոմոյէցի շինուկներով: Ամբակուս բերդ եմ ես: Թո՛ղ մահը ուզածին յափ գերանդին զարնէ բերդիս, քարի կը-տոր մը անգամ չի կրնար վար տռնել ինձմէ: (Կը կռնկոյն, կը ցցուի ատաղանի պէս): Կը տռնե՞ս զիս... (Դարձեալ կը մտնի, արձանա-նսլէ յետոյ):

ԲՐԼԱՆԹԻ.— Իրեւունք ունի, ժայռ ես, քար ես, գերեզմանաքար ես, ըսե-լիք չկայ: Բայց միտք չունիս, հոգի չունիս: Ողջ մեռել ես: Դուն քու տապանաքարդ ես:

ՕՀԱՆՃԱՆ.— Իսկ դուն պոլոսեցի ես: Մահալլէպի փողոց: Դուն գերեզմանի քար չես, գերեզմանի ծառ ես: Եթէ մինչեւ վաթսուս ապրիս, հրաք է, ու առ հրաշքը ինձի պիտի պարտիս: Ես չիտակ խօսող մարդ եմ, խաբեքայ չեմ:

ԲՐԼԱՆԹԻ.— Դո՛ւն խաբեքայ չես...: Ո՞վ էր զիս խաբողը «առեւտրական եմ» գրելով նամակներու մէջ: «Առեւտրական»...: Մենք առեւտրա-կան բռնով՝ կը հասկնանք զհաւերեղէնի վաճառական, մանիֆաթու-րայի վաճառական, գորգի վաճառական, կաշիի վաճառական, տոնը-ւազն կերպասի կամ կարասիի վաճառական: Մինչդեռ դուն գոհ՜իկ նպարավաճառ մըն ես: Գոնէ մեծաքանակ ծախող մը բլլայիր...: Նը-պարավաճառ՝, գինեվաճառ, բանջարավաճառ ու պողպավաճառ...: Աս՝ մէկ:

ՕՀԱՆՃԱՆ.— Տեսա՞ր ի՛նչ համեստ մարդ եմ. փոխանակ պարծենալու, որ թէ՛ նպարավաճառ եմ, թէ՛ գինեվաճառ, թէ՛ բանջարավաճառ, թէ՛ պողպավաճառ, թէ՛ կաթնավաճառ, գրած եմ համեստօրէն «առեւտը-րական»:

ԲՐԼԱՆԹԻ.— Երկրորդ՝ դուն չէ՞ր, որ քառասուն տարեկան եմ, կը գրէիր նամակներուդ մէջ, երբ յիսունին մաս մը մնացած էիր:

ՕՀԱՆՃԱՆ.— Ատիկա տպագրական սխալի պէս բան մըն է: Յիսունը եղեր է քառասուն: Բան մը չեմ տեսչուցեր, պակսեցուցեր եմ: Աս ալ հա-մեստութիւն է:

ԲՐԼԱՆԹԻ.— Դուն չէ՞ր, որ շէշ մը ղիճի փոխարէն, բանաստեղծական նա-մակներ գրեց կու տայիր բանաստեղծ Կորեանին...: Եղաւ երեք:

ՕՀԱՆՃԱՆ.— Առեւտրական մը, բնական է, որ գրապիւր մը ունենայ՝ անոր գրել տալու համար իր նամակները: Եւրոպայի մէջ ընդունուած սո-վորութիւն է: Ո՛ւր ենք, Ասիայ մէջ չենք:

ԲՐԱՆԹԻ.— Զորքորդ՝ դու չէի՞ր, որ լուսանկարդ խարդախելով դրկեցիր։ Գլխիդ կեղծամ գրած, դէմքիդ կնճիռները ստույթեան սրբադրութիւններով փնջած, քովդ ալ գիրքեր շարած ու մտաւորականի հովեր արած։ Ասոր թնչ ըսիր...

ՅԱՆՃԱՆ.— Ատ ալ համեստութենէս էր...։ Լուսափայլ հանճարս ծածկած էի կեղծամով։ Իսկ յընդարձակ ընդունուած է եւ զնահատուած, ամէն արուեստի մէջ։ Լուսանկարիչս, որ մեծ արուեստագէտ մըն է, ըստեւ...։ Վերականութիւնը իտէալականացնելու է մասամբ, որոշ ատենի մը համար...

ԲՐԱՆԹԻ.— Դուն չէի՞ր, որ զրկած էիր խմբանկար մը, որուն մէջ, իբր թէ, միութեան մը նախագահն էիր ու ճառ կը խօսէիր, սեղանի մը ետեւը կեցած։ Երբորդ պատկերի մը մէջ, դուն չէի՞ր, որ զբաւեցնակի մը կեղծոնը, Քրանսագի մօրուսաւոր ծերունիի մը հետ էիր, եւ կը գրէիր, թէ նախկին երեսփոխան, ներկայիս քաղաքագետ եւ ապա-զային նախարար՝ monsieur Թիմոլէոն Եարբանթիէի հետ ես, հայ ազ-դային խնդիրներու մասին կարգադրութիւններ յաջողցնելով ես զբա-ղած։ Ո՞ր մէկը ըսեմ, Աստուած իմ։ Հա՛, լաւ յիշեցի։ Դուն չէի՞ր, որ լուսանկարուած էիր պատուանշաններով, որոնք լահած էիր Ծրան-սայի մատուցած ծոռայութիւններուդ փոխարէն։ Հաս մը կրնա՞ս ը-սել այդ ծառայութիւններէն...

ՅԱՆՃԱՆ.— Սեւ շուկայ ընելա՛, կեանքս եւ ինչքս վտանգելով։ Որպէսզի Ժողովուրդը սովամահ չըլլայ։ Դիմազրական դարձունքութիւնս, երբ զաղտնօրէն տուած, գիմազրական թերթերու մէջ կը ծրարէի ազ-րանքներս, որպէսզի յանախորդներս կարդային ու միանային դիմա-զրողներուն...։ Եւ առկաին ծառայութիւններ, որոնց մասին խօսիլ կ'արդիւնէ...։ Համեստութիւնս։

ԲՐԱՆԹԻ.— Վերջապէս, դուն չէի՞ր, որ կը գրէիր, թէ մեր՝ դաւաճական սիրուն քաղաքին մէջ գրական, երաժշտական, թատերական կեանք մը կ'եռայ։ Մինչդեռ՝ եկայ ու տեսայ, որ ամէն տան մէջ ապուր միայն կ'եռայ։ Ամէնքն ալ ապուր խառնողներ են, ապուր ուտողներ, եւ ա-նոնց պարագլուխն ալ դո՛ւն ես։

ՅԱՆՃԱՆ.— Ելդենք, պարագլուխ չեմ, լուրջ մարդ եմ։ Նոյնիսկ պատկա-ռելի։ Նախազան եմ։

ԲՐԱՆԹԻ.— Այդ բոլոր ստորին սուտերը զրել տուիր, որովհետեւ գիտէիր, թէ դրասէր-զեղարուեստասէր եմ, զհրեցիկ եմ, երկրորդական ուսում ստացած եմ, եւ անպատճառ կ'ուզէիր ունենալ զիս։ Որպէսզի փառա-ւորուիս։ Եւ փառաւորուեցար, քու փառասիրութեանդ նոխազը, նահա-տակը ընելով զիս։ Եւ հիմա խենթ կ'անուանես զիս։ Աստուծէ՛ զըստ-նես...

ՅԱՆՃԱՆ.— Ամբողջացո՛ւր, ըսէ՛, որ այրեցի քեզ...

ԲՐԱՆԹԻ.— Վա՛յ գլխուդ։ Դուն ո՛վ, այրողը ո՛վ։ Այրելու համար՝ կրակ պէ՛տք է։ Դուն զիս ստեղծուցիր։ Զբաւականացար խանդա խաւարե-լով, եռանդս մարելով, այլ պահեցուցիր, ստեղծուցիր։ Եւ երբ առա-ջարկեցի Փարիզին հայ դրող մը հրաւիրել սա մեր սառի պէս պաղ ու աւարակ, միօրինակ կեանքին ջերմութիւն, միւնհալ, ալեկոծութիւն տալու համար...

ՅԱՆՃԱՆ.— Այո՛, ալեկոծութիւն, այսինքն՝ տակնօքայութիւն։ Ալեկո-ծութեան մէջ մարդ կը խնդրուի...

ԲՐԼԱՆԹԻ — Մի՛ ընդմիջե՛ր զիտ, անկերթ: Երբ անաշարկեցի մեր անտանիկի կեանքը՝ զեղեցիկացնել, քաղցրացնել, կարճ ժամանակ մը զոնե՛մք կեանքին մէջ բանաստեղծութիւն խառնելով...:

ՕՀԱՆՃԱՆ — Աչեկոծե՛լ, խառնե՛լ. բո՛ւ՛ տակաւին պզտորե՛լ, պզծե՛լ...:

ԲՐԼԱՆԹԻ — Պահաջեցի, որ լընդմիջես, անդամս՝ որբապիղծ: Վերջապէս, երբ անաշարկեցի քանի մը շարթուան համար, փարեզէն հայ դրապէտ մը հրաւիրել, ու ապրիլ մշակութային մթնոլորտի մը մէջ, սկսաք բորբոքել, բարկանալ, զանգատել, պոռալ, ընդդիմանալ, կոսկածել, նախանձել, հիւսնահանալ: Կարծես թէ հայ դրապէտը կին ուսող ճիւղ մը ըլլար, հրէշ մը ըլլար, կարծես թէ հայ դրապէտը մոլորութիւններու մարմնացումը ըլլար, իզամոլ, գինեմոլ, խաղամոլ, նիւթամոլ, առաւփախաւ...:

ՕՀԱՆՃԱՆ — Զուգեցի, բայց վերջը համաձայնեցայ: Եւ ահա, վաղը հոս պիտի ըլլայ որբած դրապէտը, խերով դար ու բարով երթար արագօրէն: Ամէն ժարդ՝ ամէն բանի առաջին վայրկեանէն համաձայն է՝ ըլլա՞յ: Համաձայն չէ՞ր, բայց համաձայնեցանք...:

ԲՐԼԱՆԹԻ — Համաձայնեցար, բայց ե՞րբ, ինչպէ՞ս, հոգիիս ազդուարին տախտակները քանդելէ, զամերը քաշելէ, ծաղկները փետելէ ու առորանոր առջեւ խայտառակաբար նետելէ յետոյ...:

ՕՀԱՆՃԱՆ — Նորէն բանաստեղծ կտրեցար:

ԲՐԼԱՆԹԻ — Բարբաբոս, բանաստեղծները մի՛ նախատեր: Գրագէտները մեր մտքին սնունդ տուողներն են. բանաստեղծներն ալ մեր հոգիին սնունդ կու տան:

ՕՀԱՆՃԱՆ — Եթէ ատանկ է, ես ալ բանաստեղծ եմ, եւ մեծ բանաստեղծ: Ես ալ մարմինին սնունդ տուող նպարավաճառ եմ: Տեսա՞ր, որ նպարավաճառութիւնը որքա՞ն մօտեցաւ բանաստեղծութեան: Նոյնիսկ անկէ ալ առաջ անցաւ:

ԲՐԼԱՆԹԻ — Ուրեմն՝ պաշտօնակից ես Պառնասի պուետներուն (Վեր Թայել-լով): Կը լսե՞ք սա արքայզոծութիւնը, ո՛վ պաշտելիներս, ո՛վ Ալիշան ու Վարուժան, ո՛վ Դուրեան, ո՛վ Թէքէեան, ո՛վ Մեծարեան...: Կը լսե՞ք սա արքայզոծութիւնը, ո՛վ սիրելի Նուրհան Պարոյր...:

ՕՀԱՆՃԱՆ — Աս բանաստեղծները, եթէ լսէին, պիտի ըսէին. — «Յանձանը շատ ալ իրաւունք ունի, բան մըն ալ աւելի. որովհետեւ մարդ արարածը առանց մտքի ու հոգիի սնունդի կրնայ ապրել, բայց առանց մարմինի սնունդի՝ ոտքերը կը տնկէ: Քանի որ Աստուած մարդը ասանկ ստեղծած է, ուրեմն՝ նպարավաճառ մը մենէ շատ աւելի կարեւոր մարդ մըն է: Աս մէկը թո՛ղ լաւ գիտնան մեր վրայ չխացողները»:

ԲՐԼԱՆԹԻ — Զեյիս, վաղը, պարոն Նուրհան Պարոյրի առջեւ ալ անանկ տղամարթախ զազափարներ յայտնեալ:

ՕՀԱՆՃԱՆ — Ինչո՞ւ պիտի չյայտնեմ: Ուրեմն՝ իմ ական մէջ դրապէտ պարոն Նուրհան Պարոյրը հիւր պիտի ըլլայ, պիտի աւտէ, խմէ, ծխէ, քնանայ, կնկանս հետ պիտի ճոռուղէ կտուց կտուցի, եւ ես բերանս դո՛ց պիտի նստիմ...:

ԲՐԼԱՆԹԻ — Նորէն նախանձի օձը արթնցաւ մէջդ:

ՕՀԱՆՃԱՆ — Արթնցածը նախանձ չէ, արժանապատուութիւն է. արթնցածը օձ չէ, առիւծ է: Քաղաքիս հայերը խօսիլ սկսած են մեր վրայ՝ «Յանձանին կնիկը Փարիզէն գրող բերել կու տայ կոր» ըսելով: Բամբաստանքը բանիլ սկսած է, եւ պատիւիս համար պատանդ կը պատրաստեմ:

Ձեռք մեղադրեր դիրենք. ես ալ եթէ իրենց տեղը ըլլայի, պիտի բաժնարէի:

ԲՐԼԱՆԹԻ.— Հպարտ եղիր, որ կինդ դրազէտներու հետ ընկերութիւն ընել գիտէ: Հպարտ եղիր կ'ըսեմ:

ՕՀԱՆՃԱՆ.— Ըլլալիք բան չէ. հպարտ ըլլամ, որ կինս դրազէտի հետ ծաղկաբանել, պտղաբանել, քանջաբանել, ապուխտաբանել, երշիկաբանել գիտէ: Այս բաներն ալ դուն ծախէ դրազէտիդ: Ես հպարտ ըլլալ չեմ ուզեր. ես միշտ համեստ ըլլալ ուզած եմ: Կը նախընտրեմ համեստ ու հեղ կենդանի մը ըլլալ, քան թէ հպարտ, կոտորուոր անասուն մը...: Կրնաս սոխակ ըլլալ, կրնաս սիրաբանիլ (թէ եւ ես չկրցայ հաստատել այդ կարողութիւնդ), բայց ես չեմ կրնար հպարտանալ, որ կինս փութիլի զերը լաւ կը խաղայ...

ԲՐԼԱՆԹԻ.— Սիրաբանի՞լ...: Ի՞նչ որիկայական մտածում: Եթէ նոյնիսկ սիրութեմ Նուրհան Պարոյրէն, այդ պիտի ըլլայ մտաւորական սէր:

ՕՀԱՆՃԱՆ.— Սէրը հանդարտ վառող կրակ չէ: Սէրը աչքէն ներս կը մտնէ, կ'անցնի մտքին մէջէն, անկէ կ'անցնի բերնէն, կոկորդէն ու կը մտնէ սրտին մէջ, կը տարածուի արիւնին մէջ, մինչեւ մարդուս մտանքերուն ու ոտքերուն ծայրերը:

ԲՐԼԱՆԹԻ.— Ատիկա ճիշդ է հասարակ մարդոց համար: Նուրհան Պարոյրը բարձր սկզբունքներու մարդն է:

ՕՀԱՆՃԱՆ.— Դուն ան ըսէ, թէ սա մտաւորական սէրը ո՞ր կը մտնէ, ո՞ր կ'անցնի... բարձր մարդուն մէջ: Ան Նուրհան Պարոյրը մա՞րդ է, թէ ոչ: Ըզնաւոր է: Փարիզ կ'ապրի մարդը... Սողոմ Դոմոքի բնակիչ է...: (Շատ քնքարաւոր): Բարոյ-խերով զար ու կորսուէր-երթար, ժամ առաջ:

ԲՐԼԱՆԹԻ.— Վաղը հոս է ու պիտի մնայ երկու շաբաթ: Եթէ յարմար դատեմ, պիտի խնդրեմ, որ ամիս մը մնայ...

ՕՀԱՆՃԱՆ (նստի ցատկով).— Ա՛, բաւական է...: Ատիկա՝ ո՛չ եւ ո՛չ: Ատ ըսածդ՝ բնաւ երբեք: Անկարելի է: Կ'արդիւնէ: Օճիքէն բռնած՝ դուրս կը շարժուի: Երկու շաբաթը շատ է արդէն: Կը բաւէ, որ տասնըչորս օր ամէն ժամ հաւկիթ պիտի ածեմ...

ԲՐԼԱՆԹԻ (ժպտելով).— Հաւկիթ պիտի ածես. ինչպէ՞ս յայտնի է աքլոր չըլլալդ:

ՕՀԱՆՃԱՆ.— Կրակէ հաւկիթ պիտի ածեմ, ու՛րմբ, եւ աս հաւկիթներէն ծընածնեմը աքլոր պիտի ըլլան: Օհանճանն է ըսողը:

ԲՐԼԱՆԹԻ.— Ատ հոտած հաւկիթներով պիտի քարկոծեմ քեզ...

ՕՀԱՆՃԱՆ (կնոջը մօտեցաւ).— Զգուշացիր, Բրլանթի, զգուշացիր կ'ըսեմ: Զըլլայ որ ամիս մը վար դնես: Այսօր: Օհանճանն է ըսողը:

ԲՐԼԱՆԹԻ (նոյնպէս կանգնելով).— Եթէ պէտք ըլլայ երկու ամիս ալ վար կը դնեմ...

ՕՀԱՆՃԱՆ (երթալ-գալով ու յարձակումի մեղով կնոջ վրայ երթալով).— Վա՛ր կը դնես... վա՛ր կը դնես: Ե՛ս վար կը դնեմ անիկա, շատ վար տեղ մը կը դնեմ: Գերեզման կը դնեմ: Դուն անիկա վար պիտի դնես, ինծի ալ վեր պիտի դնես, բարձր դարակի մը վրայ:

ԲՐԼԱՆԹԻ.— Առայժմ երկու շաբաթ ազատ եմ գինջը հիւրասիրելու:

ՕՀԱՆՃԱՆ.— Զգուշացիր ըսի: Հիւրասիրել...: Հիւրասիրել...: Աստուած վըկայ, այս խնդիրէն սճիր պիտի ելլէ...

ԲՐԼԱՆԹԻ.— Ոճրադո՞րծ՝ դո՞ւն...: Ին՞չքճ անճաջակ...: դուն վատ ես ու վախկոտ...

ՕՀԱՆՃԱՆ — Ձափու ճանչցիր: Արիւնը դուքս թի՛ հաներ...

ԲՐԼԱՆԹԻ — Մի՛ վախնար, քու արիւնդ ստամբսէդ վեր ելլելու չափ ուս՝
չունի: Կը բաւէ այս վարնոց վիճաբանութիւնը: Ես ահագին զորքեր
ունիմ: Երթամ ու զլիարկս փորձեմ...

ՕՀԱՆՃԱՆ (կեղծ գացած պահուի, կակուղցած) — Բրլանթի...

ԲՐԼԱՆԹԻ — Ի՞նչ է, ի՞նչ կայ նորէն...

ՕՀԱՆՃԱՆ — Եկո՛ւր հաշտութիւնք:

ԲՐԼԱՆԹԻ — Հաշտութիւնը հոգիէն կը բխի ու մտքին մէջ խարխուլ կը նե-
տէ: Ո՞ր է քու հոգիդ եւ ո՞ր է քու միտքդ...

ՕՀԱՆՃԱՆ — Ո՞րք են... Հեռու տեղ չեն. հոգիս պանքային մէջն է, միտքս
ալ՝ ապրանքներու վրայ: Բայց մարմինս հո՛ւ է: Եկու՛ր՝ նախ մար-
մինով հաշտութիւնք...: Այսինքն՝ համբուրութիւնք:

ԲՐԼԱՆԹԻ — Քեզի շարաքներ առաջ ըսի, որ համբուրուելու համար՝ պայ-
մաններ ունիմ:

ՕՀԱՆՃԱՆ — Բայց չներկայացուցիր պայմաններուդ կարաւանը...

ԲՐԼԱՆԹԻ — Մէկ քանի պայմաններ են, որոնք լրացնելու են...

ՕՀԱՆՃԱՆ — Կը փափաքեմ գիտնալ պայմաններդ:

ԲՐԼԱՆԹԻ — Լա՛ւ: Առաջին...

ՕՀԱՆՃԱՆ — Վայրկեան մը: Կարելոր բաները գրելու է, երբ մա՛նաւանդ կա-
րելոր բաները բաղմամբիւ են ու ու բանաստեղծական: (Թուղք ալ մա-
տիտ կ'առնէ): Այո՛, առաջին...

ԲՐԼԱՆԹԻ — Պէտք չէ խմես:

ՕՀԱՆՃԱՆ (զրել ձեռքներով) — Գինին չըթունքներէդ կը խմեմ: Խնայողա-
կան խման մը կ'ըլլամ: Բայց դիտցիր, որ ես օրական երկու լիթրա գինի
կը կռնեմ:

ԲՐԼԱՆԹԻ — Պէտք չէ ծխես:

ՕՀԱՆՃԱՆ — Երկրորդ՝ պէտք չէ ծխեմ (միշտ զրել ձեռքներով): Բայց ես
ծխամուլ եմ: Լա՛ւ, համբոյր կը խմեմ ու համբոյր կը ծխեմ:

ԲՐԼԱՆԹԻ — Երրորդ՝ պէտք չէ ուտես սոխ ու սխտոր, եւ ապուխտ ու եր-
շիկ, ինչպէ՛ս նաեւ անոնց նման զարչահոտ ուտելիքներ:

ՕՀԱՆՃԱՆ — Ռէժիմը խիստ է, տքթորուհի:

ԲՐԼԱՆԹԻ — Չորրորդ՝ պէտք է օրական երկու անգամ անգամ պէտք
է երկնայ: Անտառդ վերածելու ես լերկ դետիին:

ՕՀԱՆՃԱՆ — Այդ մէկը առողջապահական պայման չէ: Անտառը օդ կը մաք-
րէ: Բայց լաւ, գրեցի:

ԲՐԼԱՆԹԻ — Հինգերորդ...

ՕՀԱՆՃԱՆ — Դեռ կա՞ն...

ԲՐԼԱՆԹԻ — Անշուշտ: Հինգերորդ՝ ակաւաներդ օրական երկու անգամ պէտք
է մաքրես, ու բերանդ ալ օրական երեք անգամ լուսա:

ՕՀԱՆՃԱՆ — Պայմանդ կ'ընդունիմ, պայմանաւ որ դուն ալ առան անգամ
լեզուդ լուսա:

ԲՐԼԱՆԹԻ — Իմ լեզուս անաղարտ է, անզգամ:

ՕՀԱՆՃԱՆ — Ի բերանոյ քու մէջ հաստատեցիր... ըսածս. վեցերորդը ըսի՛:

ԲՐԼԱՆԹԻ — Վեցերորդ՝ պէտք է չարաթը գէթ անգամ մը բազմիք երթաս:

ՕՀԱՆՃԱՆ — Աս մէկը առողջապահական է: Եօթներորդը...

ԲՐԼԱՆԹԻ — Նպարազմաճառատանդ մէջ հազած զգեստներդ ու ճերմակեղէն-
ներդ փոխած ըլլաա:

ՕՀԱՆՃԱՆ — Ծարունակէ՛, նայինք պայմաններուդ պոչը մինչեւ Պաղատա
կ'երկարի՞...

ԲՐԼԱՆԹԻ.— Ութերորդ՝ պէտք է շարաթ մը հետս շատ քաղցր վարուած ըլլաս :

ՕՀԱՆՃԱՆ.— Ինչերորդ... :

ԲՐԼԱՆԹԻ.— Պէտք է քիչ մը զարդանաս, որ ինծի իրաւունք տաս :

ՕՀԱՆՃԱՆ.— Մարդիկ կը զարդանան՝ իրաւունք ունենալու համար, իսկ ես զարդանալու եմ՝ իրաւունք տալու համար... է՛, տասներորդ... :

ԲՐԼԱՆԹԻ (խիստ).— Պէտք է դառնուիլ պէս հեղ ու հնազանդ ըլլաս :

ՕՀԱՆՃԱՆ.— Գոհ չե՞ս ըլլար, եթէ դառնուիլ տեղ, ճազար ըլլամ ու վազեմ հեռանամ, դոնէ քանի մը շարաթ... :

ԲՐԼԱՆԹԻ.— Տասներմէկերորդ... :

ՕՀԱՆՃԱՆ.— Ի՞նչ, դեռ կա՞յ... : Ատիկա տասներանկայ պատուիրանէն ալ դժուար է գործադրելը : Նոր աստուածուն՛ի՛ մըն ես, ի՛նչ ես... :

ԲՐԼԱՆԹԻ.— Ըսի՛ տասներմէկերորդ :

ՕՀԱՆՃԱՆ.— Ես ալ կ'ըսեմ՝ զէրոյերորդ... : Աս ըսողը Յաննանն է :

ԲՐԼԱՆԹԻ (շատ խիստ).— Տասներմէկերորդ՝ պէտք է բարձրօրէն գնահատես զիս եւ թողուս, որ ազատօրէն, լայնօրէն ծախսեմ :

ՕՀԱՆՃԱՆ.— Եւ այս բոլորը համբոյրի՞ համար : Ատիկա համբոյր չէ, լախտի հարուած մըն է, որ կը կործանէ զիս :

ԲՐԼԱՆԹԻ.— Տասներկուերորդ՝ պէտք է հոգիիդ մէջ բանաստեղծութիւն ունենաս, բերնիդ մէջ սիրերդ մը, աչքերուդ մէջ՝ նաւերդ մը ու օրորդ մէջ՝ ցայդերդ մը : Պէտք է զիս քու միակ կուռքդ նկատես եւ ինձմէ զատ ուրիշ կուռք չունենաս :

ՕՀԱՆՃԱՆ.— Այսինքն՝ կուսպաշտ ըլլամ : Աս բոլոր ըսածներդ եթէ ըլլամ եւ ունենամ, ես քեզ ինչո՞ւ պիտի համբուրեմ, աշխարհի բոլոր կիները կու գան եւ զիս կը համբուրեն :

ԲՐԼԱՆԹԻ.— Ինծի հետ համբուրուիլը հանդիսական արարողութիւն մըն է :

ՕՀԱՆՃԱՆ.— Այդ հաշուով՝ մէկ տարի պատրաստութիւն տեսնելու է, ամէն գործ մէկ կողմ ձգած, քեզի կէս վայրկեան համբուրելու համար : Հապա ո՞ր մնաց իմ ամուսինի իրաւունքը... :

ԲՐԼԱՆԹԻ.— Ինծի պէս կիս մը համբուրելու համար՝ անհրաժեշտ է ընել զոհողութիւններ : Պէտք է գիտնաս սրբուիլ, օծուիլ, բարեփոխուիլ, զարգանալ, կըթուիլ ու թռչի՛լ, թռչի՛լ... :

ՕՀԱՆՃԱՆ.— Ես թռչիմ ու հեռանամ, որպէսզի Նուրհան Պարոյրը մօտենայ քեզի :

ԲՐԼԱՆԹԻ.— Նուրհան Պարոյրը սոխակ մըն է, որ թառած է հողիին Կուրբ լարերուն վրայ :

ՕՀԱՆՃԱՆ.— Ան սոխակ է, դուն ալ վարդ ես, այսինքն՝ ծաղիկ :

ԲՐԼԱՆԹԻ.— Ան սոխակ է, իսկ դուն սոխ ես : (Կ'իլլէ ձախակողմէն) :

ՆՇԱՆ ՊԵՇԵԿԻՍՅԱՆԻԵԱՆ

(Շար. 1)

Ծ Ո Վ Ի Հ Ե Տ

Ա Ղ Օ Թ Ք

Փա՛ռք Գեղ, Ով Տէր ամենակալ,
Օ՛, փա՛ռք, փա՛ռք Գեղ,
Տուածներիդ համար անբաւ,
Եւ մա՛նաւանդ՝

Զտուածիդ —
Փառքի, զանճի ու նախանճի:

Շնորհապարտ եմ աւելի՛
Յետ առածիդ համար մէկ-մէկ —
Վախի անդէմ, տարակոյսի ու կասկածի,
Եւ հագուս մէջ քո թռչածի —
Սիրոյ, յոյսի եւ արօսքի
Եւ սրբազան երի համար, —
Շնորհապարտ եմ, Տէ՛ր, շնորհապարտ:

Ուշացել եմ այս անգամ,
Ուշացել եմ, ներք ինձ:
Արեւիդ քէժ մտքակիւն,
Հեւքիւն կրծքիդ անհամգիտս՝
Կարօտել եմ ես կրկին:

Բրանդախալ ճայադիդ
Հավիւն տուած շէկ մազիւն,
Խոյանքններիդ յովազիւն,
Տաք տաւազիւն քո կրքաւ,
Կարօտել եմ ես կրկին:

Մակընքացիդ ու լացիդ,
Թացին աչքերիդ կանաչ,
Քո անհունիւն, քո հունիւն
Կարօտել եմ ես կրկին:

Ուշացել եմ այս անգամ,
Ուշացել եմ, ներք ինձ:
Եկել եմ ես քէեւ ուշ,
Ոչ մի մշուշ չեմ բերել
Քաղաքներից սրբապիղծ:

Սիրտս սիրոյ մի մակայի՛
Նետում եմ գիրկդ վարար,
Ու յանձնում եմ իմ հագիւն
Քո մոռնչիւն առնածիւն
Ու քրտնիւն քո սրդաք:

Զերք զաւակն այն անառակ՝
Առ ինձ գիրկը քո ճարից,—
Ուշացել եմ այս անգամ,
Ուշացել եմ, ներք ինձ:

ԱՐՄԱՆՏ

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԷՐՆԵՍԹ

ՀԵՄԻՆԿՈՒԷՅ



Անցեալ տարի ծննդեան 85ամեակն էր ամերիկացի աշխարհահռչակ պատմը-լածագիր-վիպագիր Էրնեսթ Հեմինկուէ-յի:

Հեմինկուէյի անունը մեր Հանրա-թեան շատ բան կրնայ շքեղ աշխարհ կամ առնուազն ան չէ՝ ինչ որ էր քսան կամ երեսուն տարի առաջ:

1954ին՝ ան կ'արժանանար Նոպէլեան գրական մրցանակին: Տարի մը ետք, «Ա-կոս» ամսագրի մէջ, Տիգրան Ոսկունի կը թարգմանէր «Քլիմանուրայի» ծիւնընդմեջը՝ վիպակը: Հետագայ տարիներէն՝ նոյն գործը կը հրատարակուէր Հայրենիքի մէջ նաեւ, 1966ին, թարգմանութեամբ արժա-կազիր Պերճ Զէյթունցեանի: Այնտեղ կը հրատարակուէին նաեւ «Տօն», որը միշտ մեզ հետ է՝ ինքնակենսագրական վէպը (1966ին), ինչպէս եւ «Մերումին» եւ ծա-վը՝ Հանրածանօթ վիպակը (1957ին, սա-կայն ոչ առանձին Հատորով, այլ «Սովն-տական գրականութիւն» ամսագրին մէջ): Այդ օրերուն եւ այդ օրերէն առգին քիչ չեն հղած Հեմինկուէյի պատմածքնե-րուն ու վէպերուն հրատարակութիւնները Հայրենիքի թէ՛ Սփիւռքի մէջ, որովհետեւ

իւրաքանչիւր սերունդ, մասնաւորաբար իւրաքանչիւր գրական սերունդ, փորձած է իր Հեմինկուէյը ներկայացնել Հանրա-թեան: Տակաւին 1983ին, «Գարուն» ամ-սագիրը քանի մը պատմածք կը թարգ-մանէր իր Յուլիսի Համարով...

Սակայն մինչ Հեմինկուէյ լայն Համբաւ կը տիրանար Հայրենիքէն դուրս, Միացեալ Նահանգներու մէջ սուր բանա-վէճ կը ստեղծուէր իր վաստակին շուրջ: Նոյնիսկ Նոպէլեան մրցանակը ստացած միջոցին, ամերիկացի քննադատներու խումբ մը կը յարձակէր վրան, եւ արտա-քին աշխարհին մէջ այնքան Հետեւորդ-ներ ունեցող ու Հիացողներ Հաշուող ոճին կամ գրելաձեւին Համար ըսելով, որ այդ ոչ թէ ոճ մըն էր, այլ ոճի տպաւո-րութիւն կը ձգէր...

Հեմինկուէյի գրականութեան առնու-չութեամբ հղած քննադատութիւնները գլխաւորաբար կ'ուղղուէին անոր Հերոս-ներուն «սահմանափակութեան», Յլա-մարտիկներէ, ձկնորսներէ եւ բռնց-քամարտիկներէ կազմուած կարծիք ու առանձին մարդոց աշխարհ մը, ուր կար-

ծէջ հերոսներուն հետաքրքրութիւններու կամ նոյնիսկ մշակութային աշխարհը տաճանափակ է... Սակայն կայ նաեւ հարցին միւս երեսը, քանդուող արծէք-ներու աշխարհի մը մէջ կը գտնենք հերոսի ընդհանրական տիպար մը, որ կանգնած է իր ճակատագրին կամ դոյութեան կան կացութեան դիմաց: Վիճակ մը, որ շարունակ կը հարցադրուի եւ կը խորացնի: Կացութիւն մը, ուր մահը ամէնուր է եւ յաճախ անխուսափելի: Վրաս համար կը ինչ զանազան մէջ մահը կը խլէ ճորտընը, «Մնաք բարով գեղերում» մէջ՝ Քեթլըին Պարզլին, իսկ «Քլիմաֆարայի ժիւնթոն» մէջ՝ վիպասանը: Մահը կարծէք այն ցույն է, որ ամէն բոլորէ կանգնած է Հեմինկուէյի ցլամարտիկներուն աչքերուն դիմաց:

Սակայն, բոլոր պարագաներուն մէջ ալ, Հեմինկուէյի հերոսը առանձին ու արժանապատուութեամբ կը պայքարի իր կացութեան անհաղորդ եւ իրեն հանդէպ անարբեր շրջակայի մը մէջ: Օրինակ, «Գորուկն» եւ ծովը՝ վիպակին վերջաւորութեան՝ զրօսաշրջիկները պիտի դիտեն շոտլանդի կմախքը եւ նկատողութիւններ կատարեն անոր պոչին կապակցութեամբ, մինչ ծերունին պիտի քննայ իր խրճիթին մէջ եւ երազէ առեւծներու մասին: Այսինքն՝ զրօսաշրջիկներուն կամ շրջակային համար ոչինչ կ'ընէ ծերունի Սանթիակոյի տարած կատաղի պայքարը:

Սակայն հակառակ այս իրողութեան, Սանթիակոնը արժանապատուութեամբ պիտի տանին իրենց պայքարը, նոյնիսկ եթէ դիտակցին, որ իրենց ճիշդ դատաւարտուած է: Կամ՝ Մանուէլի նման ցըլամարտիկներ, հակառակ իրենց կոտորած դատաւարին, կրկին ու կրկին պիտի իջնեն կրկէս՝ դիմադրուելու համար ցուրով մարմնաւորուած մահը: Անշուշտ այստեղ ինքզինք փաստելու, արժեւորելու որոշ շարժառիթներ կան, «տղամարդկութիւնը» կամ քաջութիւնը ցուցադրելու երեւոյթներ, որոնք կրնան սխալ հասկըցւել, եթէ չդիտուին Հեմինկուէյեան տիպարներու ընդհանուր հոգեվիճակին մէջ:

Այս ժառանգութեան մէջ այլ յատկանշական երեսը կը կայանայ գործողութիւններու եւ արաքներու թելադրակա-

նութեան մէջ, որ կը ներկայացուի ժողովրդութեամբ, առանց զգացական դեղումներու եւ, երբեմն, նոյնիսկ առանց նրկատողութեան կամ մեկնաբանութեան: Օրինակ, Նիք Ատամդի անունին հետ կապւած պատմութեան շարքէն՝ «Հնգկա» կամ կալանքին մէջ, Նիք իր բժիշկ հօր կ'ընկերանայ, հնգիկ կնոջ մը ծննդաբերութեան համար: Հայրը կը ստիպուի առանց թմրեցոյցի անգարեան շորձողութիւն մը կատարել: Քիչ մը անդին երկարած կնկան հաշմանդամ ամուսինը, անկարող ըլլալով կնկան տառապանքին դիմանալու, լուռ անձնասպան կ'ըլլայ՝ ըզմէլով ինքն իր վիրը ծեղկելով...

Հեմինկուէյ, շատ յաճախ, Նիք Ատամդի պէս դիտող աղան է: Երբեմն կը մոռնանք իր գոյութիւնը, որովհետեւ որեւէ մեկնաբանութեան կարօտ չի զգար, սակայն չենք կրնար շտեմել նաեւ անձնատապանութիւն գործած հնգիկ ամուսինին պէս իր լուռ տառապանքը:

1918ին Իտալիա դառնալով եւ Կարմիր Ուշի շտապ օգնութեան կառքը վարած ատեն վերաւորուած Հեմինկուէյը, որ ընկանիոյ քաղաքացիական կռիւներու ընթացքին (1936-1937) իր տեսակէտին հաշտ կողմին թեզերը կը պաշտպանէ, ապա Համաշխարհային Երկրորդ պատերազմին (1942-45) եւրոպական ճակատի պատերազմական գործողութիւններուն կը հետեւի՝ հաւանաբար լաւագոյն վկաներէն մէկն է Համաշխարհային երկու պատերազմներուն միջեւ ինկող ժամանակաշրջանի անցուցարձերուն: Ամերիկեան իր փորձառութիւններուն խառնուած տըլեայ փորձառութիւնները հետաքրքրական ու այլապէս աշխարհ մը կը բերեն, որ ընդունած է այսօր:

Ինչ կը վերաբերի Հեմինկուէյի դրականութեան թարգմանութեան՝ այդ մէկը միայն արտաքինապէս դիւրին կրնայ թուիլ եւ, նոյն պատճառով ալ, քաղմաթիւ թիւրիմացութիւններ ստեղծել, մասնաւորաբար երբ կը թարգմանուի երկրորդ լեզուէ մը (Ֆրանսերէնէ կամ ռուսերէնէ): Պարզ է, որ երկրորդ լեզուէ մը կատարուած թարգմանութիւնը, ինքնին, «կորուցեալ» կերպով սխալ է — բաղմաթիւ նըրբութիւններ կը կորսուին եւ սխալներ,

շատ յաճախ, գլուխ կը ցցեն: Իսկ Հեմինկուէյի պարագային՝ գծուարութիւնը կը կայանայ անոր լեզուի գործածման եղանակին մէջ: Ինչպէս Հեմինկուէյի գրաքննադատներէն Հերի Լեւի մանրամասնօրէն կը քննարկէ եւ ցոյց կու տայ, Հեմինկուէյի լեզուին մէջ պատահական կամ նոյնիսկ սխալ թուացող տարրերը յատուկ կանխամտածման ու ծրագրումի արդիւնք են: Իսկ քիչ չեն անոնք՝ որոնք թարգմանութեան տանն... կը արագորեն Հեմինկուէյը:

«Միտուր, լաւ լուսաւորուած տեղ մը» պատմուածքը հաւանաբար Հեմինկուէյի բաւազոյն պատմուածքներէն մէկը կրնանք նկատել:

Այստեղ կը տեսնենք, որ արտաքինապէս իրարու հետ աղերս չունեցող երեւոյթներ կամ գէպքեր ինչպէս կը միամուլուին: Այս կեանքով, անձկութեամբ ու մահուամբ յատկանշուող մթնոլորտին մէջ է, որ տեղ մը կը «հանգիստին» անձնասպանութիւն փորձած ծերունին, աղջկան մը ընկերակցութեամբ առանձին անկիւն մը փնտռող գինուորը, որ պարտականութեան վրայ չգտնուելուն համար որեւէ պահու կրնայ ձերբակալուիլ, ինչպէս եւ երկու սպասեակները: Հաւանաբար Հեմինկուէյի հմտութիւնը կը գտնուի հոն՝ ուր քանի մը կարճ փոխառացութիւններու

ընթացքին կը յաջողի ամբողջովին երկու տարբեր տիպարներ պատկերացնել:

Նոյն ատեն, կարծէք կը զգանք, որ հեղինակին ներկայացուցածը իրականութիւն մըն է, ուր տեւական կամ կայուն ոչինչ կայ: Երբ երէց սպասեակը այնքա՛ն ինքնավստահ երիտասարդ սպասեակին կատակով կը հարցնէ, թէ չի՞ վախնար կանոն տուն վերադառնալէ, այսինքն՝ կանոն վերադառնալով կինը անհաստատութեան մէջ գտնելէ՝ կը զգանք, որ նոյնիսկ երիտասարդին ինքնավստահութիւնն ու երջանկութիւնը որքան գիւրդին կրնայ կործանիլ...

Այսպէս, ամէն ինչ կը կորսուի անըստուգութեան քողի մը տակ: Եւ երբ պատմուածքի աւարտին կը «պայթի» անքրնութենէ տառապող երէց սպասեակին նստաներով կամ ոչինչներով լեցուն ճշայն մերձը՝ կ'ազուցուին բոլոր թելերը եւ կը հասկնանք ատանձնութենէ տառապող այս մարդոց պահանջը՝ մաքուր ու լուսաւոր անկիւն մը գտնելու, կամ՝ գիւշերը տուն յաճապարելու... Ամբողջ ողբերգութիւն մըն է, որ կը զարգանայ չըրջապատի անգիտութեան ու անտարբերութեան մէջ, իսկ իրեն յատուկ սեւ ելուծութիւն մը Հեմինկուէյ սպասեակին բերնով կրնայ ըսել, որ այս բոլորը անքնութենէ տառապելու հարց մըն է եւ, հաւանաբար, շատեր կը տառապին անկէ...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՆՆԵ

Է. Հ Ե Մ Ի Ն Կ Ո Ւ Է Յ

Մ Ա Ք Ո Ւ Ր,

Լ Ա Ւ Լ Ա Ռ՝Մ Ա Ւ Ո Ր Ո Ւ Ա Ծ Տ Ե Ղ Մ Ե

Ուշ էր եւ ամէն մարդ ձգած էր սրճարանը, բացի ծերունիէ մը, որ նըստած էր տերեւներու շուքին, որ զոյացած էր ծառին վրայ ելեկտրական լուսի ցոլացումէն։ Ծերեկը ճամբան փոշոտ էր, սակայն գիշերը՝ ցօղը կը հանգչեցնէր փողին եւ ծերունին կը սիրէր ուշ մնալ, որովհետեւ ան խուլ էր եւ հիմա, գիշերով, ամէն ինչ հանդարտ էր եւ ան կը զգար տարբերութիւնը։ Սրճարանին երկու սպասեակները գիտէին, որ ծերունին քիչ մը գինով էր, մինչ ան լաւ յաճախորդ էր. անոնք գիտէին նաեւ, որ եթէ շատ լսմած ըլլար, ան կը մեկնէր առանց վճարելու, այնպէս որ՝ կը հսկէին անոր վրայ։

— Անցեալ շաբաթ փորձեց անձնապահ ըլլալ, — ըսաւ սպասեակներէն մէկը։

— Ինչո՞ւ։

— Յուսահատ էր։

— Ի՞նչ պատճառաւ։

— Ոչ մէկ։

— Ինչո՞ւ կը կարծես, թէ՛ ոչ մէկ։

— Ծառ գրած ունի։

Միասին նստած էին սեղանի մը շուրջ, որ գրեթէ փակած էր դրան մօտ գտնուող պատին, որ կը նայէր դարպասին, ուր բոլոր սեղանները պարպէին, բացի այն մէկէն, ուր ծերունին նստած էր, ծառի տերեւներու շուքին, որ թիթեւօրէն կը շարժէր հովէն։ Աղջիկ մը եւ գինուոր մը անցան փողոցէն։ Ծամբու լուսը ցոլաց գինուորի օձիքին արոյրէ թուանշանին վրայ։ Աղջկան գլուխը չէր ծածկուած եւ ան կ'աճապարէր տղուն կողքին։

— Պահակները պիտի ձերբակալեն գինուորը, — ըսաւ սպասեակներէն մէկը։

— Ի՞նչ տարբերութիւն կ'ընէ, եթէ յաջողի իրականացնել այն՝ որ կը հետապնդէ։

— Աւելի լաւ կ'ընէ, եթէ փողոցէն հեռանայ։ Պահակները պիտի բռնեն գինը։ Անոնք հինգ վայրկեան առաջ անցան։

— Ծուքին նստած ծերունին դաւաթը դարկաւ սկոհակալին։ Աւելի երիտասարդ սպասեակը իր մօտ գնաց։

— Ի՞նչ կ'ուզես։

Ծերունին նայեցաւ անոր։

— Պրանաի մը հետ, — ըսաւ։

— Պիտի գինովնաս, — ըսաւ սպասեակը։

Ծերունին նայեցաւ անոր, Սպասեակը հեռացաւ:

— Աժրողը գիշերը պիտի մնայ, — ըսաւ ընկերոջ, անքուն եմ հիմա: Ժամը երեքէն առաջ անկողին չեմ մտներ: Անցեալ շաբաթ պէտք էր ինքզինք սպաննէր:

Սպասեակը վեր, ուց պրանսիի շինք եւ ալ սկսեցաւ մը որճարանի ներքնամասէն, ապա քայլեց գէպի Ծերունիին սեղանը: Սկսեցաւ զրաւ եւ պրանտին լեցուց դաւաթին մէջ:

— Անցեալ շաբաթ ինքզինքդ պէտք է սպաննէիր, — ըսաւ խուլ մարդուն: Ծերունին նշան ըրաւ մատով: — Քիչ մը եւս, — ըսաւ: Սպասեակը շարունակեց լեցնել դաւաթին մէջ, մինչեւ որ պրանտին յորդեցաւ եւ դաւաթի առաջամասէն օսեցաւ սկսեցաւ սկսեցաւ մէջ: — Ենթահակալ եմ, — ըսաւ Ծերունին:

— Սպասեակը շինք վերստին տարաւ ներս եւ կրկին նստեցաւ ընկերոջ կողքին:

— Հիմա գինով է, — ըսաւ:

— Ամէն գիշեր գինով է:

— Ինչո՞ւ համար ուզեց ինքզինք սպաննել:

— Ինչպէ՞ս կրնամ գիտնալ:

— Ի՞նչ ձեռով փորձած է:

— Պարանով ինքզինքը կտրած:

— Ո՞ր ինքզինքդ է գիտնալ:

— Չարժուհին:

— Եւ ինչո՞ւ:

— Վախալով անոր հոգիին համար:

— Որքան դրամ ունի:

— Ետ:

— Պէտք է ութսուն տարեկան մը ըլլայ:

— Ինչեւէ, պէտք է ըսել, որ ութսունը անցած է:

— Ետեւս տուն կ'երթայ: Ժամը երեքէն առաջ անկողին չեմ մտներ:

Այս ի՞նչ տեսակ քննալու ժամ է:

— Ան ուշ կը մնայ, որովհետեւ ատկէ կ'ախորժի:

— Ան առանձին է: Ինչ առանձին չեմ: Անկողինին մէջ ինձի սպասող կին մը ունիմ:

— Անգիտին ինք եւս կին ունեցած է:

— Իր պարագային՝ կինը ալլելս բան չ'ըսեր:

— Ձեռ գիտեր: Կրնայ աւելի լաւ ըլլալ կնոջ մը ընկերակցութեամբ:

— Չարժուհին կը հոգայ վրան:

— Գիտեմ, բայց որ ան կտրած է պարանը:

— Ձեմ ուզեր ծեռ բոլալ: Աղտոտ բան է ծեր ըլլալ:

— Ո՞ր միշտ: Այս Ծերունին մաքուր է: Կը խմէ առանց Թափելու. նոյն-իսկ ներկայիս, երբ գինով է: Նայէ իրեն:

— Ձեմ ուզեր նայիլ: Կ'ուզեմ, որ տուն երթայ: Երբեք նկատի չ'ունենար անոնք՝ որոնք պէտք է աշխատին:

Ծերունին աննարկը դաւաթէն վերցնելով յառեց հրապարակ, ապա՝ սպասեակներուն վրայ:

— Գրանտի մը եւս, — ըսաւ, մատնանշելով դաւաթը: Մօտեցաւ ան-պարող սպասեակը:

— Վերջացած, — ըսաւ, խօսելով շարադասութեան անտեսութեամբ, որ ապուշ մարդիկ կը կերարկեն, երբ կը խօսին գիտնալներու կամ օտարաճաննե-րու հետ: — Ո՞չ այս գիշեր: Հիմա դոց:

— Հատ մը եւս, — ըսաւ խերունին։
 — Ո՛ւ, վերջացա՛ւ, — սպասեակը սեղանին ծայրը արեւոյ անձեռոցով
 մը եւ շարժեց գլուխը։
 Մերունին կանդնեցաւ, գտնուազօրէն հալուեց սկահակալները, գրպանէն
 կաշիէ դրամագանակ մը հանեց եւ վհարեց խմբէքին համար՝ կէս փնտքեաց
 մը ձեռնածիր ձգելով։
 Սպասեակը դիտեց անոր քալուածքը փողոցն ի վար — շատ ծեր մարդ
 մը՝ անկայուն, բայց արժանապատուութեամբ լի շարժումներով։
 — Ինչո՞ւ չձգեցիր, որ մնայ եւ խմէ, — չաճապարող սպասեակը ըսաւ։
 Անոնք կը գոցէին փեղկերը։ — Ժամը երկուքուկէս չէ տակաւին։
 — Կ'ուզեմ տուն երթալ, անկողին։
 — Յաւելեալ ժամ մը ի՞նչ իմաստ ունի։
 — Աւելի արժէք ունի ինծի համար, քան իրեն։
 — Ժամ մը՝ նոյն բանն է։
 — Մերուկին պէս կը խօսիս։ Ան կրնայ չիլ մը գնել եւ տունը խմել։
 — Նոյնը չէ։
 — Ո՛ւ, նոյնը չէ, — համաձայնեցաւ ամուսնացած սպասեակը։ Ձեր
 փղզիք անարդար ըլլաւ։ Պարզապէս կ'անապարհէր։
 — Իսկ դո՞ւն, չե՞ս վախճար տուն հասնելէ քու սովորական ժամիդ
 առաջ։
 — Կը փորձես վերաւորե՞լ զիս։
 — Ո՛ւ, հոստը(1), պարզապէս կը կատակէի։
 — Ո՛ւ, — ըսաւ անապարող սպասեակը՝ մեղադրելով փեղկերը վար առնե-
 լու գործողութիւնը աւարտելով։ — Ես վստահութիւն ունիմ։ Ամբողջական
 վստահութիւն եմ։
 — Դուն երիտասարդութիւն ունիս, ինքնավստահութիւն եւ գործ, —
 ըսաւ երէց սպասեակը։ — Դուն ամէն ինչ ունիս։
 — Եւ ի՞նչ կը պակսի քեզի։
 — Ամէն ինչ, բացի այնտանքէ։
 — Ունիս այն ամէնը՝ որ ես ունիմ։
 — Ո՛ւ, ես երբեք ինքնավստահ չեմ եղած եւ երիտասարդ չեմ։
 — Քույ՛ր, կը բաւէ անխառն բաներ ըսես, եւ կ'զլի։
 — Ես աննշմէ եմ, որոնք կը սիրեն մինչեւ ուշ տանն արձարան մտալ,
 — ըսաւ երէց սպասեակը։ — Անոնց հետ եմ, որոնք չեն ուզեր անկողին եր-
 թալ։ Այն բոլորին հետ, որոնք գիշերը պէտք ունին յոյսի մը։
 — Ես կ'ուզեմ տուն հասնիլ, անկողին երթալ։
 — Մենք երկու տարբեր մարդիկ ենք, — ըսաւ երէց սպասեակը։ Ան
 հիմա հաղած էր՝ տուն երթալու համար։ — Միայն երիտասարդութեան եւ
 ինքնավստահութեան հարց չէ, հակառակ անոր, որ անոնք գեղեցիկ բաներ
 են։ Ամէն գիշեր կը դժուարանամ արձարանը փակել, որովհետեւ կրնայ դու-
 նելի մէկը, որ անոր կարիքը զգայ։
 — Հոմարէ, գինետուներ կան, որոնք ամբողջ գիշերը բաց են։
 — Դուն չես հասկնար։ Ասիկա մարդը եւ հաճելի արձարան մըն է, լաւ
 լուսաւորուած։ Լոյսը շատ լաւ է եւ, ներկայիս, տերիւններուն շուքը կայ։
 — Գիշեր քարի, — ըսաւ երիտասարդ սպասեակը։
 — Լոյս քարի, — ըսաւ միւսը եւ, մարելով ելեկարտկան լոյսը՝ շու-

1— Հոմարէ — քղանկերէնով՝ մարտ, իրրեւ մոնրիմ տփտայապաւթիւմ կը գործածուի։

բունակեց խոսակցութիւնը ինքն իրեն հետ: Իսկանը լոյսն է անշուշտ, սա-
կայն անհրաժեշտ է, որ վայրը ըլլայ մաքուր ու հաճելի: Երաժշտութեան
պէտք չունի: Վստահաբար երաժշտութեան պէտք չունի, ոչ ալ կրնաս ար-
ժանապատուութիւնը կենալ պարին դիմաց, հակառակ անոր, որ այս ժամե-
րուն միայն անոնք արաժադրելի են: Ինչէ՞ն կը վախնար: Վախ կամ անհե-
կութիւն չէր: Ատիկա ոչինչ մըն էր, զոր ինք լաւ կը հասկնար: Այդ ամէնը
ոչինչ մըն էր, մարդը եւս ոչինչ մըն էր: Անհրաժեշտը լոյսն էր միայն, եւ
որոշ մաքրութիւն ու կարգուկանոն: Որոշ մարդիկ կ'աղբէին զայն եւ երբեք
չէին զգար, բայց ինք գիտէր, որ nada y pues nada y nada y pues nada(2): Նա-
տա մեր, որ նատայի մէջն եւ, նատա եղիցի նատա զո, նատա արձայութիւն
զո, եղիցի նատա զո, որպէս նատա եւ նատա, նատա մեր հանապազօր, նատա
մեր այսօր, արպէս եւ մէք նատա մերոց, նատա եւ մի տանիր պմեղ ի նատա,
այլ նատա ի նատա, զի զո է նատա եւ նատա: Փառք ոչինչին, որ լի է ոչին-
չով, ոչինչ ընդ քեզ(3): Ան ժպտեցաւ եւ կանգ առաւ: Կառի մը դիմաց, որ
չողի ճնշումով բանոց սուրճի փայլուն մեքենայ մը ունէր:

— Ի՞նչ կ'ուզես, — ըսաւ պառի սպասեակը:

— Նատա:

— Ուրիշ խենթ մը, — ըսաւ պառի սպասեակը եւ ետ դարձաւ:

— Պատիկ դաւաթ մը, — ըսաւ սպասեակը:

— Պառի սպասեակը լեցուց զայն:

— Լոյսը շատ ուժգին է եւ հաճելի, սակայն պառը չի փաշտել: — Ը-
սաւ սպասեակը:

Պառի սպասեակը նայեցաւ իրեն, սակայն չպատասխանեց: Գիշերը շատ
առաջացած էր խոսակցութեան մը համար:

— Փոքր դաւաթ մըն ալ կ'ուզե՞ս, — հարցուց պառի սպասեակը:

— Ոչ, չեմ հակադրութիւն, — ըսաւ սպասեակը եւ դուրս ելաւ: Ան
չէր սիրեր պառերն ու գինեատները: Մաքուր, լաւ լուսաւորուած սրճարան մը
ամբողջովին տարբեր բան էր: Հիմա, առանց երկար մտմտալու, պիտի եր-
թայ իր սեննակը: Պիտի երկարի անկողինին վրայ եւ, վերջապէս, ցերեկի
լոյսին հետ, պիտի քնանայ: Վերջիվերջոյ, ըսաւ ինքնիրեն, տաքիւս հաւա-
նաբար քնանալու դժուարութիւն է եւ շատեր կը տառապին անկէ:

Հայացուց՝ Յ. Պէրպլընյան

ԽՐԵՆՍԹ ՀԵՄԻՆԳՐԵՅ

2.- Նատա. — ոչինչ: Ամբողջութիւնը՝ սպանելէն ճախարհութիւն մը, որ կը ճա-
նակէ լոյսին սպա ոչինչ:

3.- Ոչինչներով կազմուած ճերմակաւ ազօրէն խոսք: Աստուծամօր ճախարհ
ճոյնովիս ազօր մը, որ սպանելին մտքին մէջ կ'ալտաւանդի:

Պ. Ս Ն Ա Պ Ե Ա Ն

Մ Ի Զ Ն Ա Ր Ա Ր - 4

170-20900

Ս.Սրբ իր բառերուն տարախին տակ զիս շնչահեղձ ըրած անծանօթը միացաւ որնարանէն ներս խուժած երիտասարդներուն, զորմայ ես ինծի ու սեղանին վրայ տարածեցի իմ տունիս համար գնած հողակտորիս քարտէսը: Փորձեցի կեդրոնանալ: Ի զուր: Անծանօթը այնքան հեռունները տարած ու վըր-դոված էր երեւակայութիւնս, որ գիծերուն թէ բաց մասերուն տուն, բակ, մուտք, պարտէզ ու ծաղիկներ բացուելէ աւելի՝ ուրիշ պատկերներ կ'ուրուտ-նային ու կը չբանային շարունակ, անապատ, փուշ, կիսամեռ մարդեր, յար-չարուած մանուկներ ու ձայներ անոնց հետ, ճիւղեր, արողակներ, ու մերթ ոտարաններ, ծործորներ ու դարձալից աղմուկներ, տենդայոյզ, յուսովառ: Անոնց հետ կը յառնէր հօրս զէժըր, իր որբութիւնը, իմ մինալուծեանս յուշը:

Մայեցի քարտէսը ու յոգնած աչքերս ուղղեցի դրան կողմը: Ինչո՞ւ արդեօք այսքան ուշացաւ Ատոմ: Եթէ միասին հասած ըլլայինք, անպայման ինքն ալ բան մը կ'ըսէր ու այցելուն այսքան չէր յոգնեցներ զիս: Ոտքի հլայ եւ ուղղուեցայ դէպի դարպաս: Պապ Իսորիսէն դէպի ծովափ հոսող ճամբուն վրայ մէկէն աչքս գպաւ իրեն, որ մանկամարդ աղջկան մը հետ յամրաքայլ կը յառաջանար, Երբ կանգ առին ծովափնեայ մայրուղիին միացնող կէտին՝ ճանչցայ աղջիկը ու հին դուռ նսրէն կրկնուեցաւ: Սեւ մաղբը կիսամերկ ուսերուն արձակած՝ Անիկա կը փողփողէր կարմրաւուն հագուստի մը մէջ՝ իր վրայ հաւաքելով անցորդներուն նայուածքները: Ինքնաշարժ մը զանդա-ղեցաւ անոնց մօտ: Ատոմ առաջանալու փորձ մը ըրաւ, իսկ Անիկա պէրտա-շարժումով մը վարձուեցաւ անոր ու գլուխը վեր առած պահուն ինծի թուե-ցաւ, թէ Տանթոնի Հրապարակին վրայ կը գտնուիմ ու կը կրկնուի այն պա-հը, երբ էութեանս մէջ մխրճուեցան նոր զոհարերութիւններ խոստացող Զել-լայի հրակէզ աչքերը:

Դարձայ սեղս:

Ատոմ մինակը մտաւ ներս: Դրաւ գիրքերը սեղանին ու քննական ափ-նարկ մը նետեց շուրջը: Տաւառը իր սիրած վայրն էր եւ առաջին անգամ հող հանդիպած էինք իրարու: Գլխու խոնարհումով բարեւեց անկիւնի սե-ղանէն իրեն նայող մարդ մը եւ մպտեցաւ սպասեակին: Սպասեակը փութաց մօտը, փութով հեռացաւ, վերադարձաւ ու հետը բերած աման մը ջուրը անձ-րեւեց մեր սեղանին շուրջը: Տախտակամածը նոր լուացուած էր ու այս ու այն անկիւնէն թափանցող ճառագայթներուն մէջէն իսկոյն ծաւալեցաւ բու-բուճաւէտ շողին: Լիաթոք շնչեցի օդը:

Ատոմ մենքը տարաւ գիրքերուն ու միասին թերթատեցինք բոլորը: Հայկական ճարտարապետութեան նուիրուած գեղեցիկ ալպոմներ էին, պատ-կերադարձ, տեղ-տեղ գունաւոր, երկլեզուեան: Մէկը՝ մեր տաճարներուն նուիրուած, Տաթևի, Սանահինի, Կեչարիսի, Գլաճորի ու Ախթամարի յա-

տակադիմներուն ու վերապրած մասերուն վերաբերութեան: Անոնցմէ որ մանց գիծերուն ու պարզ նկարներուն հանդիպած էի թերթերու մէջ, բայց երբեք չեմ յիշեր, որ անոնք այսքան յախուռն վայելքներ յուզած ըլլան մէջս:

— Նայէ՛, նայէ՛, — կը բացազանչէր Ասոմ, — կարծես մարդու ձեռքով շինուած չեն, այլ նախախնամութիւնը իրեն լրացուցիչ տարր դրած է զանոնք մեր շիններուն վրայ, սարալանջերուն, ծառերուն քով, ծառերուն տակ, կանաչ, կարմիր, գեղին դաշնաւորութի մը մէջ:

Աչքերս սեւեռուած մնացին սիւներէն մէկուն դալարուած ու զմբէթին հետ միջոցին մէջ արձակուած գեղուղէշ ծառի մը վրայ ու կարծես նոր շքեղ շառուիթի մը զգացի թոքերուս:

— Սիրեցի՞ր:

— Հիացայ, — ըսի:

— Հրաշքները մեր երկրին: Տես ի՞նչ յամառ ու ինքնավստահ բան մը կայ իւրաքանչիւրին մէջ: Ամէն անգամ, որ նայիմ մէկուն՝ ներքին հաւատարակութեան մը զօրութեան կը հազարապատկէ կարծես:

— Ժարտարապետութենէ կը հասկնա՞ս, Ասոմ, — հարցուցի հետաքրքրութեամբ:

— Հասկնալէ աւելի կը սիրեմ:

— Նոյնը չէ՞:

— Չեմ գիտեր: Ես մէկ բան միայն ուզած եմ հասկնալ կեանքին մէջ, մեր երկրին գոյութեան ատեղծուածը, ու այն տպաւորութիւնը ունիմ, որ այս սրբառաւ քարերը գեր մը ունեցած են այդ հրաշքին մէջ:

Յուզումով նայցայ իր խոփած աշգրտուն ու յիշեցի մեր առաջին հանդիպումը, հոս, եւ իր մէկ պոռթկումը, որ մեծութիւններու ու մեծազորութիւններու կը վերագրէր երկրի մը հայրենացումը, այն բոլոր ապրումը, որ ժառանգորդներուն մէջ կը ձեւաւորէ լինելութեան խորհուրդը:

Նոյնը կրկնեց:

— Նմանօրինակ ուժն է, որ մարդուս մէջ կը շաղխէ նոր սխրագործութեանց պագմը:

Ազատէն ներս քաշեց սիկարէթին ծուխը:

— Արութեան խոբրը:

Մարեց սիկարէթը:

— Պաշտպանութեան բնազդը:

Սպասեալը դուրս բերաւ զիս պտպանմամէս: Սուրճը այլեւս բան չէր կրնար ըսել ինծի: Պատուիրեցի շիշ մը զարեղութիւն: Նորէն գիտեցի սիւնին ու ծառին իրարահաւ դեղեցկութիւնը:

— Կ'ուզեմ, որ քուկդ տո՛ւն ըլլայ, Պարոյր, — ըսաւ Ասոմ, — բնակարան ըլլայ միայն, այլ ձեռք մը ունենայ ու շունչ ունենայ, ինքնութիւն, ուր խայտայ ներս մտնողին հողին, ճախրէ, լողայ յիւղղութեան ծովուն մէջ:

— Եթէ կարելի է՝ ինչու չէ, — ըսի:

— Ինչո՞ւ կարելի պիտի չըլլայ: Հողը արդէն քեզի կը պատկանի: Դրանք ալ ունիս, արտաքին խոշորոտներու հարց ալ չկայ: Անգամ մըն ալ նայէ որ հրաշքներուն: Ո՞վ կ'արգիլէ մեզի ասոնցմէ բան մը դնել մեր կառոյցներուն մէջ: Ես կը կարծեմ, թէ որոշ պահերու եւ ձեռնարկներու առիթներով մենք պէտք է հետո մտնե՞նք հետեւելէ, ընդգրկեալից, նմանելէ ու կարենանք մենք մենք ըլլալ, փորձենք պատրանքներ ստեղծել, մեր ցնորքները վերանշնչաւորելու առիթներ:

Մտածումը սեղ կը գտնէր մտքիս: Երջանին մէջ տարբեր տուն մը ունենալու փառաբերութիւնը մէկէն սկսաւ աւելի տաք հոսքով մը շոյել ինք:

նախորդութիւնս ու զուարթութեան հով մը տնցաւ երակներէս: Ի՞մ տունս, վեհաշուք, ամենազրաւ:

— Այս երկրին մեր ունեցած բոլոր պարտքերը զեռ չենք վճարած ու փոխատուցումը պէտք է ըլլայ մերը ընծայելով իրեն, նորութիւն մը, մեր գիծերէն մէկը, ձեւերէն մէկը, մեր պարզութենէն տարբ մը, քարին հետ մեր վերաբերումէն ցուք մը:

Երեւակայութեանս մէջ արդէն սկսած էի խորհրդակցութեան կանչել ապարդէշին ծանօթ զէմքերը, ու անոնց հետ՝ Փարիզէն նոր պսակուած ճարտարապետ Միլեանը: Պարզեցի միտքս:

Ատոմ աջ ու ձախ տարաւ գլուխը:

— Ձե՛ս վստահիր:

— Գիտե՛ս ինչ: Հողակտորդ ձեռնտու է ինքնուրոյն խոյանքի մը, ծաւալանաց, բարձրադիր, անտառներով օղակուած: Այդ տուէալները պատճառ դարձան, որ բորբոքի երեւակայութիւնս, բայց շատ կը վախնամ... Մեր պատմութիւնը ներծծած մարդու դործ է իմ պատկերացուցածս: Ետաւ կը վախնամ:

Նորէն մտաբերեցի մեր գործին հետ կապ ունեցող անձերը: Նման երազներով ճամբայ չէին ելած անոնք, բայց դիժերու, ձեւերու, տարածութիւններու դիտութեան քաջածանօթ էին եւ նմոյշները ուսումնասիրելով կրնային հասնիլ բաղձալի արդիւնքին:

— Կարծեմ լաւ կ'ըլլայ, եթէ այս երազին համար անգամ մը Հայաստան երթաւ: Հրաշալի ճարտարապետներ ունինք հոն: Փորձէ:

Հօրս երազը՝ Հայաստան: Լացս եկաւ: Տխրածած հոգիով աչքերս յառեցի հեռուն: Սէն Ժորժի կողմէն ծովուն բացերը երեք մակոյկներ կը ծփային եւ օդապարիկէ մը առկախուած աղջիկ մը կը ծածանէր անոնց վերեւ:

Դարձայ Ատոմին: Ակնարկը սրճարանի միւս ծայրի վերջին սեղանին սեւեռած՝ քաղցրօրէն կը ժպտէր: Ստուգեցի իր զուարթութեան աղբիւրը: Գիշ առաջ զիս իր բառերու տարափին տակ առած տարեց այցելուն էր, որ խումբ մը երիտասարդներու առջեւ կանգնած՝ ձեռքով-սրբով կը խօսէր:

— Յայտնի է, որ նորէն իր տարերքին մէջ է մարդը, — ըսաւ Ատոմ:

— Կը ճաննե՞ս:

— Կարծեմ Հապէշխանունէն է: Արձակուրդով եկած է ու ժամանակին կէսը հոս կ'անցընէ՝ անընդհատ խօսելով:

Ատոմ երկու անգամ ենթարկուած էր քիչ առաջ իմ աչքած փորձութեան, բայց բոլորովին տարբեր ասպարեութեամբ մը խօսեցաւ անձանթին մասին, համարումով, ցնորակոծ, հաւատախոր, երկրէ երկիր չըջած ու շատ տառապած մարդ մը, մէկը կենսաբան համ տուող այն յախուռն տիպարներէն, որոնց թիւը, ըսաւ իրեն, սկսած էր նուազիլ մեր իրականութեան մէջ:

Նոյն պահուն երկու երիտասարդներ ներս մտան եւ ակնթարթի մը մէջ միացան միմեաներուն: Ատոմ ընդհատեց խօսքը, խոժոռեցաւ խիստ:

— Մանօ՞թ են, — հարցուցի:

— Բոլորն ալ:

— Ովքե՞ր են:

— Մեր ճախօրդ օրերը:

— Այսի՞նքն:

— Կու գան ու կ'երթան:

Փորձեցի ժպտիլ:

— Տաննամեակէ մը ի վեր նորութիւն հոլովող նորերու մէկ խումբը, — ըսաւ Ատոմ, — բանաստեղծ, գրադէտ, տեսաբան՝ Պէյրութէն, Փարիզէն,

Նոնոնէն, Ամերիկայէն, մէկն ալ, այդ կը տեսնե՞ս, դէժը մեր կողմը դարձուցած փոքրահասակը բնաւ մնայուն կայք չունի, վերջերս եկաւ Հաւաւայի Ամերիկէն: Տարին անգամ մը կը Հանդիպին իրարու: Այս տարի Պէյրուս ժամադրուած են: Առաւելները Հոս կ'անցընեն, երեկոյեան կը բարձրանան լեռ:

— Մեր բոլոր մտաւորականները Հոս են ուրեմն:

— Ըսէ՛ մեր անունները, — շեշտեց Ատոմ:

Պրպտեցի աչքերը:

— Անուններու ժամանակ է Հիմա, Պարո՛յր, — բացառանչեց Ատոմ թախծալի ձայնով, — դիտե՛ս ինչ է անուններու ժամանակը: Այն դժբախտ շրջանը, երբ անունները գործերէն առաջ կը հռչակուին: Հիմա, փառք Առաւելոյ, ամէն բան ունինք, բանաստեղծ, դրաղէա, տեսաբան, խմբագիր, փրֆիեսօր, բայց իրենցմէ մեզի Հասնող քիչ բան, չա՛տ քիչ բան, ու քիչին դէժ որքա՛ն շփոթ, չաւարում, մթութիւն, դէժ-դէժ խճողում ու դարձեալ անուններ: Դարձած եղած ենք տխրասակերներու ամբոխ մը, տեսակ մը տեղոյն ցեղախումբ...

Անուններու ժամանակաշրջանի իր փիլիսոփայութիւնը առկաին չէր աւարտած Ատոմ, երբ մտաւորականներու խումբէն երիտասարդ մը եկաւ եւ կանգ առաւ մեր սեղանին մօտ: Բարեւեց, սրտաբուխ: Ողջագոյնացաւ Ատոմին հետ: Մանօթներ էին ու ամբողջ տարի մը զիրար չէին տեսած: Փաղաք-շտկան մեղադրանքներ ուղղեցին իրարու, բարձրաձայն, զուարթօրէն: Սլացիկ Հասակով նիւարաւուն երիտասարդ մըն էր, անօր մազերով, ինքնավրասահման հով մը վրան: Ատոմ ներկայացուց մեզ իրարու, անունը՝ Տիբան, նախապէս յօդուածագիր, Հիմա դասախօս ու նոր բանաստեղծներուն համակիր:

— Մերուկէն փախայ, — բռաւ Տիբան, — չեմ դիտեր ո՞ր երկինքէն Հոս ինկաւ այս փոճանքը:

— Հետաքրքրական տիպար է, — հաստատեց Ատոմ:

— Այո, բայց շատ կը խօսի, ու ըսածները՝ սարէն-մորէն բաներ, խառնափնթոր:

— Քու բարեկամներուդ գրածներէն աւելի՞ խառնափնթոր, — հարցուց Ատոմ՝ յօնքերը վեր տանելով:

— Կը տեսնեմ, որ տարի մը առաջ յայտնած կարծիքդ նոյնութեամբ կը պահես, Ատոմ, բայց անոնք են ու կը մնան մեր միակ յուսատու տարերը:

— Մե՞ր, — զարմանալ ձեւացուց Ատոմ:

— Հապա որո՞ւ:

— Անուն-մականուններէ՞ն կը հետեւցնես, որ մերն են:

— Ինչո՞ւ անուն-մականուններէն, — ընդվզեցաւ Տիբան, — ի վերջոյ հայերէն կը գրեն:

— Անուբանալի է այդ արժանիքը, բայց... չեմ դիտեր: Ես իրենց գրածները կարդալով չեմ կրնար ճշդել, թէ ո՞ր աշխարհէն եկած են, ո՞ր ժողովուրդին կը պատկանին, ո՞ր մասնաւորին, ինքնութեան, անկրկնելիութեան, ո՞ր տեսակարար բնագոյն: Ամէն անգամ, որ մէկը տեսնեմ՝ ռապրոթականներ կը յիշեմ:

— Ի՞նչ ռապրոթական:

— Կամ եփրատականները:

— Զեմ հասկնար:

— Պատմութիւնը կ'ըսէ, — սկսաւ Ատոմ աւելի մեղմ, — որ Մուրաա Ռաֆայէլեանի, Գէորգեան ճեմարանի, Սասնաբերեանի, Կեդրոնականի ու

Պէրպէրեանի ջուրաներէն եկած աղաքն էին, որ հունաւորեցին, լեցուցին, աշխուժացուցին, կենսաւէտեցին, թեւաւորեցին մեր կեանքին աւելի քան եօթանասուն տարիները:

— Լաւ: Բայց ինչ կապ կայ մեր հարցին եւ քու վերջիւմէդ միջեւ:

— Պատմութիւնը կ'ըսէ մեզի, — շարունակեց Ատոմ նոյն հանդարտութեամբ, — որ այդ յարկերէն եկած խռովակոծ ու կայտառ աղոց օրով մեր կեանքին մէջ երեւցան այդ գոլէճներէն ցրտութիւն միայն բերող կենսազուրկ արարածներ, որոնք մայր զանդուածէն մեկուսի փորձեցին բաներ մը ընել, ըլլալ, ձեւացան, ձեւացուցին ու անարմատ տունկերու պէս խամբեցան ու չգացան:

— Ըսել կ'ուզես...

— Ըսել չեմ ուզեր, — ընդհատեց Ատոմ Տիրանի խօսքը, — կ'ըսեմ ուղղակի, որ անոնց կրկնօրինակները կը թուին ինծի հոս ու հոն աղմկող այս աղաքը, կարծես բոլորն ալ Ռապրիթ գոլէճէն եկած ըլլային, կամ Եփրատ գոլէճէն, կամ ամերիկացի հոգեւապաններուն կազմած Գլիկիոյ չըլլալիք գոլէճներէն, անոնց չըլնաւարաններուն յար եւ նման ու իրենց բառերը՝ այդ գոլէճականներու բառերուն յար եւ նման, նոյնպէս անհոգի, անիշ, սակաւարիւն ու փայլատ: Եթէ ուժ ունենայի...

— Դե՞ռ ինչ պիտի ընէիր, — ըսի՝ ներկայութիւնս դադարեցնելու մը զուժով:

— Կը հաւաքէի բոլոր այդ բառերը ու կը վերադարձնէի հոն՝ ուրկէ բռնեցին խլուած են, իրենց հայրենիքը, բառարաններու հանդիսին, վերջ տալով իրենց բազմաթիւ արարողութեան:

— Ձեմ հասկնա՞ր, բնաւ չեմ հասկնա՞ր այս Ժայռայեղութեան պատճառը:

— Շատ պարզ է սովային, յոյնութիւնս է պատճառը ու յուսահատութիւնս իրենցմէ, արուածէն, կարդացածներէն: Յետադարձ հայեացքով մը հիմա կը փնտռեմ գիրենք մաքիւ մէջ, ջրղերուս մէջ, արիւնիո մէջ ու ոչ մէկ հեաք կը գտնեմ, ոչի՛նչ՝ անուններէն զատ: Ինծի կը թուի, թէ ջողարկուած խաղարկութիւն մըն է տեղի աւելեցածը եւ ես չեմ ուզեր այլեւս իրենց հետ ու իրենց պէս ինքզինքս խորել:

— Անշուշտ գոն քու հաշուոյդ ազատ ես, — բնաւ Տիրան ինքնավերտաւ շեշտով, — բայց ես բնաւ համաձայն չեմ հետդ, որ խաղարկուած են անոնք: Ո՛ր: Կանխակալ կարծիքներով ճիշդ չէ մերժել յայտնաբերուած ազնիւ ձգտումը: Կէս դար կ'ընէ, որ մենք մեր մէջ ամփոփուած կ'ապրինք եւ նոյրերը եկած են վերջ ապուռ այդ սպանիչ մեկուսացման եւ բացուելու լայն աշխարհին: Ես կը կարծեմ, որ մենք ամբողջ հոգիով պէտք է ուժ տանք այս խառնամաղից նախաձեռնութեան:

— Մենք մե՞զ մոռնալով, — հլաց Ատոմ:

— Մենք մեզ մոռնալու հարց չկայ, ինչո՞ւ մենք մեզ պիտի մոռնանք, ընդհակառակն, խնդիրը կը վերաբերի աշխարհին հետ շախուելու հետանը կարին:

— Ուրիշներուն պէս ըլլալու անապարանքով չէ, որ պիտի փորձէինք չափաւել աշխարհի հետ: Օտարը երբեք պէտք չէ ունեցած, պէտք չունի անգամ մը իր փնտռածը, գտածը, հեղեղածը երկրորդ անգամ հայերէն բառերու մէջ տեսնելու: Ամբողջ խնդիրը ներծծելու եւ ներծծուելու երեսը թնեալուն մէջ կը կայանայ: Ժամանակին մեր երիտասարդներէն մէկը Եւրոպա կ'երթար ու նորութիւններ ներծծած կը վերադառնար՝ հարստացնելով մեզ ու աշխարհը, մինչդեռ հիմա տառնեակներով կ'երթան ու կը վերջանան զար-

հուրերի անձնատուութիւնը, լաւագոյն պարագային՝ իրենց կմախքը միայն պահելով մեզի, եւ կմախքներու ուրիշ շարք մը, պաղտափարներու կմախք, տեսութիւններու կմախք, արտայայտչական մեքերու կմախք, փոխանակ աշխարհի լաւը մեր մէջ տարրալուծելու, մենք հիմա կը փութանք յանձնուիլ անոր ընկուզիլ ալիքախումբներուն եւ այդ անձնատուութիւնը նորութիւն կը հռչակենք, վերջին խօսք, ուժի աղբիւր, Հասկնանք ի վերջոյ. ո՛րք ենք մենք այդ իրարանցումին մէջ:

— Յայտնապէս դուք կը փնտռեա անմիջապէս կոահելին, բայց սխալ է այդ մօտեցումը, անհրաժեշտ է խորացնել պրպտումները եւ անձամբ հասնիլ թաքնուած խնդիրներուն էութեան, ապրիլ յայտնաբերման հաճոյքը: Օրինակ, ես մաթեմատիկ կը դաստանդեմ, բայց բոլոր խնդիրները ինքս չեմ լուծեր, թո՛ղ կու տամ, որ ուսանողները իրենք լուծեն մեծ մասը: Այդ մէկուն մէջ է, որ կը զգացուի հաճոյքը, ուժը, հարստութիւնը:

— Պայմանաւ սակայն, որ խնդիր դոյութիւն ունենայ, իմ կարգացած էջերու մէջ գտած խնդիրներն պարզեցի արդէն, — պէ՛շ հայացուած բաներու ապաւորութիւնը ձգող ցուրտ խառնարան մը: Ինչ կը վերաբերի անմիջապէս կոահելիին՝ ըսեմ, որ ամենեւին ալ այդ չէ իմ փնտռածս, ամենեւին, — շեշտեց Ատոմ, առաւ ուժով մը վարեջուր, բոպէ՛ մը հետեւեցաւ երամէն անջատուած ճայի մը արեւազօծ ճախրանքին ու յանկարծ հարցուց.

— Դուն Զարենց կարգացած ես:

— Անշուշտ թէ կարգացած եմ, եւ բազմաթիւ անգամներ, — հաստատեց Տիրան:

— Գիտե՞ս անոր բանաստեղծութիւններէն որ մէկը ամէնէն շատ կարգացած եմ:

— Հետաքրքրական է:

— Վենիսն ու Ալին:

— Ձեմ հաւատար:

— Վենիսն ու Ալին, — կրկնեց Ատոմ:

— Կատակ է՞նե:

— Վենիսն ու Ալին:

Տիրան զաղբիւր հետապնդումը եւ դարձաւ ու քմծիծաղով մը նայեցաւ ինծի: Ատոմ կանգ չառաւ սակայն, ըսաւ, որ հայրենի հին, միջին ու նորագոյն բազմաթիւ մտաւորականներ անդուռ բերանով գովքը հիւսած են ու կը հիւսեն այդ շարադրանքին եւ իւրաքանչիւրին հետ ինք դարձած ու, իրմէ չկոահուած լիմաստին հանդիպելու յոյսով՝ կրկին ու կրկին կարգացած է զայն, բայց երբեք չէ կրցած ըմբռնել այդ շաղկապատութեան դիմաց մարզոց արձակած սովազդորդ ոգիանանները:

— Ալին դեր մը չունի իմ բացասական կարծիքին մէջ, — աճապարեց ըսել Ատոմ, — ոչ ալ Լենինը: Վաճառան քայլերգին հերոսը նոյն Լենինն է, բայց հոն ապրում կայ, յուզում, բանաստեղծութիւն:

— Յետոյ ի՞նչ:

— Ըսեմ: Վենիսն ու Ալին ուղղակի շատախօսութիւնն է, իսկ եւրօպականացած մեր նորերուն մատուցածը՝ չըլուած շատախօսութիւն:

— Պիտի ստիպուի՞մ ըսել, — բորբոքեցաւ Տիրան, — որ դուն քնաւ բան չես հասկցած անոնցմէ:

— Ձեմ բողոքեր, կրնայ ըլլալ: Ես այն գիտեմ միայն, որ երբ էջի մը վրայ բառերը իրարու հետ չեն ամուսնանար, բռնկում տեղի շօնհանար ու չի յայտնուի բոցածօրուս էակ մը, հոն կը մնան բառերը միայն, մերկ, դատարկապօրտ, անսուսղ բառերը, որոնց մեռելային լուծութիւնը բնաւ չի

տարբերք ճշան շատաստութենէն:

— Ես համաձայն չեմ ո՛չ կատարած արտանայումներու, եւ ոչ ալ արձակած վճիռներու, — առարկեց Տիրան հանդարտ եղանակով մը, — եւ դժուար չէ զուլակել չկամութեանդ շարժառիթը, որ կը գոնուի հարիւրամեայ եւ դուցէ աւելի տարիք ունեցող մայրութեան մը ծոցը: Դու յայտնուէ՞ս կը փնտռես մեր միջավայրին ընտանի հարցերն ու անոնց արձագանգները, Հայաստանը, հայութիւնը, հայրենասիրութիւնը եւ մնացեալը: Բայց պայման է ատոնց արկայութիւնը գրականութեան մը համար:

— Ո՛ր, պայման չէ, եւ իմ փնտռած երբե՛ք ալ այդ չէ: Կամ հայրենասիրութեան նախնական որակը չէ: Սրբազան անուններու թւումով առաջացած ցնծութիւնը բնաւ չէ: Իմ փնտռած մեր արիւնք կրող եւ մեր լեզուով աշխարհը ընկալող մարդուն ինքնուրոյն յայտնադորձութիւնն է: Ո՛ր է հայրենասիրութիւնը նարեկացիի մատենին մէջ, զոր մեր սրբութիւն սրբոցը կը դաւանինք, այդ մասին ի՞նչ կայ աստուածներ լացնող վարժանի լացին մէջ, որ յուզումով կը լիցանէ մեզ, ո՞րն է այդ հակումին հետ աղերսը արդի մարդուն Հայր մեր ընծայած Մեծարենցի կլանող մարդկայնութեան, որ նոր օրերու մեր Հայր մերն է: Այս բոլորով հանդերձ, ես ասորւած եմ մտածելու, որ մտքի մարդը պէտք է իր ժողովուրդի հոգիին մէկ պահը ըլլայ, արիւնին արձագանգը, ցաւերուն աղաղակը, կարօտներուն սերմնացանը, ի՞նչ դիտեմ, ըլլա՛յ:

— Բայց դարձաւ ու նոյն տեղը եկար, Ատո՛մ, քու սեփական պոպականերուդ, որոնք կը նեղցնեն տեղդումին շրջանակը: Լայնալու ու նորոգուելու փորձ մը անելի կ'ունենայ հիմա, որուն դէմ արդար չէ պատուար քաշել՝ շարունակ մեր նախասիրութիւնները հողովելով: Ընդէ՛ս:

Ատոմ վար առաւ աչքերը ու պրպոցեց զգրկները: Վտանց վերջին տեղակէքը ու ձեռք ըրաւ սպասեակին, յետոյ դողահար ձեռքով սկսաւ նորէն շարժարել առջեւի թուղթը: Տիրան կը հետեւէր անոր շարժումներուն, մինչ եւ աւելի յաճախ աչքերս սեւեռած կը պահէի կատարուած դիտողութեան անդրադարձին սպասող իր անձկալի աչքերուն, անոց համարումով մը: Ատոմը կը ճանչնայի, որոշ չափով Ծանօթ էի անոր կեանքի ելեւէջներուն, տարիներով ուսուցիչ եղած էր, իր գործը եղած էր հետեւիլ հայ իրականութեան, երեւոյթներուն, նորութիւններուն, կարգացած էր, գիտէ՛ր, բայց ի՞նչը դրձած էր մասեմաթիկոս Տիրանը այդքան Ծանօթութիւններ կուտակելու, տեսակէտ պարզելու նոյնիսկ իր չոր տասարեկին հետ աղերս չունեցող վերացական հարցերու դիմաց: Երկուքին բանավէճին ամբողջ ընթացքին շուտանցեային իմ խեղճ գոյութիւնը կրծեց զիս ու մթնոլորտէն դուրս մարդու իմ կացութեան մէջ յանկարծ ուրիշ վէճը մը զգացի արտիս, խորտակուեցաւ մէջս քիչ առաջ ինծի ուղղած Հայաստան երթալու Ատոմի առաջարկին խլրտացող հանձնը: Իմ մօտ ապրող մարդոց միջավայրէն դուրս մնալու դառն իրականութենէն ետք, ինչպէ՞ս սիրտ ընէի Հայաստան երթալու, ո՛ր իրաւունքով, ի՞նչ երեսով: Հազիւ օտարի մը Ծանօթութիւնը ունիմ անոր մասին, խոր շահադրձութեամբ հետեւած չեմ պատմութեամբ, լրիւ չեմ ճանչնար անոր պարտութիւններուն, յաղթանակներուն, ցաւերուն, սէրներուն, կատաղութիւններուն, սիրազարծումներուն ելեւէջները, ո՛ր իրաւունքով, ի՞նչ երեսով: Մէկէն եւ ինծի թուեցայ Ատոմի նկարագրած ապարթեականներէն մէկը, ո՛չ իսկ ապարթեական մը, տեսակ մը գոյութիւն, յամենայնի կեղտաւոր:

— Ընդէ՛ս, — կրկնեց իր հարցումը Տիրան:

— Կը սպասես, որ ո՛չ ըսեմ: Ի հարկէ՛ ճիշդ է:

— Ուրեմն :

— Ես ոեւէ մէկէն բան չեմ ուզեր եւ լաւ կը ճանչնամ ուզելու անհեթեթութեան շարժառիթին ու հետեւանքին ամբողջ ողորդութիւնը : Ես բնաւ չեմ ըսած, չեմ կրնար ըսել, որ մարդիկ ճամբայ ելլեն իմ սրտիս մօտ բաներ թուղթին յանձնելու միտումով, իմ մտքիս մօտ բաներ ըսելու համար ճշմութեան դիմեն, կոչերու արձագանդեն, ո՛չ, բայց ըսե՛ն բաներ, որ խօսին սրտիս, աւելնան մտածումիս վրայ, մոռցնել տան ինքզինքս ու առնեն—տան իրենց ետեւէն : Ոչ թէ ծառայեն ինձի, այլ տիրապետեն վրաս : Իմ փրկառածս իրենց լս'ածն է ու չդատածս իրենց լուծն է դարձեալ : Փոխարէնը, ըսի արդէն, բառ կայ միայն մէջտեղ, տարբեր լեզու մը խօսելու նոյնքան ապիմաստ փշոց մը եւ սրիչ աշխարհէ մը եկած բլլալու ինքնահնար առաջադիւմը, որ զիտ բնաւ չի չլացներ :

— Բայց առաջ դուն այսպէս չէիր, Ատո՛մ, որքան կը յիշեմ՝ համարումով կը հետեւէիր բոլորին, հիմա կը պահեմ, որ նոյնը չես, բնաւ նոյնը չես :

— Եւ գիտե՞ս ինչու :

— Ինչո՞ւ :

— Պարզապէս անոր համար, որ իրե՛նք նոյնը մնացին : Հիները չկըրկենելու իրենց առաջին ու համակրելի փորձէն զատ ի՞նչ կայ մէջտեղ, որ ներգրաւէր մեզ ու տանէր իր ետեւէն : Ո՞ր է իրենց գործերուն մէջ այրող նորը, որ շարունակենք արժէք տալ իրենց ուղեղած առաջին պատրանքներուն : Ես յոգնեցայ այնչաւ իրենց տառնամեայ տեսութեան անփերջ կրկնութենէն :

— Կրկնութի՛ւն, — դարձացաւ Տիրան :

— Կ'ուզէիր հապա յայտնութի՛ւն ըսէի :

— Շատախօսութի՛ւն, մեռելութի՛ւն, կրկնութի՛ւն, — երկարեց մայնը Տիրան, — չկա՞ն ուրիշ մեղքեր ալ, որ բարդեա անոնց վրայ, — հեզնեց Տիրան, — ինչո՞ւ անգամ մըն ալ թափանցելու մեր կարողութիւնը քննութեան չենթարկենք, — խայթեց Տիրան :

Ատոմի դէմքին խաղաղութիւն մը ծաւալեցաւ կարծես : Նորէն մատիւ առ ձեռք առաւ, գլուխը թեքեց ալ ուսին, բանիւր մը խզկեց «Ժիթան»ին վրայ, ձախ ձեռքով քերեց զունքերը, շունչ առաւ, շունչ առաւ, շտկուեցաւ, ըսաւ .

— Ես նորութեան անունով երդում բնող նորերուն աւելի ժամանակ տուած եմ, քան մեր արտակարգներուն՝ նարեկացիին, Ինարային, Օշականին, աւելի շատ՝ քան աշխարհի տարականոն համբաւներուն՝ Էտկար Ալէն Փոյին, Ռէմպոյին, Լոթրէամոնին ու Քամիւին, աւելի շատ՝ քան մեր անմիջական ժամանակակիցներէն Ժազ Բուպոյին, Ալէն Կինզպերկին ու Միլան Քրինաներային : Եթէ Եւրոպայով, մշակութիւնով ու վերջին փորձառութիւններով շարունակ օգտունացող մեր նորերը յիշեալ դէմքերուն ընծայածէն աւելի արժէք ունին եւ ես չեմ կրցած թափանցել անոր մէջ, այդ պարագային ինձի կը մնայ ստորագրել իմ դատապարտութիւնս : Բայց չեմ խորհեր, որ մէկը կարենայ յանդգնել նման տարողութեան մը գլուխը ընել անոնց յաւակնութիւններուն մէջ :

— Բայց Հողի մը մէջ մեր փնտածը չգտնել՝ կը նշանակէ՞ արդեօք, ոչ այդ Հողին մէջ իրապէս հանք չկայ : Եւ յետոյ, ինչո՞ւ պիտի չընդունինք, որ կան խառնուածքներ, որոնց կռահումները դիւրին չեն յանձնուիլ մահա կանացու մարդոց :

— Բայց այդպէ՞ս է արդեօք իրականութիւնը, Տիրան, — ըսաւ Ատոմ քաղցրութիւն մը գնելով բառերուն մէջ, — այդպէ՞ս կ'ուսուցանէ մեզի դայերու փորձառութիւնը, իրապէ՞ս բարեացակամ տրամադրութեամբ, մասնաւոր ճիշտ ու պատրաստութեամբ տեղի կ'ունենան ընկալումները : Ո՛չ, այդ—

պէս չէ իրականութիւնը: Դուն գիտես, որ ես լենինիստ մը չեմ, բայց քիչ առաջ ըսի, որ չեմ կրնար անսարքերութեամբ կարգաւ լենինին հռչակուած Զարենցի Վահուան քայլերդը եւ ըսել ուղեցի, որ հազար լենին չեն կրնար պարտադրել ինծի արժէք տալ արխաղաշ Ալուն: Մեզմէ ո՛վ արտի մը մէջ քրտինք թափած է այսօր, ո՛վ դուքան բռնած է, ո՛վ խօսած է եզան մը հետ, որ ամէնքս կը խենթանան կոմիտասեան հորովելին ի լուր: Գառը ի՞նչ կը հասկնայ նուազէն, որ հեղութեամբ կը հետեւի հողմի սրինդին, կամ՝ որ ո՛ւ ծանօթ էր Նազովրեցիին պատկերած աշխարհը, որ անգամ պարզուկ ձկնորսները տարաւ իր ետեւէն մինչեւ գլխովայր խաշուութիւն...

— Ատոմ, — բացազանչեցի մէկէն, — կէսօր եղաւ, անցնինք ճաշարանին կողմը եւ հոն շարունակեցէք ձեր վէճը:

— Ինծի կը ներէք, ես չեմ կրնար աւելի երկար մնալ, արդէն ուշացա՞յ տուած ժամադրութեանս, — առարկեց Տիրան:

Պնդեցի, խօսեցայ իր հանելիք ներկայութեան մասին, սկսած վէճին շարունակութիւնը լսելու ցանկութիւնս յայտնեցի, չեղաւ:

— Ատոմին հետ մեր վէճը չի վերջանար, ուրիշ տոբթով, — ըսաւ Տիրան աղետակա՛ն ժպիտ մը գէմքին, սեզմեց մեր ձեռքերը, ձեռքով հրաժեշտ փռաւ: Միւս անկիւնի իր բարեկամներէն եւ արագ մը դուրս ելաւ:

Նոյն վայրկեանին մենք անցանք ճաշարան, ուր ո՛չ թարմ ձուկը, ո՛չ առատ ազանդերը եւ ոչ ալ օդին կրցան թեթեւցնել Ատոմի տաշնապահար վրիճակը: Անվերջ խօսեցաւ Տիրանի եւ իր միջեւ ծագած վէճին մասին, խոս-վորայր նոյն ժայռով, երբ դանէր, որ իր բառերը հազիւ արժանանալ կը դառնէին այլ բաներուն համար անպատրաստ իմ ուղեղիս մէջ:

— Թափանցելու կարողութիւն, ընկալչութեան մարզո՛ւմ, ըստածը հասկնալու ո՛ւժ, ըսել ուզուածը կտահելու մտքի սրութիւն, ինչի՞ր ու ինչի՞ր: Նման պահանջներ դնելով կը կարծեն, թէ անխախտ կը մնան իրենք իրենց համար կառուցած օդային պատուանդաններուն վրայ: Զարմանալի եւ րեւոյթի մը առջեւ կը դռնուինք իրապէս, աննախադէպ՝ պատմութեան մէջ, ազատութեան ծայրագոյն չարաշահութիւն մը: Անցարդելներով ճամբան կը պատեն ու քայլէ կը հրամայեն մեղի, կամուրջները կը քանդեն ու գետէն անց-նելու հրաւեր կ'ուզեն, շարունակ մութ կը գիզեն ու աննկելու դռներ կու-տան: Տակնուվորայութեան ու քառի իրենց ջնարակուած ճաշակէն աւելի՝ պայմաններ դնելու այս խորամանկութիւնն է սարսափելին: Արբեցումի համար մարդիկ խմիչք մը կ'ուզեն՝ իրենք պատրաստութեան օրէնքները սորվելու յորդորներ կը կարգան անոնց, երգ մը կ'ուզեն՝ երաժշտագէտի վկայականներ կը պահանջեն, խորան մը կ'ուզեն՝ շինարարական վկայագիրներու հարցեր կը յուզեն: Իբր թէ մենք պարտաւոր ըլլալինք ուսանելու ծննդոցներու հա-խապամութիւնը, քիմիական ու կենսաբանական բազադրամատերը, երբ քաջ գիտեն, որ մեզ ընծան միայն կը շահագրգռէ, ջուրը եւ անոր կարկաչը, լոյս-ը եւ անոր ջերմութիւնը, ծովը եւ անոր շարժումը: Ես այսպէս կ'ըմբռնեմ զազափարները եւ զանոնք կըսող բառերը պէտք է ներկայանան ինծի քնու-թեան պէս անխաղաղ, վայրագութեամբ կամ քեջութեամբ, այլ արարչա-կան պարզութեան, կենսախոյս կոչունքի մը պէս: Աղջկան մը մօրթին բոյրը եւ մարմինին աշխոյժ ազդեցութիւնը ըմբոյննելէ ետք միայն ես կրնամ հա դառ-նալ ու խոնարհիլ անոր մօրը ստեղծագործ առաքանքին առջեւ: Ի՞նչ կապ կրնայ օւնենալ ինծի հետ աստուած մը, որ ուղիորէն լոյս չէ տարած: Ինծի մատուցուած էջերը Արարչին արարչագործած լոյսին պէս բան մը պէտք է ըլլան, առնուազն ձգտին ըլլալ բուռ, շոյլ, կենսաէջ: Տաղտալացած կոթ-ւած գետիններէ քալող սովորամոլներէն, ասոնց ծեծծեցուն շատախօսութիւն-

ներէն ու գունաթափ պատկերներէն, սկիզբը ի՞նչ ակնկալութիւններ կապեցի նորութեան այս խնկարկուններուն: Այն ատեն միամտիւ հաւատաքը ունէի, որ պիտի պատահի անխուսափելին, ա՛յն՝ որ ցոյց տուած է մեզի նման իրարանցումներու երկար շղթան, թէ՛ տեսութիւնները կը սմբին ու կը կտրկառուի դարձը, կը մարին շարժումներուն գոյիւղները եւ մէկ-երկու հոգի կ'անջատուին խաժամութէն ու կը լիացնեն մեզ իրենց տառաջը մայնեմով: Բայց հիմա՝ Մեզմէ ոչ մէկը կրնայ խելօք ու կարգապահ ձեւերու հետեւողներուն վերադառնալ, բայց ատիկա կրնա՞յ արդեօք դարձանել այս օտարամոլներուն չքաւորութիւնը: Եւրոպայէն անցած կամ Ամերիկա չըլած ըլլալու հանդամանքը բան մըն է հարկաւ, բայց բնաւ անքննելի երաշխիք մը չէ՝ երկրպագութեամբ մօտենալու համար ստեղծման անունով սարքուած բառերու քրտոսին: Այս իրողութեան հետեւանքով է, որ շարունակ պատէ պատ կը գտրնելին, ճիշդ կ'ընեն ուժի մը ասպաւորութիւնը ձեւել, բայց ես իրենց էջերուն մէջ պարզապէս կը տեսնեմ անգորութեան մը ծածուկ տառապանքը, այն ահաւոր բարդոյթը, որուն գոյութիւնը զուր է այլեւս պարտկել խորհրդաւորութիւններով ու արտաքին պաշտօնականներով: Տառը տարի կ'ընէ, ի՞նչ տառը տարի, աւելի՛՜ որ ինկած ենք այս ծուղակին մէջ, երբ մեզմէ ոեւէ մէկը իր վատնած այդ ժամանակով կրնար փոփոխեք մը բերել իր շարժարտած հոգիին: Իմ տեսածն բառ եղաւ միայն, բառ, առաւել բառ, դատարկահոնջ, պննաղարդ, պննամուլ, ցուցամուլ, բառ ու մեռելութիւն: Դժբախտ, լծ՝ ա դժբախտ բան է բռնկումի փոխարէն՝ կայծը տեսնել միայն, ծլարձակման փոխարէն՝ սերմը, կարկաշի մը փոխարէն՝ ակ մը, բառ, առաւել բառ, ցրտահար, ցրտացնող: Անոնց էջերէն մէկուն կամ միւսին դիմաց ես պարզապէս կը ձօժմ, այնպէս՝ ինչպէս կը ձօժմ, երբ ստիպումի բանալ Պոլսոյ իննհարիւրականներուն գործերը կամ երեսնական, քառասնական ու յիսունական թուականներու կէսերուն Հայաստանի թղթային արդիւնաբերութիւնը: Առաջին ողորդութեան մէջ լուսին ու աստղեր, ղեփիւռ ու փրփուր, երկրորդին մէջ այդ ալ շատ տեսնուեցաւ, վտարուեցան նոյնիսկ հոլանի կուրծքերը եւ ժանկկաղարդ երանքները եւ մարդիկ սկսան թուղթի վրայ թրաքթորներ հանդադնել միայն ու գործարաններու տիւսամոնէր զարմնել: Մեր նորերուն սարքածը անկումի երրորդ շրջանն է, որ առաջին երկուքին քաղաքական չքմանդանքներն անգամ չունի, որովհետեւ Հոս համիտեան ու սոսալիսեան գրաքննիչներուն չարաշուք ստուերները չկան, իրենք եւ իրենք միայն, բռնակալութեանց գրաքննիչներուն չափ անհոգի, թշնամի՝ ինքնեկին, բնականին, եռուեփող հարազատին, արեան արարչանիւթ նախասիրութեանց: Տեղի ունեցածը կամաւոր ստրկամտութիւն է հիմա, ապրուման՝ հետեւակութեան հեշտունքը, կապկելու անզուսպ մոլեղնութիւնը, որոնց հետեւանքը տարբեր չէր կրնար ըլլալ, պիտի ըլլար ա՛յս, ծածածուութիւններ, փոխառիկ՝ ծայրէ ծայր, հօրով ու մօրով անյայտ բան մը, ընկեցիկ գրականութիւն: Կշիռ ունեցողը մեր տարբերը պիտի ըլլար, մինչ օտարին պէս ըլլալու մրցավազքի մը ակառնատես դարձուցին մեզ շարունակ, եւ իրենք իրենց չնմանելու երկրորդ արդշափ մը, որ ի վերջոյ յանգեցաւ ոչ մէկ բանի նմանելու եղբարական իրականութեան մը: Չանդրադարձան, որ օտար գաղափարաբանութիւնները կամ փորձառութիւնները երբեք հոգ չեն դրած ժառանգութիւն ունեցող ժողովուրդներու հոգիին ու երբեք յմտածեցին վերջ տալ սկսած եռանդուն հետեւակութեան, ափսո՛ս: Ես ի՞նչ պիտի ընեմ այն գրականութիւնը, որուն հետ չեմ կրնար փոթորկիլ, խաղաղիլ, զինուիմալ, փաղաղիլ, սիրել, ատել, կարեկցիլ, տառապիլ կամ մանակցիլ ինկուլթեան մը բարդ հոլովոյթին: Կեանքին մէջ ու իրենք իրենց ներքին ալքերուն մէջ մխրճուելու փոխարէն՝ բառա-

բաններ հասուցացողներ եղան միայն ու մեծական թաղերնու արձագան-
գեցին, կարծելով, որ սալոնական քանի մը տունմայ վկարականներնու
թաժիտ հիացումը կրնայ անթափանց դարձնել բնագործութիւնը, որ իր թա-
քուն կամ փքուն երեսներով կը ներկայացնէ մասնագրութիւնը, որ իր թա-
քին միւս թիւը, Ո՛չ, բառերը սեփական զօրութեամբ նոր աշխարհի մը լաւը
չեն աւաներ եւ նաեւ յիշողութիւն չունին իրենց էջերուն մէջ, մեծ իրադար-
ձութիւններու ճշմարտով չեն պայթած անոնք, այլ ներկայացուած են իրենց
յարմարութեամբ վիճակներու խորամանկ դիտութեամբ մը, առանց արեւոյ գոյն
մասնակցութեան, եւ առոր համար բովանդակազուրկ են ու դաւանաբան, ճիշդ
գիրենք գերակարած խաղարկուններուն պէս: Եւ չկրցայ անոնց մէջ տեսնել
մէկը, որ բնական ինքնութեան մը առաջատար պարզած անցնէր մեր առջե-
ւին ու հմայք մը սփռէր կարօտաւոր մեր անարկներուն դիմաց: Այս կա-
ցութեան յայտարար մէկ նշանը մաքի եւ կենցաղի փոխներդրութեան բա-
ցակցութիւնը չէ՝ արդեօք: Կանոնաւոր պարտններ են բոլորն ալ, չափաբե-
ւած կենցաղաճոյ, առանց անգույնի մարերէ մը խթանում ըլլալու բե-
զուն օրհնութեան, որ օրբողին նարոտի մը պէս գիտցած է փոփոխել անկոխ
գեոքներէ անգամ բոլոր անիծեալներուն դիմուն: Առանց առանց յայտնու-
թեան տրանջացողներ են, Հալածանքի մարտերէն եւ անմեծ չէ իրենց
Գողգոթայի ճամբան, որ դրդալի մարտներ կրողներուն բնական ճան-
պարհը եղած է: Քիչ մը կը նմանին ազատ երկիրներու փողկապաւոր յաղա-
փութաններուն, որոնք կ'անցնին՝ իրենց եկած մեծով, առաջի պէս, օրով-
հետեւ ասնալից երկունքներու ծնունդ չէ իրենց երեսումը, տեսիլքի մը
տեսնողով չէ թեւաւորում, պերճանքի մը զրոհւորումն է պարզապէս, ցու-
ցական, հեռաւարտ խաբուսիկ, արեւմեալ անցաւոր: Ո՛չ, ո՛չ, հազար տե-
ղամ ոչ, եւ չեմ ուզեր, երբեք չեմ պահանջած, չեմ պահանջեր, որ մեր
պատկան մուրաբիին մասին խօսին, դրեն ստեղծութեամբ լուսնին մասին,
մեր վէրքերուն, աշխարհէն սեւեցած մեր յուսարկութիւններուն, կրած նը-
ւատութիւններուն կամ յամարութեան մեր պաշարներուն մասին: Մեզի թող
ձգեն մեր առաջապահը, մեզի թող ձգեն երկնային մեր պապանները, բնա-
ղանցական բոլոր զաւարումները, կասկածները, երկուսութիւնները, բաւժը:
Ո՛չ ծանօթ օրհնութիւնները կը շահագրգռեն մեզ, ո՛չ սէրերը, ո՛չ խաղաղու-
թեան օրօքները: Իմ ուզածս անպատեխին է, որ կարենաք անել զիս ու առ-
նիլ իր բարձունքներուն, իր անգուններուն, առաքարսներուն, իր սեփա-
կան միջոցներով, զօրութեամբ: Ո՛վ բան ուզած էր Նարեկացիին, Այաթ-
նովային, Արուսեանին, Ինարային, Օշականին, ո՛վ Դաւիթանին, Մեծարեւ-
ցին, Վարսեմանին, Չարենցին ու միւս բնաբներէն: Անոնք սեփական նախա-
ձեռնութեամբ շողողացուցին իրենց ուզած ու մարդիկ բնականցած բռնկած
կրակէն, լոյսէն, ուժէն: Եւ, օրինակ, չեմ յիշեր կախաղանի արժանի տարբեր
մը մասնակցած ըլլալու գէպ մը իմ կեանքիս մէջ, բայց քանի՞ անգամ բըռ-
նուած եմ Չարենցի բարձրացուցած կախաղանի կախարդանքէն ու չեմ կըր-
ցած իւրովի կամ բարձրաձայն չարտասանել՝ թող ոչ մի գոհ չսահանջուի
ինձից բացի, ուրիշ ուրեք կախաղանին թող մօտ չգան, այո՛, նախանձով
պոռացած եմ՝ եւ թող տեսնեն իմ աչքերի մէջ կախումն, իմ բորբ երկիր,
լուստպանակ քո ապագան: Օրինակը ասանձին չէ: Քանի՞ անգամ Վարսեմանի
հետ հայնայած եմ արարչութեան եւ ուրիշ քանի՞ անգամ ելած եմ հո ինձմէ
դուրս եւ միացած մինչ այդ երեւակայութենէն չանցած աշխարհներու ու հա-
ղադրուած այս կամ այն կախարդին յայտնագործած փոթորիկներուն, չա-
ռաններուն, թառանչներուն, դարուններուն, ամառներուն, յաղթերէն, մա-
հերդէն, Մեզմէ ո՛վ կը մտածէ մահուան մասին, բայց ո՛վ անգամ մը չէ

զգացած մահուան քաղցրութիւնը Շոփէնի մահերգին ի լուր։ Այսպէս պատահած է, որովհետեւ մեզի ընծայուած աշխարհը ձգողական ճղած է, թունդ եղած են բառերը, թունդ եղած են ձայները, հաւաստի, սուր, օբյեկտիվ, բուրմէնաւէտ, լուսահեղեղ։ Մեզ մեր բուսական կեանքէն, հողեղէն հակումներէն դուրս բերով եւ ուրիշ աշխարհի մը հետ յարաբերութեան մէջ գնող գորութիւնն է սպասուածը, արարչական տարր մը, այլակերպութեան առիթ մը։ Ասանք զոհարերութիւն կը պահանջեն, մինչ մարդիկ հիմա զոհարերութիւնը մէկդի ձգած՝ իրերու անձեւ շեղակոյտը ցոյց կու տան ու ահա մեր տաճարը կ'ըսեն, կ'աղակեն՝ ահա մեր համանուագը կ'ըսեն, բառակոյտը ցոյց կու տան՝ ահա մեր բանաստեղծութիւնը կ'ըսեն։ Դիւրին, դիւրին, դիւրին գործ։ Բայց կ'անցնի անկման այս շրջանը ու արեւեստը դարձեալ կը զգենու արութեան իր պատմութեանը, կը ստանձնէ նորէն իր դերը, կ'ըլլայ զբոսման լիւր ծնող մը մարդոց համար, սիրազեղ կիւն մը, յախուռն հոմանուհի մը, բարեկամ մը, ապաւէն մը, ըմբոստութեան սաղմ, տառապանքներ քաղցրացնող օրօր, պաղպաղուն ջուր՝ ծարաւներուն, հաց՝ անօթութեան։ Այսպէս վարուած են մեզի հետ թուրք ընտիրները։ Վաղը ուրիշ մը կու գայ եւ կու գայ միայն իր օրէնքով, եւ ո՛վ դիտէ մեր մէջ թաքնաթաղուն ո՛ր անյայտին ձեւ կու տայ, գոյն, հուն, ընթացք, տառապելու, տարբանալու, քնքշանալու, խորհրդազգածութեան ի՛նչ ուղիներ ընծայելով մեր վայելումին։ Արդէն տրուած էն եւ չեմ կշտացած, ծարաւը ունիմ նորին եւ ասոր համար կը կարդամ մատուցուած ամէն էջ, կը սպասեմ անկկատոյց։ Ըլլա՛ր մէկը, որ ցոյց մը նետէր վարկածներու վրայ, սփոփարար պատրանք մը՝ տարակոյտներու վրայ, ծիածան մը՝ բնագոյնական տաքնապներու, բերէր ինծի կիրքի մը քրքիլը կամ մարմանդ հով մը, ալիկոծում կամ խաղաղութիւն, այնպիսի ցնորք մը, որ դիտէ ընծայել խաչելութեան ընդունակ ընտիրը միայն, կարողութեանց միութիւնը, իրութիւնը, կիզիչ ձգողութիւնը։ Եւ անձկանօք կը սպասեմ այս տիպարին, իսկ եղածները, օ՛, եղածները, չեն կարգացուիր, չեն կարգացուիր, չեն, չեն, հրապուրիչ չեն, յափշտակութեան մագնիսէն զուրկ են, անկենդան են, համբ...

— Վերջացուցի՛ր մենախօսութիւնդ, — հարցուցի՛ երբ շունչ առնելու համար կանգ առաւ։

— Այսինքն։ Ինչո՞ւ։

Մասնաւոր ըսելիք մը չունէի։ Փնտեցի բան մը։ Գտայ։

— Կ'ըսես, որ ասոնք չեն կարգացուիր, իսկ ըստ քեզի ո՞ր գիրքերը շատ կը կարգացունեն ներկայիս։

— Նայած Ժողովուրդներուն, — ըսաւ չոր, — օտարներուն մօտ՝ պոռնկագրութիւնները, մեր մօտ՝ մտքի պոռնկութիւնը։

— Ա՛յդ ինչ բան է։

— Զրօսալըջիկային դրականութիւնը։

Զէի ճանչնար։ Թօթուեցի ուսերս։ Նոյն ատեն նոր տխրութիւն մը զգացի սրտիս, տեսակ մը ճնշում։

— Բայց դուն բախտաւոր մարդ ես, Պարոյր։

— Այո, դժբախտ չեմ, — ըսի մեքենաբար։

— Ծա՛տ բախտաւոր։

— Ինչո՞ւ այս ընդդժմումը։

— Որովհետեւ մեր իրականութենէն հեռու կ'ապրին։

— Սակայն հոն ասպրոզներուն նախանձելով շարունակ։

— Կենացդ, Պարոյր։

— Կենացդ, Աստմ։

ՊՕՂՈՍ ՄԱՍԳԵԱՆ

Ի Շ Ի Տ Ա

Հեփթաթի մը կածաններէն՝
 Նոնիներու իրիկնամբո՛ւ ստուերները
 ռոմանտիկէնդ կ'արուագծեն:

Երբ դուն չես գար,
 Քարերն ամգամ
 Զըսուած բառի մը ծանրութեամբ
 ալ իմ վրաս կը կէփն:

Իշխտա՛,
 Քեզմէ՛ դատարկ համբաններու ստեղծաշարին՝
 Քայլերդ նուագներ են,
 Որ բլուրներու հտին՝
 անարձագանգ օրերն ի գուր կը կանչեն:

Այն ուզեալը,
 Որ մանկութեան նախաֆայլն իր
 Քառուղիներու վրայ արձակեց՝
 պիտի մանուկ մնայ յաւիտ:

Ու գիշեր մը,
 Երգերուդ մէջ մեղեդիացած՝
 Պիտի խռովքն մեկնէ
 արուններու անվերադարձ մեկնումին:

Իշխտա՛,
 Քեզ փնտռող ամէն աչք,
 Խօսքերուդ մէջ ծածկուած՝
 պիտի յաւիտ բաց մնայ:


ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ

Ծ Ա Հ Պ Ա Ջ Ը

Քույրական ու կուսակցական պատճառներին լատ առաջ, սկսեալ ներկայ դարուն առաջին աստ- նածեակներէն, Յ. Օշականի եւ հայ գրականու- թեան արեւելահայ թեւի ներկայացուցիչներուն ջոհերը քիչ անգամ հասած են նոյն առաջին: Ար- ւեստի հասկացողութիւնը միշտ իրարու դէմ հա- նած է զիջելն ու միշտ ծայրայեղութիւններու, երկուստեք, յատկապէս բացասական վերաբերում- ներու պարագային: Ժամանակը, սակայն, որ է միջին աշխարհի դարձն է մեր նաեւ արուեստ- ար կալուածին մէջ, կանխակալ արամադրութիւն- ները հոգուն առած է միշտ ու կարկառած իրա- կան արժէքները:

Վստիտիմնորէն Վանդալի տիկնոջ նման պատկերի մը առջեւ կը գտնուէ՞ր զարմեալ, ա՛յն- քան՝ որ մինչ Աւետիք Իսահակեան կեղծ եւ ոչ ազդող գրականութիւն կը հռչակէ զայն, հայրե- նի միջին սերունդի քննադատներին Գառլէն Դա- նիէլեան զեղարուեստական յայտնութիւններ կը անսնէ անոր մէջ:

Գրական բաւարարման մասին յաւելեալ զարգացում մը տալու համար՝ երկու կարեւորե- րուն հետ կու տանք նաեւ Վանդալի վերջին մա- որը, հասնելու համար բարեբաղն երկրորդ փու- լին, որ տեղի ունեցաւ զարմեալ Հայաստանի մէջ եւ այս անգամ թէ՛ հեղինակ՝ Օշականի...



Կը պատահէր, որ դուրի մը յատակը մաքրելու համար, այրին ներս կախէր կէտը իր մարմինին: Այն ատեն, բռնուելէ ապահով, Շահպաղ՝ գիմա- ցէն, կը թրթռար միւս կէտին շեղ բարձրացումէն, որ երեւան կը բերէր, դուրսանալէն վեր անոր միւսին ձիւնէ սիւնակը: Ու կը պղտորէին իր աչքերը: Ատանկ որ մը անիկա, անակնկալ յանդգնութեամբ մը, փաթթուեցաւ անոր մարմինին, երբ այրին գամ կը գամէր:

digitised by A.R.A.R.®

Օշականի Վանդալը համ լաւ է, համ դէշ: Ամէնից առաջ լատ առաւ րան կայ, ոչ-հազարանա- կան: Երկրորդ՝ զգուար է կարգադրում, լատ է պրկուած շեղում, սեղ: Նոր անկիւններէց նայած՝ հետախուզող է: Բայց այս լայնորէ հետ՝ ստուեր- ները լատ են, եւ ապրող գրականութիւն չէ: յը- տակ, բերեղացած չէ, եւ մանաւանդ անկեղծ չէ: Նման է Ֆուստերիտներին, որ տուած են, թէ գրականութիւնը անկեղծ լիպի լինի, այլ կեղծ, արուեստական, այսինքն՝ արուեստով շինուած:

ԱՌԵՏԻՔ ԲՈՒՆԱՅԵԱՆ

Օշականը ընդգծում է մարմնական կողմնորո- լող ուժը գիտակցականի նկատմամբ: Գեղարուես- տական իսկական յայտնութիւն է վերմակի տակ ինքն իրեն զգացող կնոջ երջանկութեան նկարա- գրութիւնը: Վանիլի լաւ վայելելու համար այս զգայութիւնները համեց գոյլանները ու քիւշը առաւ վերմակին տակ: Ու գգուամբ անիի ձըր- րացած, անիի հեշտ՝ կը բարձրանար բուրբուրէն, կ'անցնէր գիտելիք լայն գրծերով, կը հաւաք- ւէր մէջին վրայ, յետոյ կը շեղէր գլուխը քա- յարք աւ կը հասներ ծիծերուն ու կը բախէր զարմ- եալ սրտին մէջ որոշ, պայծառ, թիւթակալ համ- բայրի մը պէս:

Ու հենց այս պահերին էր, որ հրեւակայորէն յայտնուած էր Շահպաղը, կիւնը երան վանում էր, րայց նա նորից էր վերադառնում: Միևնույն ժա- մանակ յանկարծ երեւում էր ամուսինը զիր զարչ անկողինովը: Ու աւերում էր ամբողջ ինքնա- մոռացումը, գիտելիք գողը, մարմնի կրակուած սրտանը: Սեռական եկթագիտակցութեան մշու- շտ այնպիսի ունի լպամուտը զազանիքներ, ու- րոնց Օշականը մօտենում է արուեստագետի իր արտակարգ ներամտութեամբ: Նրա հերոսների տառապանքի մէջ բարձրանում է մարդկային խոր ապրումների գեղեցիկութիւնը:

ԳԱՐԼԵՆ ԴԱՆԻԵԼԵԱՆ

Անոր թիւերը անցան ուսերուն տակէն ու վրայէն ու գլուխը կեցուցին անշարժ։

Այրին չպոռաց։ Նայեցաւ խիստ։ Բայց իր մարմինը կեցաւ խելօք ու չըրաւ փախուստին յատկանշող շարժումը։ Երբ ուրազը ինկաւ ձեռքէն, աւերակ մարմինը ինքնին զակուեցաւ միւսին բազուկներէն։

— Դու խել՞նք ես։

Յանդիմանութիւն։ Կարելի չէր վճռել։ Բայց հետեւեցաւ անոր։ Զկերտւաւ հացը։ Այրին դարձաւ իր զբաղումներուն։ Ձտեսաւ նոյնիսկ անոր զարարուն նայուածքները։ Երբ միւս սենեակը անցաւ, Շահպազը դուրս ելաւ ու անհետացաւ։

Մահճակալին մաքրութիւնը աւարտեցաւ։ Շողիկ հարտը մինակ էր։ Ու յիշեց պատահարը։

Մինչեւ հիմա չզղացուած յոգնութեան մը տակ, անիկա երկարեցաւ կակուղ անկողինին։

Իրեն այնպէս կու գար, թէ իր տակէն բան մը կամաց-կամաց կը փաթթուէր իր մարմինին։ Բացաւ իր շիղերը։ Գլուանքը թոյլ-թոյլ կը դառնար իր մեքերուն վրայէն ու կ'ուղղուէր դէպի օրտը։

Աւելի լաւ վայելելու համար այս զգացողութիւնները՝ հանեց գուլպաները ու թիւերը առաւ վերմակին տակ։ Ու գլուանքը, աւելի նրբացած, աւելի հեշտ՝ կը բարձրանար բուժքերէն, կ'անցնէր դիտներէն լայն գիծերով, կը հաւաքուէր մէջքին վրայ, յետոյ կը շիղէր դէպի ողնայարը ու կը հասնէր ծիծերուն ու կը թափէր զարձեալ օրտին մէջ, որոշ, պայծառ, նիւթական համբոյրի մը պէս։

Ճնշուեցաւ ու վախցաւ։ Կարծես մէկը կը պահէր իր բերնէն։ Բայց աչքերը բաց էին ու իջած վարագոյրները իրենց մեղծ ճերմակութիւնը կը ցուցնէին կապոյտ պատերուն վրայ։

Ձեռքերը դպան, գիպուածով, իր ծիծերուն, որոնք քարի պէս ամուրցած էին։ Խաղաց անոնց կաղապարին հետ, բայց ամչցաւ։ Ինչո՞ւ։ Ինքն ալ չէր գիտեր։

Բոլոր այս զգայնութեանց ընդհատներուն Շահպազի պատկերը կու գար, անհրաժեշտ ու տաղանկալի։ Կը ճամբուէր, բայց կը վերադառնար։ Այն ատեն պատճառներ փնտռեց ու գտաւ։

Կու գար, որովհետեւ, հաւատաց անիկա, կը մեղքնար անոր։ Բայց անիկա կու գար ճիշդ այն պահերուն, երբ զգայնութիւնը իր լրումին կը բարձրանար ու պակաս մը կը գծադրուէր։ Միեւնոյն ատեն, ուրուականի պէս իր մարդը ելաւ իր դարձ անկողինովը։ Ի՛նչ կապ կար երկու մարդերուն մէջ։

Բայց մեռելին յիշատակը պիղծ ջուրի մը պէս աւրեց անոր երազանքը։ Ելաւ ոտքի, հագաւ նոր փէշերէն մէկը, որ այնքան խօսքի պատճառ եղած էր գեղին մէջ։

Անդաւ հայելիին առջին։ Ձգտուեցաւ ինչպէս ըրած էր միշտ իր պատկերին։ Ականջներն կարծրած էին ու դէմքը դառնի։ Խնամքով կապեց եղբայրն։ Դարձեալ նայեցաւ իրեն։ Ու ժպիտը կտրեցաւ կէս ճամբան։

Ու ոտքերը ծանր էին իր ներքեւ։ Հանեց փէշը նորէն, նետեց եղբայրն ու կռթնեցաւ պատուհանի բարձերէն մէկուն։ Քաշեց բոլորովին վարագոյրը ու մտիկ ըրաւ։

Ինքզինքը մտիկ կ'ընէր։

Այն ատեն կրկնուեցան բոլոր զգայնութիւնները, առանց որ անկողինին փափկութիւնը կենար իր ներքին։ Այս անգամ անոնք ներքին կեդրոնէ մը գուրծ կը խուժէին։

Ու կը զգար առանձին-առանձին անոնց ծագումն ու ընդլայնումը։ Կը

հետեւէր անոնց կտրւած ճամբորդութեան ու, մտնաւանդ՝ անոնց ձեւ, դրեթէ շարժում ըլլալուն: Ու անոնք կը յայտնուէին դարձեալ այն կէտերուն վրայ, ուրկէ զայսած էին նախորդները:

Ու բան մը կ'ենար անոր ներսը:

Ինչպէ՞ն կապեց այս տակնուվրայութիւնը քիչ առաջուան պատահարին: Բարկացաւ ինքնիրեն: Մարդերը արժանի չէին ոչ իսկ գթութեան: Բայց բարկութիւնը ինչաւ ինքնիրեն, երբ տեսաւ պահապանին տառապած դէմքը: Իրը պարզ արգահատանքն էր, իր հաւատքովը: Յետոյ եկան ուրիշ մտահոգութիւններ:

Անիկա բաց թուղթի մը պէս կը տեսնար միւսին հոգին: Ամիսներու արդիւնք էր այս գիտութիւնը իրեն ժողովներէ եղած էր ան կնկան յիշատակին հետ, ա՛յն կնկանը, զոր չէր սիրած: Խենթ կրնար ըլլալ ան նորէն կնիկի մը հետ, զոր կը սիրէր:

Որոշեց զգուշանալ: Գերեզման պիտի չերթար ամբողջ շաբաթը: Միտքը բերաւ միւս աղքատները: Անոնց պիտի տանէր իր օրերը:

Երբորդ անգամ ըլլալով երեւան եկաւ Նիզորու խիստ պրկումը, որ արտակարգ թուղթիւններ կը բերէր իր հետեւէն: Ու անիկա շատ որոշ լսեց իր մօրն ձայնը:

Անիկա ձայն ըլլալէ աւելի՝ ամբողջական թրթում մըն էր բոլոր իր մարմինէն բարձրացող: Տեսակ մը անձայն փոթորիկ, աշխատէ՛ր ինչպէ՛ս նկարները կու տան, գրեթէ որոշ ու տեսանելի գիծերու բռնկում մը, որ կը քալէ քեզի հետ ու կը ծաւալի քեզմէ դուրս:

Ելաւ ոտքի: Բայց թոյլ էին ոսկորները: Հազաւ սովորական գերեզմանի գլխաւոր: Ետինք էր:

Ու հակառակ իր բարկութեան, ու հակառակ իր որոշումներուն՝ անիկա զնաց գերեզման, իր կարծիքովը, Շահպաղին կացութիւնը դիտելու:

Պահապանը գրեթէ դանդաղելով ելած էր անոր դուռէն:

— Գինով է, — ըսին երկու պառաւ ցածուկէն: Շահպաղը լսած էր:

Գինով: Ի՛նչ քիչ էր այդ բառը: Անոր ներսը կը պոռար բան մը, որ կը նմանէր ժամացոյցի մը թող տրուած զսպանակին: Ու աչքերը լաւ չէին տեսներ:

Փակուեցաւ հիւղակին մէջ: Արագ-արագ միտեց կրակի շրթունքին քնացած նքոնքը^(*): Կայծերը շարժումի ելան: Կատուն փութաց քովը, մօրը-տուկը կախ մուրթէն:

Տուաւ ոտքերը կրակին ու կը նայէր բոցերուն:

Ու տեսաւ, որ ինք էրիկ մարդ մըն էր հիմա: Անիկա հետեւեցաւ մաքուր վրայ այս աստիճանական վերադարձի բոլոր փուլերուն: Անդրադարձաւ, որ ինչպէ՛ս ամէն օր, անիկա աշխատած էր հանելու իր գերեզմանէն նուիրական զոյգումը թել-թել փետելով ու զանելով, տարիներու փոշիին տակ, անոր քայքայուած ոտատնը: Ու կը տեսնէր հիմա, թէ ինչպէ՛ս այրիին նայելու մէկ ձեւը, շարժումի մը պտհուն անոր ծիծին մէկ խաղը, խնդալուն մէկ գիծը պատճառներ էին, որպէ՛սզի անոր մէջ արթննար զգայնութեան ամէնէն սուր դանակը, որ մարդերուն սիրտը կը կտրուէ:

Ու արտօնեցաւ. բայց նոյն ատեն հպարտացաւ: Ոտքերը զարկաւ հողէ յատակին ու սպասեց: Հիւղակը իր բոլոր խեղճութիւնովը փոխուեցաւ հաբուտի ապարանքին: Ու ասպրեցաւ իր կարգին խնամուած մանրամասնութեան մը մէջ, ինչ որ պատահած էր քիչ առաջ:

(*) Երա — կիսալքած փայտի կտոր:

Երբ դուրս ելաւ՝ այրին դերեղման կը մտնէր։

Իրարու նայեցան առանց խօսելու։ Ու որոշ անջրպետով մը քալեցին դէպի դարձարանը։

Նստեցաւ վանդակէն դուրս։ Կը վախնար ուղղակի նայելէ, բայց լրտեսեց պահերը, երբ անոր ձայնը ուժով առ արցունքոտ շնչով մը կ'ողորուէր։ Կը նայէր անմիջապէս ու տեսածը կը փոխադրէր իրմէ ներս։ Իր ձեռքերը կը տաշէին փայտի կտոր մը, բայց իր ներքէն կնոյ պատկերը կը պաշտուէր։

Էջը տեղի ունեցաւ նորէն առանց խոշոր յուզումի։ Պահեց սովորական անջրպետը, որով քալած էին ամիսներ։ Փոփոխէն, բայց թիչ մը ետեւօք, լեցուց իր աչքերը՝ վիզին մանեակովը, որ երկու սեւերու մէջտեղը կը դարձնէր զմայլելի իր օղակը, ու կ'իտադէմքին լուսնկան։

Թիչ փղան անոնց բառերը։ Բայց տարօրինակ քաղցրութեամբ։ Ու Շահ-պազը գրեթէ կը շօշափէր անոր բառերը, որոնք սրտին շաքարին մէջ թափելու լաւ օժանդակուր կու գային ինչպէս իր երեսներուն համարյոյր մը պէս։

Ու ինչպէս իր երեսին հոփը անոր մարմինին, այդպէս քարակ, ու այդպէս գրաւելի։

Անոնք շփոտեցան կէտօրսան դէպքին։

Բարտիներուն տակ ջուրը պրաղկեցուց թիչ մը անոնց ջիզերը։ Անիկա տերեւ կը կրէր ու անիկա խոտերուն մէջ զոյգ կը ձգէր։

Ճերմակ ճամբան, բաժանումին ճամբան, կծկեց անոնց ուրուազծուող համայքը։ Բայց զգայութիւնը թռաւ։ Ու քալեցին։

Անոր ետեւէն, եզման իր մէկ պոչովը կ'երկնար ու կը գրկուէր մահերուն հիւսքին հետ։ Փորձեց բռնել նուրբ ուրբ մը, որ սեւ օտթէ օղակ մը վեր կը դարձնէր, բայց չբռաւ։

Բառ մը իրեն դարձուց անոր երեսը։ Ու անոր բերանէն իր վրայ եկաւ մոռցուած մշուշ մը։ Ու անիկա վերագալ կը կարծէր ան շունչը, որ մութին մէջ Աննային բերանէն կու գար։ Գորովի տեսակ մը ծփանք, տեսակ մը թափանցիկ ու այրող պատմուճան, որ նորէն է սիրողներուն մօտ, սիրտէն զայ կամ աչքէն։

Անիկա գիւտեր ըրաւ անոր կեցող մարմինէն, քաղող մարմինէն։ Երբ հանգչած քարին հասան, աջին մէկ ոտքը վեր ապասեց։ Կը նայէր սեղող լճակին։ Այն ատեն անոր միտերուն շէնքը հեռաւոր, բոլորովին մոռցուած զգայութիւն մը հանեց իր մէջ։ Ու միտքը եկաւ իր կիներ նորէն, որ չհազարու համար՝ իր ծունկին նպաստը կու տար իր փորին, ու կը սպասէր, որ մարդը, իր մարդը գրկէ անոր յոգնութիւնը։

Ու երբ դուռնէն տարաւ զայն, նայեցաւ ետեւէն։ Անոր քայլերուն բազմալուրդ՝ բան մը կը նեղուէր իրմէն ներս։ Ու քանի՜ ձեւը հեռացաւ, ա՛յնքան իր զգայութիւնը տեսանելի կ'ըլլար իրեն։ Ու դարձանալի կապը գտաւ՝ իջող այդ մարմինին նուազումին ու խոշորացող, լայնցող իր սրտին մէջ։ Ի՞նչ էր այս աղերսը։ Անիկա պատահաներ փնտրելու խելը չունեցաւ։ Բայց երեւոյթները ու տպաւորութիւնները չփախցուց երբեք։

Այդ օրէն իր գիշերները սկսան տաղնապիլ։ Իր քունը պղտորեցաւ։ Առաջին անգամն էր, որ քան տարիներու ընդհատէ մը ետքը անոր երազը փորձուեցաւ։ Գրկած կիներ անուն չունէր ու անծանօթ էր։ Բայց կիներ էր։ Ու արջեցաւ տարտուռ։

Մութ էր հեղափոխ, որուն մէկ պատուհանը միայն կարելի կ'ըլլար տեսնել։ Տախտակը իր ներքեւը, կատուն ոտքերուն վրայ։ Շարժեցաւ ալ ու ձախ։ Պատկերը մեռած էր։

Միւս գիշերը եկաւ Ծողիկը։ Անիկա բարի էր ու աղքատ բոլորովին։ Ունէր իր աղջիկներովեան պարզ դեմքը ու պարզ սիրտը։ Անիկա նորէն աղ-

ընկ էր եղած։ Ու անոր թիւերը իր վիզին շուրջ կ'էյնային հանգարաւ քաղցրութեամբ մը։ Բայց Շահապին սիրտը կը կոտորար, ամուր ու արագ։

Երբ արթնցաւ՝ նոյն խուարը, որ լուս էր իր վրայ։ Նոյն դաւկացած սեւին կտորը՝ պատուհանին առջեւ։ Ու անխուսափելի կատուն։

Ելաւ ոտքի։ Պրկեց իր ձեռքերը հառ առաջ։ Մտեցաւ մեղմով ողնա-սիւին վրայ։ Ու ոսկորները, քաղցր ու հեշտ բզզիւնով մը դղրդացին ողնէն մինչեւ ծունկի մեծ ծխներն, որ լարուեցաւ ինքնաբերաբար ու ցնցեց անոր հեշտագին թմբիւրը։

Ու մինչեւ լուս, անիկա աչքին առջեւը պահեց աղքատիկ աղջկան այդ պատկերը։ Միաքը դրած էր պատմել տեսիլը, բայց ո՛ր չափով։ Ձէք դիտեր։ Այն օրը տեսան անիկա, որ կը նայէր երիտասարդ կիներուն, յանդըգ-նութեամբ ու զօրութեամբ։ Անոր աչքերը իր նայուածքին կու տային էրէկ մարդու շէշտուած արտայայտութիւն մը, որ կիներու միտերը կը խողցնէ։

Այրին եկաւ։ Գերեզմանը գրեթէ ամայի էր։ Անոր կրակը սովորականէն աւելի քիչ էր շարաթներէ ի վեր։ Անոր խունկին արարողութիւնը՝ կարճ։

Ու վանդակէն դուրս Շահապը նստած ով դիտէ որո՛ւ մարմինն վրայ, կը նայէր այդ պատկերին ու զայն կը բռնէր մտքին մէջ՝ բեւեռուած միւս նը-կարին հետ։ Գիծերը նոյնն էին։ Բայց դոյնը կը տարբերէր։

Ու անիկա պատմեց իր տեսիլը։ Անոր պատմութենէն՝ երեսուն կ'ելլար զեղացի աղջնակ մը, տասնըհինգին դուռներուն։ Հոգուտը նկարագրեց այն-պէս՝ ինչպէս հազուած էր այրին հիմա մոռցած այդ անցեալին մէջ։ Պրզ-տիկցուց զայն, վերցնելով վրայէն լայնքը կուրծքին եւ ուսերուն, քիչ մը առաւ հասակէն ու երեսներէն։ Այսպէս փոքրացած այրին կը դառնար պատուա-նութեան շրջանին։ Ու հաճելի էր այս յետդարձը։

Ժպիտով մտիկ ըրաւ։ Ու սպասեց։

— Այդպէս։

Շահապը գլուխը ծռեց մէկ կողմին։ Ձեռքը նետեց վեր՝ օդին մէջ դը-ծելով ասորտա՛ծ մարմին։

Բայց այրին չէր թողուր։

Պահապանը կը տառապէր, անիկա քրտնեցաւ նոյնիսկ, երբ արգէն ցուրտը դողեր էր տաած։

— Ի՞նչ կ'ընէինք։

Հարցումը հանդարտ էր։ Պարելի չէր անկէ ուժ առնել։ Ու անկեղծ իր իր շնչով շուարումը կ'աւելցնէր։

Փորձուեցաւ ուժով նայիլ անոր աչքերէն ներս։ Անտարբեր դէմքին առ-ջեւ տկարացաւ իր հոգին։ Կախեց երեսը ու մատովը կը խաղար զեղնած տե-րեւի մը հետ։

— Նորէն տամարդ բռնեց։

— Ի՞նչ կը կարդաս դուն, գիտե՞ս։

Շահապը իր վրդովումը կրգաւ դնել նախադասութեան մէջ։ Այրին իր կարգին թեթեւ անհանգստութեամբ մը պարուրուեցաւ։ Անոր դէմքին հանգարտութիւնը գիծ-գիծ եղաւ կարելի էր ըսել։ Չպնդեց։

Իրիկունը կու դար։ Բլուրին դադաթէն վերջին լույսն ալ քաշուեցաւ ու դեղին փորէն մուխը, կապոյտ քիչ առաջ, տրտմեցաւ ու դորշ բան մը եղաւ ինքնին։ Անմիջական գովութիւն մը, որ արեւէն վախճալուն կը պահուէր կարծես քարերուն մէջ, վեր կ'ելլար։ Ու թեթեւ մտաք մը կը յայտնուէր տ-նոնց վրայ։

Կինը դուրս ելաւ վանդակէն։ Խաղաղ էր դարձեալ, ինչպէս ամէն իրի-կուն։ Բայց ետ կը մնար։ Ու կը յարմարցնէր քայլերը քայլերուն։

Ձխտեցան: Երբ ճամբան գտան, տխուր էին, իւրաքանչիւրը իր ձեռովը: Դուռին առջեւ կեցուց, դրեթէ ձեռքը բռնեցով:

— Հիմա տո՛ւն կ'երթաս:

— Հապա ո՛ւր:

Հարցումը անակնկալ էր:

Իրարու նայեցան: Սկսող մութին մէջ կարելի է զանազանել միտերուն խաղը դէմքին վրայ:

Շահպաղին շրթները կծկուած էին: Անոր ձեռքը մէջքին կոթնած՝ կամաց կը շարժէր: Դուռը ուսերէն վար, ներս իջնալու ձեւ մը ցոյց կու տար: Անիկա յայտնի պայքարի մը ճնշումին տակ կ'աշխատէր պահել ինքզինքը:

Կիմը դուռէն դուրս ելաւ. հակառակ սովորութեան՝ Շահպաղ չկրցաւ ներս մտնել ու աչքովը ճամբու դնել: Ձէր զգացած, թէ կը հետեւէր անոր:

Այրիին դարձը յանկարծակիի բերաւ զայն:

— Նե՛րս գնա:

Հրամայական էր այս շեշտը: Առանց հտին դառնալու՝ շտկեցաւ զերեզման ու վազեց հիւղակը: Դուռը դոցեց ներսէն, կանթեղը վառեց ու կրակը արծառծեց:

Փայտերէն շոյո՛ւր տեսակ մը շարժում կը խաղար պատերուն ու շուք կը տանդծէր:

Նստեցաւ կրակին առջին:

Բայց իր ամբողջ միտերը ոտքի էին կարծես: Ու բազմութեան այս ըզ-
զայութիւնը երկիւղալի բան մը կու տար անոր միշտակութեան: Ու կը կար-
ծէր լսել անոնց պահանջները զատ-զատ: Բերանը՝ որ բերան կ'ուզէր. թեւերը՝
որ մէջք կ'ուզէին. երեսները՝ որ լեզու կ'ուզէին:

Ինքզինքը մտիկ ընելու այս ստիպումը անոր մէջ յաճախ կը փոխա-
րինուէր զգայնական նոր շահերով: Անիկա, այդ միջոցով, երեսան կը հանէր
իր հոգիին պահճու յուզումները ու կատաղութեամբ կ'ելլար անոնց դրայ:

Մէկէն դրեթէ թանձրացաւ կնկան պատկերը իր առջին: Ծրեւո՞յթ:
Բայց կրակը կար իր խաղցող բոցին հետ ու կատուն, որ կէս գլուխ կը հե-
տեւէր իր մտածումներուն:

Հոնց իր անունը:

Յառկեց դուրս: Դրան մէջ անոր հասակը:

Ա՛ռ:

Ու քառերը քաշուեցաւ:

Գէտ մութին մէջ ճերմակ պնակը իր աղօտ ձեւը կը գծէր: Գրեթէ գա-
ղեց: Դրան մէջէն նայեցաւ դուրս: Ոչ ոք կար: Առաւ պնակը:

Առանձն: Փորը կուշաւ կը զգար եօթը շարթուան համար:

Բայց գորովով, բայց թրթռային իր մառները կը պարտէին ամանին
կաժարելին, եղերքներուն:

Ու տեսաւ անիկա աղուոր տունին մէջ, երբ ծուած էր կրակին առջեւ
եփելու համար այս ձուագեղը:

Ու այս պատկերը չկրցաւ հեռացնել իր հոգիէն: Ուղեց միտքը փոխա-
դրել ուրիշ պատկերներ: Ձէր կրնար ու կը նեղուէր: Մէկէն զղաց, որ իր հո-
գին կեցած, զարթած էր զարծելէ: Ու իր մէջը կ'ապրէր, եկած էր արթնու-
աբիւ մը՝ այրին: Իրեն այնպէս եկաւ, որ անիկա իր մէջէն դուրս կը նետէր
ինչ որ ինքը չէր: Ու մարդկային բոլոր փափաքները, բոլոր սովորութիւն-
ները, բոլոր վախերը եւ նկատումները զազրեղան իր մէջ:

Անիկա այդ կնիկը կ'ուզէր: Ու կ'ուզէր այս գիւնը:

Այս ահաւոր ցանկութեան առջեւ, անիկա առաջին անգամ զգաց ուրիշ
աչքերը մշուշող, ու ջիղերը արժասներէն ժրջնող միտ զգացումը, որուն

մասին ոչինչ գիտէր: Գեղերուն մէջ սիրոյ զոհերը այնքան շիջ են, որ հասարակ սեղաններու չ'իջնար անոնց ազդակներուն թափանցումը:

Ու կը միտէին զինքը: Գրեթէ կը տեսնէր հարուածները, որոնք իր մարմինին զանազան կէտերէն կ'ուղղուէին իր սիրտը: Ու ինչ շատ էին անոնք: Ուրի եկաւ չէր գիտեր ինչու: Դարձաւ հիւղակին չորս կողմը: Կը տատանէր:

Դուռը շարժեցաւ հովէն: Այս ժայնը թելադրանք մը եղաւ անոր դուռն ելլելու:

Մութը ուժով էր ու խորունկ: Կը սահէր անոր վրայէն աւելի՝ քան թէ կը քալէր: Հոգը կակո՛ւղ, բաժպակի պէս, պազ իր կռնակովը:

Լոյսեր, գեղին բոլոր տուններէն, առատ կամ նիւհար: Անցաւ պարտէզներուն արահետը: Հող չըջափակը լեցուց զինքը:

Սպրդեցաւ ճեղքէ մը ու մտաւ անոր պարտէզը: Ծուռ առաւ: Ծտեւէն բլուրը կը սեւնար: Քովերէն՝ ուրիշ պարտէզներէ ձայնի կտորներ: Երբեմն պտտուանէ մը քանի մը գիծ լոյս, որ արիւնի պէս կը քաշուէր ծառերուն մէջէն:

Քալեց: Գոց գիտէր պարտէզը: Հորին տոջեւ կանգ առաւ: Մոեցաւ: Սեւ աւելի թանձր էր: Ու շատ վարը տժգոյն մաղ մը կը կլորնար:

Բակ տանող դուռը հրեց, որ անձայն բացուեցաւ: Արդելներու այս լզոյութիւնը վճռականութիւն կը բերէր իրեն: Ձէր գիտե՞ր, թէ չէր լսեր իր սրտին ձայնէն դուրս ալ մէկ բան:

Գրեթէ կը տեսնէր սանդուխտ: Այգերը այնքան լոյս կը հանէին իրենց խորէն:

Երբ հասաւ սրահ, այն ատեն միայն զգաց, որ ծունկերը կոտորելու չափ կը դողային ու չէին բացուեր: Սարսուռը սիրտը իջած էր: Ինչէն կը վախնար, չէր գիտեր:

Ճակատը՝ անոր սենեակը: Պատիկ կանթեղ մը վարադոյրին վրայ արիւնի ցոլք մը կը փռէր, որ վարերը կը տարտամար: Բայց քալեց: Ու կեցաւ նորէն երբ դուռը բացուեցաւ:

— Ո՞վ է ան:

— Ե՛մ:

— Ես ապա՞ր:

Ու դուռը գոցուեցաւ կրկին:

Ետպարզ քար կտրեցաւ: Իրեն այնպէս եկաւ, որ տախտակները պիտի կոտորէին ու պիտի ինար: Ու զգուշաւոր իջաւ ծունկերուն վրայ:

Դուռը կրկին բացուեցաւ: Ու լոյսը ձեռքը՝ Եղիկը մօտեցաւ:

— Խո՛ւ կայ:

Ձայնը խելօք էր ու բարկութիւն, վախ չէր արտայայտեր:

— Ինչո՞ւ եկար:

Չպտտասխանեց:

— Քեզի կ'ըսեմ, յե՛ս լսեր:

Ձայնը ցած էր, բայց քաղցր. ոչ մէկ յուզման հետք: Մինակ տարտամ զգուշութիւն մը: Պատերը թափանցիկ են գեղերուն մէջ:

Ետպարզ վերցուց նայուածքը: Ու կրնը նայեցաւ անոր այգերուն, որոնք կորսնցուցած կը թուէին իրենց մարդկային արտայայտութիւնը: Ետք մուն ու հեղուկ բան մը, որ պզտիկ լոյսին տակ արիւնի պէս փոթեր զոյգ կու տար, լեցուցած էր անոնց գունաւորը: Կարելի չէր զանազանի ճերմակը սեւէն: Կասկածելի էր նոյնիսկ անոնց տեսնալը:

— Ինչ ունիս:

Հիմա ձայնը շատ աւելի ցած էր: Քոփի տունէն լոյս մը զարկած էր

զարտէջ։ Ու անոր թելին մէջ տեսնուեցան զանազան ճիւղեր, բարակ դեղինով մը։

— Ուրկէ՞ եկար։

— Յտեւէն։

Իր բնազդովը հասկցած էր հարցումին թաքուն զոպանակը։

— Ինչո՞ւ եկար։

Հոռութիւն։ Բայց կարելի չէր օրահին մէջ խօսիլ անոր հետ։ Ոչ ալ ճամբել անիկա։ Գովի տունէն աղմուկը, խօսակցութիւնը յտակ կը լսուէին։

— Անօթի՞ ես։

Յղդուողին երկնցող տախտակն էր տախտակ։ Շահագազ փաթթուեցաւ սուտին։

— Հա՛։

— Քալէ՛։

Ոտքի ելաւ ու ծունկերը կը ցաւէին։ Կը քալէր կամաց, բնազդական զգուշութեամբ մը։

Կինը բացաւ օճախով տենեակը։ Անոր մէկ հատիկ պատուհանը թանձր պողով մը ծածկուած կը թեկուսացնէր զայն ետեւէն, պարտէզէն։ Պատերը հասարակ զուլ էին հոս։

Լոյսը դրաւ փայտեայ աթոռակէ մը վրայ։ Տարօրինակ հանդարտութիւն մը կը պաշտպանէր անիկա։ Պատիհանէն(*) առաւ հաց ու պանիր։

— Կե՛ր։

Ինչպէ՞ս կ'են մը պիտի ըսէր իր ամուսինին։

Պահապանը մատ չշարժեց։

— Ինչո՞ւ չես ուտեր։

Նայեցաւ զարժեալ աչքերուն։ Աւրուած օդի մը պատկերը կար հոն, որ քիչ-քիչ կը մաքրուէր։

— Անօթի չե՞ս։

— Ձէ։

Բայց իր ճիւղերը ուղարկու վրայ էին։ Ձգաց, որ քիթին երկու ծակերէն կարտող բան մը գէպի աչքերը կը քալէր, առանկ մը կարծրացած շիշ, որ տաղելէն դուռ անոր արցունքէն ալը ու կճեց։

Հեղուկը լիզեց անմիջապէս։

Անհուն զանգութիւն կար ինկող այս ջուրին մէջ ու անսահման կարօտ։

— Ինչո՞ւ կու լաս։

Մուկը դրաւ անոր մօտիկ։ Ու անոր մարմինէն քողջր տաքութիւն մը հոսեցաւ պահապանին երեսին։

Երեք-չորս ամիսներ անոնք իրարու հետ խօսած էին առանց նեղուելու։ Հոգիէ հոգի անցնելու տեսակ մը գիւրութիւն տնոնց մարմինները մօտեցուցեր էր իրարու։ Հիմա՞։

Բայց արցունքները կը շարունակէին թափիլ, հանդարտ ու շարժով։ Ու եղբայրական բան էր այս ստուերոտ սենեկին մէջ, ինքնիքմէն դուրս այս մարդուն տղու պէս լալը։

Ու կու լար, ափերովը դոցած երեսները, շնայելու, շտեմնելու համար։ Այլին ձեռքովը զպաւ անոր մատներուն։ Հպումին տակ ափերը վար ինկան երեսներէն։ Թաշկինակով օրրեց անոր աչքերը։ Ու կտաւ նուրբ էր ու փափուկ կնկան շրթներուն նման։

— Ձո՞ւր տամ։

Գլխովը մերժեց։ Խօսքին բոլոր թելերը կտրուած էին։ Սենեակին

(*) Պատիհան — պատին մէջ փորուած ծակ, պահարամ։

բաց դուռը ինքնիշխան զնաց գոցուեցաւ։ Ու լուսնիւնը շարունակուեցաւ տառնն մըն ալ։

Ու այդ միջոցին այրին առաջին անգամ զգաց էրիկ մարդու ախքան մօտութիւնը ու անկէ բխող խոտվէր։ Մե՛ր, Բայց ասիկա ի՞նչ յուզուելուն աստիճանովը, ի՞նչ զոգովն ու արցունքովը մէկ գիշերուան մէջ տաւիլի բան էր ըրած անոր, քան միւսին հետ ապրուած չորս տարիները։

Ու վախը եկաւ։ Անիկա աշխատեցաւ լինալ անոր աչքերուն տակ։ Ինքզինքը բաւական ուժով կը կարծէր՝ ուրիշ կողմերէն չազդուելու համար։

Ու միւսը՝ լացողը, ինքզինքը զսպած կը նայէր անոր մարմինին, որ զգեստին ու տարտամ լոյսին տակ ցնորարէր երեւոյթ մը կը դառնար։

Բայց կարելի չէր պահել այս ձգտուած սպասումը։ Ու խօսքէ փախչելու փորձը կը տանէր տաւիլի վտանգաւոր դահլիճէ մը։ Կինը գիտցաւ տաւիկա։ Մարդուն շարժումները մօտեցած էին ջղաձգական ձեւերու։ Անոր ուսը մէկէն վեր ելաւ ու իջաւ տեղը նորէն։

Գլուխը կախուեցաւ քիչ մը շտապ։

Ու այրին կը նայէր ճերմակ այս դանկին։ Անոր դուրս ինկած մազերը կը զոգողային կարծես։ Մէկէն յիշեց անոր Երեւանի միջնադարէն արկածը։ Ու խենթի մը հետ դանդաղութեամբ վախը պաղ հոսանքի մը պէս տարածուեցաւ անոր բոլոր անդամներուն։

Աւելի մօտեցաւ անոր։ Որոշած էր մեղմով, առանց ցնցումի՝ դուրս հանել անիկա ու հիւզակը դրկել։

Ձեռքը տարաւ անոր նակատին։ Մէկ Ծուռիկը գետինն էր, միւսը՝ կուտը։

Պահապանը իր ձեռքը տարաւ դնելու անորին վրայ։

— Ասանկ էիր։

Այրին չհասկցաւ։

— Ասանկ էիր, գիշերը, ձեռքդ հոս դրած։

Բառերը խելօք էին ու նայուածքին պզտորութիւնը դառնաւ։ Պատրանքը այնքան իրական էր, որ այրին ժողովուրդովն ու անգիտութեամբ մը, որ անոր տեսական պիտանքն էր եղած։

— Պատմէ, պատմէ սա երազդ։

Պահապանը իր ձեռքը կը սեղմէր անոր կակուղ միտքուն վրայ։ Անիկա իր զգայնութիւնը փոխադրած էր այդ սղակուտ միտքի կտորին վրայ, որ հիմա կը կանչուէր դիմանալու ամենախոր յուզումի մը։

Անոնց մարմինները իրարու մօտ էին քիչ մը աւելի շատ, քան որեւէ տան։ Ու անզգայարար իրարմէ՝ զատու միջոցը կը նեղնար։ Ու պահապանին երեսը սկսած էր թեթեւօրէն տաքնալ։ Ու անոր ունեւորէն ներս կը փաշուէր հոտ մը, հեռաւոր, մոռցուած հոտը տաքուի Ծիծերուն, որոնք իր քթին մօտիկը, սեւ կերպասին վրայ աւելի որոշ, կը լարուէին ու կը լարուէին։

Մշուշ մը իջաւ բոլոր իր անդամներուն։ Ու զգաց, որ անոնք բռնող ուժը ինկած էր մէջէն։ Յետոյ կրկնուեցաւ պարապի այն խոր ու անհասկնալի զգայնութիւնը, որ հիւզակին մէջ յայտնուած էր անոր հոգիէն ներս։

Այն տանն առանց գիտնալու ձեռքը երկարեց՝ բռնելու համար բացը մնացած բաղուկը այրին, որ իր կարգին չէր կրնար զոգել իր դողը։ Տարաւ անիկա շատ կամայ դէպի վեր, ու ձգեց անոր կէսը կունակին, կէսն ալ վիզին։

— Ասանկ էիր։

Բառ չէր ելածը, յուզումէն իր բոլոր հնչականութիւնը կորսնցուցած՝ պատկեր ըլլալէ աւելի անպատմելի տառապանքի մը անզայտ մէկ հեւքը, որ Ծանրութիւն չունէր գրեթէ։

Այս շարժումին հետ անիկա քաշած էր անոր իրանը։ Ու երեսները դը-

բաժնի Երևան, միև մեկը ալ նկատած կոնսակին՝ կը կենար հանդարտ, և այրիին բազուկը վիզին շրջանը ընկնէն ետքը կը թառէր անոր կոնսակին։

— Ասանկ էիր։ Աղջիկ, աղջիկ էիր։

Քէթ Հասնելու լոյսի խորհուրդին, անէանալ նրա մէջ, քմայել այն: Բայց լոյսը, ճառագայթը, երկինքը յայտնում են ու անհետանում՝ երջանկութեան ակնկալքով աւելի ծանրացնելով ատառապանքի բեռը, սասանելով հաւատը. «Դարձեալ «Դարձեալ ճառագայթը. օ՛ն, օ՛ն, աւելի շատ. աւելի պայծառ: Իրերը ինչպէս կը լուսաւորուին, ինչ խեղճուկ երանութեամբ. մարդերը ինչպէս կը կանաչանան: Որքան պիտի զուարթանամ, ուրախ պիտի ըլլամ հիմա, եթէ նորէն չկորսուի այս լոյսը»: Բայց կեցութեան ոլորտում անհունարազմ հոգին ոչ մի տեսական քաւարարութիւն չի կորոզ հաշակել: Վիշ պարզամտութիւն, — շարունակում է Ինտրան, — ահաւասիկ ճառագայթը կը խաւարի. կը խուսափի. անհուն անգթութեան կը թողու զիս նորէն: Աստուած իմ, պիտի տեսնե՞ս այս ամպամածութիւնը: Աշխարհքին արտաշնչութեան այս մոխիրային, այս աղմային թանձրացումը պիտի շարունակէ՞ լուսապայծառ երկինքին տեղը բռնել. ա՛հ, ինչպէս աշխարհքը արժանի է իր ստեղծած այս մուսլ երկինքին» (1): Սակայն եթէ իրական ճառագայթը իրական հոգի վերայ ազդող մարդուն անմատչելի է՝ իբրեւ տեսական երջանկութիւն, ապա երկնքի լուսորոտում որբացած նրա (լոյսի ճառագայթի) խորհուրդը դառնում է հասանելի՝ մարդկային ներքնաշխարհի հայեցողականութեամբ՝ իբրեւ աղօթք ու փառարանութեան երգ. «Ա՛հ, կապոյտներ, երկնային կապոյտներ, մտածումներէս վեր պարզուեցէ՛ք ալ աւելի խորունկ, միշտ աւելի բարի, որքան աւելի անմատոյց. եւ տակաւին անցէ՛ք հողիէս, չչնջիւններ, անբաւ որբութիւններէն իջնող այն ճառագայթը երգելով (2): Նարեկացիական խոլ տարերքը «Մատենան...»-ում վերջի վերջոյ խաղաղութեամբ է զարդար արեգակին՝ եզերքին, ուր եւ յաւերժանում է աստուածային էութեան մէջ: Ինտրան լոյսն ապրելով, հալուելով լոյսի մէջ, ձուլուելով լոյսին՝ հասնում է նրա աղօթքին, որ այլ բան չէ, քան «անգործը դերագոյն իմաստութեան, ուր տարակոյսը չկայ եւ որ վայելքն է ամէն բանի. ու անգործը դերագոյն համասեռութեան, ուր մարմնոյն այլասեռ բազմասնութեան (բազմամասնութեան) պայծառ չկայ, ուր մարմինները կը միանան զուտ ու իսկական եղբայրութեան մը, հայրութեան մը եսին մէջ: Իսկ սա այն վիճակն է, որտեղից ծագել է բոլոր աստուածութիւնների զաղափարը՝ սկսած բուզդիստական Նիրվանայից, վերջացած Գրիստոսով: Ուստի եւ Աստծոյ տեսիլը դառնում է բանաստեղծի «մեծագոյն ցնորքը»- «Ո՛հ, մոլորելոյս մեծագոյն ցնորքն է Աստուած»: Հետեւաբար «Ներքաշխարհում եւ մանաւանդ սոնետներում անանցի, յաւիտենականի սկզբունքները, որ լոյսի այլացումներն են միայն, զրկւում են յայտնի պայմանականութիւնից, որ արտեւորում սովորաբար այդ զաղափարները իմաստաւորում է կենսական իդէալների իրական բովանդակութեամբ: Այդտեղ հակառակ երեւոյթն է դիտւում. լուսագոյն կիսնքի երազը, մարդու ձգտումների բարձրագոյն սահմանը այնքան է վերացական եւ անգոյ, որ վերջի վերջոյ նոյնանում է արարչագործ էութեան արուեստարարական զաղափարի հետ. լոյսը տարաբաղադրում է ձգմարտութեան, Սիբոյ, Գուլի, Քրիստոսների բարոյական կատեղորիաներին, որ այլ բան չեն, քան աստուածային զաղափարի յաւիտենական ստորոգիւնները: Երջանը փակւում է. ինտրայական հերոսի քաղքենիական պատիւութիւնը վերջի վերջոյ դառնում է բարու եւ ճշմարտի երերուն խաբիսիսը, որ բոլոր մամանակների անցողի զգոնների երեւակայութեամբ ստեղծուած պատրանք է միայն:

Վ.Լ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

(1) Ինտրա, «Ներքաշխարհ», էջ 71:

(2) Նոյն տեղում, էջ 99:

Գ. Ա Ճ Ե Մ Ե Ա Ն

ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՆԻ ԵԶԱԿԻ ԵՂԱՆԱԿ

Հետեւեալ պարբերութիւնը կ'աւտոմատիզացնէ՝ Հայերէն լեզուի, գրականութեան եւ Հայ միտքի նորելուկ պաշտպան Մարկ Նշանեանի մեղի գէժ սարքած բանագրանքէն:

«Քննադատական ակնարկը երբեմն պէտք է գիտնայ ժխտական ըլլալ: Պէտք է գիտնայ մասնաւոր ընկ տկարութիւնները, ծաղիկը մեծամտութիւնները: Հրապարակի վրայ գտնուող շատ մը հրատարակութիւններ արժանի են ի հարկէ այսպիսի վերաբերմունքի մը, եւ յաճախ առնոց առիւն վերահրահ կը գտնուինք, նախընտրելով լուի, մտածելով թերեւս, թէ ամէն տեսակի արտագրութիւն ձեւով մը իր գոյութեան իրաւունքը կ'արդարացնէ, եթէ կան մարդիկ որոնք կ'ախորժին անկէ: Եւ մինչեւ որոշ տեղ՝ ճիշդ ալ է այս մտահոգութիւնը: Բայց երբեմն ալ կէտի մը կը Հասնինք, ուր ստիպուած ենք այլեւս պատուար մը բարձրացնել, տարբերութիւնները զգալի դարձնել: Եթէ չընենք, մեր աշխատանքն է վերջի վերջոյ՝ որ կը տուէ այդ ձեւացուած անտարբերութիւնէն: Եւ այս մասնաւոր՝ Հայկական Սփիւռքէն ներս, ուր ամէն ինչ կարելի է, ամէն ինչ թոյլատրելի եւ թոյլատրուած, ուր խոտորումի, միտմտութեան եւ երբեմն ալ՝ աներեսութեան ճամբուն վրայ ո'չ կանգ կայ, ո'չ ազդա-

րարութիւն, ո'չ անցեալ կայ, ո'չ ալ ներկայ»:

Կենթադրենք, թէ պարբերութիւնը ինքնին յստակ գաղափար մը կու տայ ընթերցողին՝ գործածուած Հայերէնին մասին: Քննադատը կ'անդիւանայ ըստ երեւոյթին՝ թէ լեզու մը միայն բոլոր կամ բառակազմութիւն չէ, այլ նաեւ՝ շարագասութիւն, որ կը հիմնուի տուեալ լեզուին քերականութեան վրայ: Որ, իր կարգին, հիմնուած է տրամաբանութեան վրայ: Եւ Հայերէն լեզուն, ինչպէս բոլոր լեզուները, ունի իր որոշ եւ իւրաքանչիւր տրամաբանութիւնը, որ մասշտիբ չէ մեր քննադատին: Եւ այս՝ որովհետեւ Հայերէն չի մտածեր ան: Իսկ լեզուն՝ միտք է եւ մտածողութիւն՝ նախ եւ առաջ:

Ախտավարակ հոգեբանութեամբ վերաւոր այս գրութիւնը, զոր զանազան կոչած է հեղինակը, լոյս տեսած է Փարիզի «Յառաջ» օրաթերթի 7 Հոկտեմբեր 1984 թիւին մէջ: Արտաստպումը կը կատարենք, որովհետեւ կը խորհինք, թէ Մարկ Նշանեան արժանի է ճիշդ նմանութեան վերաբերմունքի, զոր ինք իսկ բռնադատութեամբ է իր շնախարհիկ Հայերէնով: Ճիշդ է, «յառաջ» վեհերոս կը զրտնայի, նախընտրելով լուի, մտածելով թերեւս, թէ ամէն տեսակի արտագրութեան իր քննադատը մը իր գոյութեամբ իրաւունքը:

կ'արդարացնէ, եթէ կամ մարդիկ արմէ կ'ախարժիմ անկէ՝ Այո՛, լուսւո իրաւունք չունինք այլեւս եւ պէտք է հարկն ու պատշաճը ըսենք այս երանելիին, որ մէկ օրէն միւսը որոշած է հայ գրականութիւնը իր սեփական ազարակը նկատել եւ հաստատել հոն իր երազած մենատիրական դրութիւնը:

Եւ այս՝ որովհետեւ ճանաչողութեամբ ճամբում վրայ ո՛չ կ'անց կայ, ո՛չ ազդարարութիւն...»: Ասոնք իր բառերն են:

Դժբախտաբար ըսածը ճիշդ է. Սփիւռքի իսկական պատկերը այս է: Մեր պատմութիւնն է, մեր իրականութիւնը, մեր ճակատագիրը՝ եթէ կ'ուզէք: Փաստ՝ որ ան կ'ուզէ տիրող կացութիւնն ու անկախանութիւնը շահագործելով՝ այս ժողովուրդին պարտադրել իր կամքը: Իր պարագային՝ դրականութեան մասին է խօսքը: Այլ խօսքով՝ դրական տեսակէտները կ'ուզէ պարտադրել, զլանալով ուրիշներու իրենց տեսակէտը ունենալու կամ արտայայտելու իրաւունքը: Մասաչուսէթսէթ, թէ քննադատ անհանդուրժողութիւն է ստիկա: Թէ՛ արդեօ՞ք պաշտպանած թեզին խոցելիութիւնը պիտէ ջղային, եւ ուրեմն, անհանդուրժող կը դարձնէ:

Այս ախտանշանաբանութիւնը մըն է լոկ, եւ կրնանք սխալած ըլլալ անշուշտ: Ամէն պարագայի ժամանակը պիտի որոշէ ստիկա: Մինչ այդ, սակայն, պէտք է ան ըմբռնէ (եւ հաշտուի դադարի մըն հետ, որքան ալ դժուար ըլլայ իրեն համար), թէ «կանգ» կա՛յ եւ, մասնաւոր՝ ճանցեալ» ու ճանցեալ: Ո՛չ մեր իրականութիւնը եւ ոչ ալ մեր գրականութիւնը — անցեալին կամ ներկային — կախեալ եղած են անմէրու ճմահանոյթներէն: Իւրաքանչիւր շրջան, քնակտն է, իր վաստակաւորներու կարգին, ունեցած է նաեւ իր նարսիսական տխրով թունաւոր հիւանդները, որոնք, իրենց անմէրով հմայուած՝ մոռցած են սմէն ինչ — պատշաճութիւն, գրական եւ դեղարուեստական արժէքներ, մշակութային ժառանգութիւն ու, մասնաւոր՝ պարկեշտութիւն:

Զարմանալի չէ ուրեմն, որ ներկայ շրջանը բացառութիւն չկազմէր: Եւ այս

սօր մենք ունինք Մարկ Նշանեանի նման քանի մը հերոսներ, որոնք այն պատրանքը ունին, թէ կրնան սանձարձակ կերպով իշխել բնագաւառի մը մէջ, ուր մուտք դործելու իրաւունք նոյնիսկ չունին: Պարտականութիւն է հետեւաբար, ինչպէս միւս, նմանօրինակ մարդոց յիշեցնել, թէ հայ գրականութեան անդոստանը անտէր ու անպաշտպան մնացած այսի մը չէ, ուր կրնան իրենց նախընտրած խաղողն ու գինին մշակել եւ դինովնալ իրենց իսկ թոյներով: Եթէ կ'ուզեն անպայմանօրէն եռսամուլութեամբ դինովնալ, ապիտեք շատ կան այս աշխարհի վրայ, ինչպէս, օրինակ, օտար գրականութեանց այդիները, որոնց հնձաններուն մէջ վտառահար կըրնան միայն ինդուսիլ: Դժբախտաբար այս է ցաւալի իրականութիւնը. այլապէս հայ գրականութիւնը պիտի չուզէին պատուել իրենց միտքին խեղճութեամբը: Ի՞նչ կարելի է ընել սակայն, երբ «եպիկայան» Սփիւռքէն մնա, ար ամէն ինչ կարելի է, ամէն ինչ թոյլատրելի ու թոյլատրուած: Բաւերը իրն են դարձեալ: Համոզուած՝ թէ ուրիշ ո՛չ մէկ գրականութիւն պիտի թոյլատրէ իրենց այս սանձարձակութիւնը, մարդիկ որոշած են ծառայել հայ գրականութեան, որուն հասցէին կը հայհոյեն տիւ եւ դիշեր: Եւ այս կերպով կ'ունենանք հայերէն լեզուի ու հայ գրականութեան պաշտպանութիւն: Օտար այդիներու մոլախոտը չփոթեցնով ցորենի հետ, կը քաղեն դայն ու չկարեքենալով իբրեւ դեղ կամ բալասան պարտադրել նոյն օտարներուն, իրենց երեւակայութեան մէջ այս մոլախոտը վերածած թանկագին դոհարներու, կ'ուզեն անպայման վաճառել դայն մեղի:

Մեր համալսարանական տիտղոս մը ունեցած ըլլալը դժկամութեամբ ընդունելով հանդերձ, Մարկ Նշանեան ճիշդակ զարգացուցի տէր անձ մը կը նկատէ մեզ: Բայց որպէս քննադատ իրմէ կ'անկախուէր գէթ, որ հեղինակի մը գրականութիւնը դատէր եւ ոչ թէ իր կանխակալ կարծիքը հաստատելու մտադրանքով՝ անոր ուսումը խնդրոյ տալու կայ դարձնէր: Ինչ կը վերաբերի մեզի, համալսարանական ուսումնաւորն ու տիտղոս

ներքեր երեքն նշանակութիւն չեն ունեցած, մանաւանդ զրականութեան պարագային, որովհետեւ մեր ըմբռնումով տիտղոսները չեն, որ մարդը կ'արեւելեորեն կամ կ'ստեղծեան զայն որոշ կողորդութիւններով: Ի միջի այլոց՝ նաեւ մե՛ր ուսումն ու տիտղոսը, նկատելով, որ տարիներու ընթացքին ճանչցած ենք թագաձաթիւ համարանաւարտ ու տիտղոսաւոր երանելիներ, որոնք միայն որոշակաբար ըլլած են մեզ, Ու Մարկ Նշանեանը նաեւ՝ չենք դատեր իր համալսարանական տիտղոսներ ունենալուն կտմ չունենալուն համար. առիկա ո՛չ մեզ կը հնազանդէր են ոչ ալ կըրէս մեր վրայ ժխտական կամ դրական .սոցաւորութիւն թողուլ: Ատիկա հարց մըն է, որ իրեն կը հերքանք իւր եւ, ըստ երեւութիւն, զինք Թորոնտայէն կը ապակայնէ կամ կը մեծցնէ՝ ինչն իր երեւակայութեան մէջ: Այլ՝ հարկադրուած ենք լատեղ Մարկ Նշանեան քննադատաբար կամ դէժ մտաւորականը, չիմտելով միայն ու միայն իր գաւառով լծակած ու անպակայնա կերպի վրայ: Եւ այդ դրականութեան եւ դրական քննադատութեան սիրտին, եւ ոչ թէ Գէորգ Անճմեանի դրական կամ քննադատական գործը պաշտպանելու մտահոգութեամբ: Ծաղի՜ ոչ մէկ առիթով պաշտպանած ենք մեր գործը, որովհետեւ կը հաւատանք, թէ Հեղինակ մը պէտք չէ պաշտպանէ իր դրականութիւնը, ինքզինք (այսինքն՝ իր անմեղ) պաշտպանելու իրաւունք ունենալով հանգերմ: Ի վերջոյ՝ իսկական դրականութիւնը պաշտպանութեան պէտք չունի. ինքզինք իր պաշտպանէ ու նաեւ իր պարտքերը, եթէ արժէք ունի անպաշտան: Եւ հետեւաբար, մեր կամ Նշանեանի կողմիցը, մամանակի ընթացքին, ոչինչ պիտի փոխէ անոր արժէքն եւ, մանաւանդ՝ արժեւորումէն:

Այս մասը՝ երբեւ միջանկեւել ճշդ-
դում: Կարեւորը այս պարսպաշին մարի
Նաեմանի քանադատելու եղանակը քնն-
նորդելին է, որպէսզի գաղափարը ու-
նենանք այս եւր քննարարութեան բուն
նպատակին մասին: Ուրեմն՝ մեզ համար
քանադատելու ուսումն ցուցին ետք, երբ
վստահ է այնեւ, թէ զոգնու մարդուն մը

Հետ է դարձը (մտային իր հանաքարտա-
թիւնի համար հաւանաբար), կը յայտա-
բարէ անմիջապէս, թէ մենք գտեսական
բառեր իմաստը չենք կրնար հասկնալ, ու
հաստատուող համար իր վճիռը, մեզմէ
մէջերէ յայտէս — «... Տեսակետը տե-
սական բնայք ունի միշտ», փոխանակ
մէջերէն ու ամբողջ նախադասութիւնը,
որ է. — «Իսկ տեսակետը տեսալան բը-
նայք ունի միշտ, միկնու ար փաստերով
հաստատուի»։ Նախադասութիւնը իր ամ-
բողջութիւնը մէջ յայտէս եւ հաստատա-
կելուած իմաստ մը ունի տնչուշտ, որ կը
պայտանադէր տեսականին վերջնական
արգելուումը փաստերով հաստատուող։
Բայց նկատելով, որ ամբողջական ու հա-
րազատ մէջերում էր իր նպատակին չի
ծառայող, ալլ, ընդհանրապէս, կտանի
էր բեկանէ իր կտորիակ ու քանակ մը
հիւր, քննադատել իրեն յատուկ պարկեշ-
տութեամբ մը զանց կ'առնէ նախադասու-
թիւնի վերջին եւ էական որպէս։ Եւ հարցը
լուծած կը համարէ, որպէսզի առանց
ստանալի կ'արեւելնու հիմնաւոր մեկն-
դէմ բանադրածը՝ հետեւեալ բառերով —
«Երբ չէի կրնար կսալ չէի ուզեր փաստաբ-
կել, ձեր գրածը կ'ըլլայ տեսական։ Բայց
այն առեւ ինչի՞» վրայ հիմնէի ձեր կար-
ծիքս։

Ինչպէ՞ս կ'ուզէք, որ մեկնենք նմա-
նորինակ խեղաթիւրուած մը, երբ զնմա-
քստոր մեզմէ փաստարկութիւն կը պա-
հանջին՝ տուեալ նախագաւառութիւնը իր իսկ
փաստը պայմանադրող Հատուածէն զրկե-
լէ և ոք :

Բայց շինե ուզեք էր օրինակին հե-
տևելով՝ անհոծին ենթադրութիւններ
ենէլ, նկատելով, որ կըրնա բազմաթիւ
պատճառներ ունենցած լրջով մեր ըսածը
խնայաթիւրելու համար: Եւ ուրեմն՝ ըն-
թերցողին կը թողունք մեկնութիւնը: Ճա-
նապէհեցէ հւ. առեցէ, դի... հնարամիտ է
մեր քննադատը:

Բայց այսպեսով չի դոճանար: «Փաս-
տած» ըլլալէ ետք, թէ տեսական բառին
խմաստը չհնք հասկնար, կը սկսի հեղմա-
խառն մոլորեցող խորատկ սեղի: —
«Յայտնանաւորեանք վրայ իրմնօտեղը ոչ
միայն տեղէ չունի փառտի եւ փաստաբ-

կումի, այլևս պետք չունի ուրիշ հեղինակներու իսկ յղուելու, քանի որ ամեն ինչ իր անձնական խորհրդէն կը հասնէ: Ինքնեւ համար իմացական ամանդարին, իմացական աշխարհ գոյութիւն չունին: Պէտք չունի կարգաւոր, ուրիշներէ քանակ աշխատելու, հայն մարգերուն մէջ աշխատող հեղինակներու գործերուն վրայ հիմնուելու, քանի որ իր յայտնատեսութիւնը տեսած է արդէն իսկ քննարկութիւն առարկային բոլոր երեսները, ու գտնուեալ գիտել նկարագրել մեզիս:

Ըստ երեւոյթին, Մարկ Նշանեան ինքզինք նկատի ունի՝ իբրեւ նոյն մարդին մէջ աշխատող հեղինակ, եւ ուրեմն՝ իրեն պէտք է գիտէինք Վերջիններէ բաներ սորվելու: Համար: Այս ամբողջը, բնական է, կը թելադրէ մեզի՝ հեղինակ մը: Եւ, որուն համար կը յայտնենք մեր շնորհակալութիւնը, բայց եւ այնպէս կը նախընտրենք պէտք մնալ եւ իրմէ չսորվել: Եւ հեղինակներու անտոյթիւնները, զորս հասկնալու կամ գէթ ընդունելու գիտնալութիւն ունի վստահարար: Յետեւանդէպ, ինք աւելի լաւ պէտք է գիտնայ պատմաւորները:

Սակայն որոշած ըլլալով անպայմանօրէն մեզի բերներ սորվեցնելու՝ Նշանեան կը սկսի բառեր շարել իրարու քով ու պնդել, որ հասկնանք իր իսկ չհասկնացածը: Անկեղծ ըլլալու համար խոստովանինք, թէ իր գործածած հայերէնը հասկնալու կարողութիւնը կը պակսի մեզի, ու երբեմն կը կասկածինք նոյնիսկ, թէ որոշ բառերու իմաստը ճշգրիտ կերպով կ'ըմբռնէ: Օտանցանք իրը չէ թեւատել, որ հայերէն լեզուն նոր սորվելու սկսած է ան (փակագիրք մը բանալով՝ յայտնենք, թէ կը գնահատենք իր հայերէն սորվելու ճիշդ ու վճռականութիւնը), եւ հայերէն լեզուի նորութիւններուն բաւարար չափով ծանօթ չէ տակաւին: Բայց եւ այնպէս, եթէ չափի եւ կշիռի գիտակցութիւն ունենար, պիտի խնայէր ինքնիրեն հայ գրողներուն հայերէն սորվեցնելու յոգնութիւնը: Դո՛ւք որոշեցէք, կը խնդրենք, ուրիշ է՝նչ կերպ բացատրենք իր հետեւեալ նախադասութիւնը. — «Այս ձեռքով հիմնուեցաւ անա գիտական քըմ-

նադատութիւն մը: Գիտական քառը ի՞նչ գործ ունի հաս, նկատելով, որ իր միտքին մէջ հայերէն գիտական քառը կը համապատասխանէ scientifiqueին, կ'արդիւնէ մեզի գիտութիւն բառին գործածութիւնը, տեսնոյ գաղափար իսկ ունենալու, թէ հայերէնի մէջ գիտութիւնը միայն science չի նշանակեր: Այլ հարց, թէ խնդրոյ առարկայ մեր նախադասութիւնը խեղաթիւրուած կերպով կը մէջբերէ, ըստ իր արդեգրած եղանակին: Բայց պէտք է անպայմանօրէն հաստատել մեր ազգայնութիւնը (այս առիթով պիտի ուղենք հարց տալ Նշանեանին, թէ արդիւնութիւնն ալ արդեօք scienceի ճիշդ մըն է), որպէսզի անկաշկանդ կերպով թուելու սկսի իր այնքան սիրած գոյացութիւնը, գիտէ՞ք, «հայերէն», «հայերէն» բառերը: Ըստ իրեն, «այդ քառերը կամ տակալն հայերէնի մէջ, մըտածուած են, աշխատուած են, գործածուած են»: Հետեւի ալ բառերուն գործածուած ըլլալու փաստը գէթ այսօր տանինք շնորհիւ Նշանեանի, եւ այս ընդունելով հանդերձ, կ'ուզենք խորհրդապահարար յիշեցնել իրեն, թէ այս բառերը «աշխատուած» են, ճիշդ է (եթէ անշուշտ «աշխատուած» բառին իմաստը գիտէ), եւ այդ իսկ պատճառով հայերէնի պարագային գէթ կը մնան իմաստէ զուրկ: Նորափետուր հայագէտը փոխանակ բառակերտութեամբ զբաղելու, կրնար աւելի օգտակար աշխատանքի մը լծուիլ եւ հայերէնի մէջ գոյութեան իրաւունքը ըստացած եւ արդէն իսկ նշանակութիւն ունեցող բառերուն ճիշդ իմաստը սորվիլ: Այս բառերէն մէկն է նոյն գոյութիւնը բառը, որ, ըստ երեւոյթին, իրեն համար օահմանափակ նշանակութիւն մը ունի, եւ ուրեմն՝ կը նախընտրէ պարտադրել մեզի գոյացութիւնը: Պահ մը հետեւինք իրեն եւ փորձենք որդեգրել իր այս գործածութենէ գաղափարը (որ ապահով կերպով թաղուած կը մնայ բառարաններուն մէջ), բայց հարց տանք նաեւ իրեն, թէ ի՞նչ կերպով կը զանազանէ մէկը միւսին: «Գոյացութիւն»ը ի՞նչ կ'աւելցնէ գոյութիւնը իմացութիւնի վրայ, ի՞նչ կը փոխէ, Գոյութիւն ունեցած ըլլալու տը-

հալ իրականութիւնը ըսել կ'ուզէ արդեօք, եթէ Թնճուկը ֆրանսերէն մը տանելու հարցն է դարձեալ, խոսք չունինք։ existerence կրնայ իր ուզածին պէս ըմբռնել, սակայն պէտք է ըմբռնէ նաեւ, թէ գոյութիւնը բառը հայերէնի մէջ շատ յատկ իմաստ ունի եւ մեկնութեան չի կարօտիր։ Յամենայնդէպը, իր այս անգիրտութիւնը տգիտութեան (ա'խ, այս գիտութիւն բառը) չգիտաբարձը, այլ՝ հնարամտութեան։ Որովհետեւ Մարկ Նշանեան, որ նախադասութիւններ եւ նոյնիսկ պարբերութիւններ խեղաթիւրելու մասնագէտ դարձած է, պէտք ունի այս շփոթին, որպէսզի կարենայ աղատորէն ճարել անիմաստութեան ուղղանքները մէջ։

Այսպէս... Եիմչպէ՞ս ժամանակը կրնայ գոյութիւն ունենալ, կամ չունենալ, որպէս «նշարտութիւն»։ Յստակ է, որ հոս «նշարտութիւն» չէ, որ կ'ուզէ ըսել, այլ՝ «գոյացութիւն»։ Այն տանն՝ հարցումը իմաստ մը կը ստանայ, այո՛, բայց կը դառնայ միեւնոյթ ժամանակ փիլիսոփայութեան խառնուրդն հարցումներէն մէկը։ Այս ուղղութիւնը իր կողմէ՝ յայտարարելու համար, թէ ինչ հմուտ է իմաստասիրական հարցերու մէջ եւ գիտէ, թէ ինչի մասին կը խօսինք, բայց... մենք չենք գիտեր։ Եւ կարծէք իր իմաստակ ըլլալը կրկնապէս փաստելու մտադրութեամբ, այս անգամ «նշարտութիւն» իմացումը կ'ուզէ փոխարինել իրեն այնքան սիրելի գոյացութիւնը բառով։ Կ'անգիտանայ, կամ հաւանաբար կ'ուզէ անգիտանալ, թէ հայերէնի մէջ «նշարտութիւն» բառը իմաստասիրական տառումով մէկ եւ շատ յատկ իմաստ մը ունի։ Եւ տեղին է իրեն յիշեցնել որեւէ, թէ մինչ կարելի է պարզ ընթերցողին կլլեցնել բառերու վրայ կատարուած նմանօրինակ անպարտութիւն մը, յաջո իմաստասիրութեան ուսանողին՝ Երեւանի կը դառնայ միայն։

Իսկ ինչո՞ւ կը ղիմէ այս լարսադասութեան, բնականաբար հարց պիտի տայ պարզ ու միամիտ ընթերցողը։

Փորձենք մէնք պատասխանել հարցումին։ Պարզօրէն որովհետեւ մենք տեղ

մը հարց դրած ենք, եթէ ժամանակը գոյութիւն ունի՞ որպէս ճշմարտութիւն։ Ըստ երեւոյթին, մեծագոյն մեղքը դրածած ենք՝ համարձակելով իր «կատարածէն» ներս մտնելով իմաստասիրական հարց մը արծարծել։ Արտօնուած չէ մեզի, երբեք, իմաստասիրական հարցադրումներ ընել գեղապիտութեան, գեղարւեստական գրականութեան կամ գրական տեսութիւններու մասին խօսած ատեն։ Իսկ ինչո՞ւ։ Պատասխանը ինք թող տայ։

Եիմչ որ ազգային անմտօրութիւն կը գտնուի, այն է որ հեղինակ մը գոյ յորդոր կարգալու, վնիւ տրամեկու, կեղծ փիլիսոփայութիւն խաղալու, գրականութեան տեսարանութիւն փորձելու, ասանց տեղ մը փառաք տալու որ այդ բոլոր մարդերու մէջ՝ ուղ մը կարողացած ըլլայ որեւէ հեղինակ մը, հայ թէ օտար։ Հա՛յ կ'ուզէ։ Երբ երկրորդ հասարակ գրութիւնները մտաւել կը յանձնաւոր, Անհանը տաք տարիէ ի վեր տարած աւանգած էր, Յ. Օշականի եկայածուաւ գործը հրապարակի վրայ էր, վէպ թէ գրականութեան պատմութիւն, Ռեալիզմի իր մեծ վէպերը տուած էր։ Այս բոլորը մարդու ինչիկ մը գոստութիւն ցէտէ կ'ընէ լաղրիկն։ Բայց Գ. Անեմեմի ճաշատոմը այնքան սեւեռած կը մնայ իր անմարդկան միջավայրին վրայ, այնքան կուրացած է այդ միջավայրին արտագրած գաղափարային այլաւերժութիւնը, որ օչիկ կը տեսնէ, ոչի՛նչ կը տարվի մտաւանդ։

Դեռ աւելին, թէ մը տեղին։

«Ձեզմէ հայերը։ Օտար կ'ուզէ։ Բայց չկայ տարվելի անոցմէ։ Անուսիկ մէկը որ իտեպապաշտ գեղագիտութիւն կը հրամսնէ մեզի ու մէկդի ձգելով դեռ արարէին սպայծմէութիւնը՝ ասոյ մը, բառ մը իսկ չէ կարգացած գեղագիտութիւն քուած մարգին մէջ, ո՛չ անցեսուէն, ո՛չ ալ իր ժամանակակիցներէն։ Գրականութեան տեսարանութիւնը կ'ընէ, ու բացարձակապէս անմտօր եւ իրեն այդ մարգին մէջ աշխարհի երեսին կատարուածները, անցեալէն թէ ներկայէն։

Փաստաբանելու, չգոյ փաստերով զը

մահան հզրակացութիւններու յանգեալու նոր հղանակ մըն է այս մէկը, պէտք է ընդունիլ: Արդարեւ, խօսողը պատահական անձ մը չէ, այլ ներշնչեալ մարդու ընտրած է, որ իր յայտարարածը փաստելու պէտք չունի, որովհետեւ ան կը մարգարէական՝ աստուածատու իր շնորհներուն վստահած: Այո՛, ասիկա «յայտնատեսութիւն» իսկ չէ, այլ՝ լոկ մարգարէութիւն: Ինչ կարելի է ընել, մարդը որոշած է հայ գրականութեան ծառայել եւ արդէն իսկ ինքզինք կը նկատէ մեր անպնայան միակ քննադատը: Փա՛ստ կ'ուզէք: Յ. Օշականի ճշմարտականքը ներու շարքին մասին չէ՞ք լսած: Ինք ո՛չ միայն լսած է, այլեւ կարգացած, կատարած շունչներ: Ըստ երեւոյթին, միւս բոլոր հայ գրողները յիստէն տարուան ընթացքին առիթ չեն ունեցած Յ. Օշական կարգալու, թերեւս նոյնիսկ չեն լսած անոր մասին: Ստիպուած էք ընդունիլ այս ճշմարտութիւնը, քանի որ Մարկ Նշանեանն է անբեկանելի այս վճիռը արժանաւորը՝ հիմնուելով միայն իրեն յատուկ հզրակացութիւններու յանգեալու արժանաւորութեան եղանակի մը վրայ: Թերեւս «յայտնատեսութիւն» է եղածը, որ ձեզի մատչելի չէ անշուշտ: Իայց ո՛չ, «յայտնատեսութիւն» բառը, զոր այնքան հաճողով ու բազմաթիւ անգամներ կը գործածէ (չփոխելով հաւանաբար intuition կոչուածը հայերէն տեղին հետ), մեզի վերապահած է, հաստատելու համար իսրեն այնքա՛ն անհրաժեշտ վարկածը, թէ՛ մենք տեսական հարցերու մասին արտաստուելու պէտք եղած պատրաստութիւնը չունինք, եւ ուրեմն՝ ըստ իրեն, տեսութիւններ կը բանաձեւենք՝ լոկ ենթակայական եւ անհիմն վերլուծումներ կատարելով: Եւ խեղճը այնքան ճշգրտեցանք է, որ չ'անդրադառնար, թէ իր կատարած գրադարձութիւնը (անհիմն եւ անճշդ վերադրումներ ընելը ուրիշ ինչ կերպով պէտք է ընդունել) հիմնաւորելու համար, կը հարկադրուի մեզմէ կատարած բոլոր մէջբերումները խեղաթիւրել ու, հարկ եղած պարագային՝ նոյնիսկ նենդափոխել: Մէկ կամ երկու նմոյշ աւելնէ՛ք: Ահամայն կերպով երկարող

այս գրութիւնը ճանճրացուցիչ դարձնելու գնով օրինակ մը եւս տանք սակայն, ինք այսպէս կը մէջբերէ.

«Աղբկայ մը գոյութիւնը որպէս շունչի գոյութիւնը նշմարիտ է. միջոցաւ անոր գեղեցկութիւնը անսահման գոյութիւն մըն է՝ անկախ անոր անարկայական գոյութենէն...: Որպէս գեղեցիկ ազդիկ, անոր գեղեցկութիւնն է, որ իր եերթիմ կը նոյնանայ նշմարտութեան»:

Միջոցաւ ինքորոյ առարկայ պարեմութենէն օգտագործուած հաստատել, զոր ուզածին պէս անդամահատած է, հետեւեալն է.

«Աղբկայ մը գոյութիւնը որպէս շունչի էակ եւ անարկայական, շօշափելի գոյութիւնը նշմարիտ է. միջոցաւ անոր գեղեցկութիւնը անսահման գոյութիւն մըն է՝ անկախ անոր անարկայական գոյութենէն: Եւ ուրեմն՝ երկուքը տարբեր են իրարմ: Որպէս գեղեցիկ ազդիկ, անոր գեղեցկութիւնն է, որ իր եերթիմ կը նոյնանայ նշմարտութեան ու մաս կը կազմէ անոր»:

Նուագագոյն չափով իսկ հասկացողութիւն ունեցող մարդուն համար պէտք է յատակ ըլլայ, թէ ան ինչ կը փորձէ կատարել: Նախադասութիւններու մէջ ճշգրիտ տեղ, զեր եւ իմաստ ունեցող բաներ վերցնելով, պարբերութեան ամբողջ միտքը կը խախտէ, ԼԹէ չ'աջողի իսկ հիմնովին խեղաթիւրել զայն: Եւ յետոյ՝ կը մէջբերէ իր նենդափոխածը իրրեւ մե՛ք գրածը, որ, բնական է, սխալ տպաւորութիւն կը թողու ընթերցողին վրայ: Ո՛չ, ասիկա յայտնատեսութեան հետեւանք չի՛ կրնար ըլլալ. այլ միայն՝ նենդափոխութեան, որ քննադատի մը վայել ընթացք չէ:

Կ'ակնկալուէք դէ՞ք, որ Յակոբ Օշականի վստահական կոթնիլ ուզող Մարկ Նշանեանը քննադատական պարկեշտութիւն ուրիշ ըլլար անկէ: Խնդրական կը մնայ թէ՛ եւ, թէ ընդհանրապէս ինչ կըրոջած է հասկնալ Օշականի ճշմարտատեսականութիւնը, որուն միտքին եւ ոգիին չէ կըրոյած թափանցել, վստահ ենք, մեկնելով մեր գրականութեան եւ ճշկոյթի ներկատմաբ որդեգրած իր ժխտական կեց-

առժեշտ է ինքզինք իրրեւ ըննադատ պարտադրելու ժամանակը աշխատանքի մոտեցնած է իր մէջ, որ չլապատը չի կրնար տեսնել այլեւս. իրմէ դուրս դրող, ըննադատ, գրականութիւն չկայ, չէ՛ հզած ու պիտի չըլլա՞յ երբեք: Մարմանն է, որ զինք կը մղէ եւ, բնականաբար, այդ զգոտւած վիճակին մէջ չ'անդրադառնար իսկ, թէ իր թեզը կը տկարացնէ՝ Յ. Օշականին ետեւը պահուելով: Օշականի գրական եւ ըննադատական վաստակը, իր աստուելութիւններով եւ խոցելի կողմերով, կը ներկայացնէ ու կը պաշտպանէ այն ամէնը, որու դէմ է Մարկ Նշանեան իր Հոգեխառնութեամբ: Օշականի ըննադատութիւնը մանաւանդ, գրական ու գեղարուեստական յատկ եւ առողջ ըմբռնումներու վրայ Հիմնուած ըլլալով հանդերձ, հայկական է ամէն կերպով՝ ուղիով, շունչով, արեւելումով, էութեամբ: Ազգային է՝ եթէ կ'ուզէք: Մինչդեռ Նշանեան՝ ժողովրդականով, դաստիարակութեամբ, մեծամտութեամբ ու հայ մշակութիւն եւ արժէքներու նկատմամբ անեցած արհամարհանքով՝ վերէն կը դիտէ հայկական ամէն ինչ — արժէք, մշակոյթ, գրականութիւն — ու չ'ընդունիր այս բոլորը: Իրեն համար ընդունելի են միայն օտարներէն յապաղումով ընդօրինակուած դրականութիւնն ու գեղարուեստական ըմբռնումները: Հոգ չէ, թէ ասոնք օտարներուն համար իսկ Հինցած եւ Ժամանակավրէպ ըլլան: Բայց եւ այնպէս, իրեն համար հայ գրողը (նկատի ունի անշուշտ այն գրողները, որոնք իր գեղարուեստ գրականութիւնը չեն մշակեր, եւ ամէնէն ընդգիշտութիւն՝ կը ստեղծագործեն հայկական միջավայրի մէջ) գայմաքան կտրացած է այդ միջավայրիմ արտադրած այլամիքաբանէն, սր աչիմ: Կը տեսնէ, աչիմ: Կը տարվի մաքաւանք:

Հարց է, թէ ո՞վ է այլամերժը այս պարագային:

Հայ գրողը հայկական մշակութիւն եւ արժէքներուն կառնած մնալով, եւ ինչո՞ւ չէ՞ պահպանելով նաեւ զանոնք, այլամերժ կը դառնայ արդեօք:

Օտարները իրենց մշակոյթն ու ար-

ժէքները չեն պահպաներ, չեն պաշտպաներ:

Այնքան մը՝ որ Մարկ Նշանեաններ իր զինուորագրեն նոյն նպատակին համար, որպէսզի փառաւորութիւն ու յաղթանակի իրենց մշակոյթը միայն՝ Հոգ չէ երբեմն անարժէք ըլլայ եւ, մանաւանդ՝ մեզի համար վնասակար: Ստորակայութեան ի՞նչ բարդոյթ է ասիկա: Պէտք չէ այլամերժ ըլլալ, տալովութիւն չունինք. բայց ինչո՞ւ մերժել (ու ո՞չ միայն մերժել, այլեւ՝ ուրանալ) մեր: Ուրանալ մեր միջավայրը, մեր կեանքը, պայմանները, իրականութիւնը, արժէքները, բարքերը, բարոյականը, մշակոյթը, գրական-գեղարուեստական աստուելութիւններն ու ըմբռնումները: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր միջավայրը խո՞րթ կը թուի իրեն: Ասոր մէջ հայութիւնը ի՞նչ յանցանք ունի: Պատահած է, որ ինք Յոսեփ Ժամէն է, մեծցած ու դաստիարակուած եւ, Հետեւաբար, հայկական միջավայրը խորթ կը թուի իրեն, որովհետեւ ինք հարապատ չի դրար: Կարելի չէ եւ կը մերժենք զինք մեղադրել ասոր համար, նկատելով, որ ինք զո՞ւ մըն է այս պարագային: Եւ՝ եթէ նոյնիկ մեր պատմութիւնը կամ ճակատագիրը մեղադրելու իրաւունք ունիք իրեն, մեր միջավայրն ու բարքերը (լաւ կամ դէ՞), արժէքներն ու ըմբռնումները գրեթէ ինչ կը փաստէ: Կը խորհի արդեօք, թէ իրականութենէն բա՛ն մը փոխուած կ'ըլլայ: Դժբախտաբար՝ ո՛չ: Տօ՛ւալ իրականութիւն մը՝ լոկ ուրանալով, չենք կրնար փոխել: Իրականութիւնը կը մնայ այնպէս՝ ինչպէս որ է, մինչեւ որ յեղաշրջենք զայն: Գոյն ընդունելով (որպէսզի ընթանինք դուրս աւազին մէջ խորդ թռչունին), վերջութեամբ, լաւն ու վատը զանազանելով, ու՝ պէտք եղածը (այն՝ որ արժէքաւոր է կամ օգտակար) պահպանելով հանդերձ, անպէտքը թափելով: Ասիկա ետք միայն կրնանք օտարներէն առնել պէտք եղածը, եւ ոչ թէ անպէտքը, արմինքն՝ անոնց միտքի թափութիւնները: Եւ յետոյ, անշուշտ, Յակոբ Օշականի մասին մեզի դաստիարակութիւն կը կար-

դայ: Թէեւ ամբողջ ըսել ուղածը այն է, թէ ինք Օլական կարդացած է: Եւ քանի որ ինք ծանօթ է Օլականի գործին, ատկաւ համոզիչ փաստ կը նկատէ որոշելու, թէ մենք ծանօթ չենք: Տրամաբանելու իւրայատուկ եղանակ մըն է, անտարակոյս, որ մտածել կու տայ այս քննադատութեան չափանիշներուն եւ որակին մասին: Ու սակայն նոյն տրամաբանութեամբ կ'նկարկացնէ նաեւ, թէ տող մը կարդացած չենք ոեւէ հեղինակէ (եւ ասիկա ընդգծուած), հայ թէ օտար: Ձիւք հերքելու պէտք ունի՞նք: Ձեռք խորհրդ: Այն քննադատը, որ կը մերժէ իր քննարկած գործին մէջ տուեալ հեղինակին (այս պարագային՝ մեր) արժարժած նիւթերուն մասին ունեցած ծանօթութիւնը ընդունիլ, հերքուելու արժանի չէ: Ինքզինք կը հերքէ արդէն: Կ'անդադարանայ անշուշտ, կը հաստատէ, թէ հեղինակը անհրաժեշտ հմտութիւնը (ու ոչ միայն ծանօթութիւնը) ունի, փաստ՝ որ կը հարկադրուի բոլոր մէջբերումները, առանց քայքայութեան, նենգափոխելու: Այն իրականութիւնը, թէ մեր վերլուծումներն ու դատումները հիմնուած են տուեալ մարդին մէջ (չնկադիտութիւն, իմաստասիրութիւն, եւ այլն) մասնազիտական գիտելիքներու վրայ, զինք կ'անհանգստացնէ ու կը մատնէ անել կացութեան: Արդարեւ, կանխաւ որոշած է ան մեզ անաղ-ղանքի սինիին դամել եւ ոչ թէ մեր գործը դատել, որ քննադատութենէն բոլորովին տարբեր մասնազիտութիւն է: Այլապէս, զիտակէց մարդը, այլ մա՛նաւանդ քննադատը, նմանօրինակ ծիծաղելի յայտարարութիւններ պիտի չընէր: Մեր տեսակէտներն ու դատումները հերքելու համար պէտք է քննարկէր, վերլուծէր եւ եզրակացութիւնները հիմնէր փաստերու վրայ, եւ ոչ թէ քմահաճօրէն յայտարարէր, թէ տող իսկ չենք կարդացած գոր-եւէ հեղինակէ մը: Միծաղելի չէ՞: Բայց աւելի՛ խղճալի: Ո՛չ միայն յայտարարութիւնը, այլեւ՝ գործածուած հայերէնը: Յաճախ զգուշացու, եթէ Մարկ Նշանեան եւ իրեն պէս տրամաբանող ու դատող «մատուցականներ» կ'ուզեն անպար-մանօրէն գրել, քննադատել ու, մա՛նա-

ւանդ՝ կարծիք արտայայտել, կը յանձնարարենք իրենց, որ վստահին իրենք իրենց եւ իրենց սեփական տեսակէտնե-րուն (եթէ ունին) ու տեղի եւ անտեղի կերպով մեղիները վկայութեան չէնչեն՝ իրենց չափազանցուելիք թեզերը պաշտպանել տալու համար: Ոչ ոք իրաւունք ունի, օրինակ, Ջարեհ Որբունիի նման բարի ու միամիտ հայ դրողի մը բարեկամութիւնը քանի մը տարի վայելելէ ետք, անոր գրականութիւնն ու վստա-կը չահագործել՝ անմական փառաբա-րութեանց դո՛ւացում առլու նպատակով: Եթէ դո՛ւք գրելիք կամ ըսելիք ունիք, ձեր գրականութիւնը գրեցէք եւ յայտ-նեցէք մեր տեսակէտը: Որբունի գրական-նութեան եւ գրական սեռերու մասին յը-տակ տեսակէտներ ունէր (ո՛չ անպար-մանօրէն ինքնատիպ եւ իւրայատուկ) ու փորձեց ամբողջ կենսաբն ընթացքին հա-ւատարիմ մնալ անոնց, առանց յուսահա-տելու աքեցաւ, ծրագրեց ու խօսեցաւ ճշայնութեամբ շարքին մասին ու, ե-րեսուն տարուան ընդմիջումէ մը ետք, երբ փորձեց ի վերջոյ ամբողջացնել շար-քը այնպէս՝ ինչպէս ինք ծրագրած էր ու նախատեսած, ճախողեցաւ: Ասիկա մեր խոնարհ, բայց անկեղծ կարծիքն է Որ-բունիի ճշայնութեամբ մասին, ու կ'արտայայտենք զայն առանց վերապա-հուիլեան: Մինչդեռ մեր քննադատը կը պահանջէ, որ Որբունիի նոյն գրականութիւնը իբրեւ վերլիսն ու միակ խօսք ըն-դունինք: Աւ ի դիտութիւն Մարկ Նշանեանին՝ յայտնենք, թէ իրմէ առաջ Որ-բունիին շատ աւելի մօտ եւ մտերիմ ե-ղած են բազմաթիւ հայ դրողներ, եւ ա-ռանց կարգին՝ նաեւ մենք, եւ այլադան առիթներով անձնապէս արտայայտած ենք հանգուցեալին՝ այս նոյն կարծիքը: Բայց Որբունի շատ աւելի քաջ էր ու լայն-նախուհ, քան իր գրականութիւնը դրա-մադրուի վերածող տեսաբանները, եւ զիտէր յարգել ու նոյնիսկ գնահատել զը-րող բարեկամներու կարծիքը՝ իր գործին մասին: Մինչդեռ Նշանեան որոշած է հա-ւատոյ հանգանակի վերածել ուրիշին գը-րական աւանդը եւ պարտադրել զայն թու-րբին՝ հակառակ անոնց կամքին եւ ու-

նեցած համագումարներուն: Վա՛յ անոր, որ կը համարձակի գրական տարբեր ճաշակ կամ համոզում ունենալ ու, մա՛նաւանդ՝ պաշտպանել այդ համոզումը կամ տեսա-կէտը: Անմիջապէս կը դատուի իբրեւ ճա-նքերէս», «անամօթ» եւ ճառափակ» խորա-ւերակ մը: Եթէ իրեն պէս իսկապէս սահ-մանափակ եւ այլամբար միտք մը ունե-նայինք եւ, ուրիշներուն տեսակէտները իրացանելով՝ վարդապետական մոլեռանդ քարոզչութիւն ընէինք, անպայմանօրէն պիտի նմանէինք իրեն ու պիտի ըլլայինք ո՛չ միայն ամբարտաւան ու լիբր, այլեւ՝ անկիրթ:

Բայց կը նախընտրենք, ինչպէս միշտ, մեր սեփական տեսակէտները ունենալ եւ արտայայտել, ուրիշներու գրածնե-րուն եւ մասնաւորօրէն իրազեկ դատ-նալէ ետքն իսկ: Այո՛, պարոն Նշանեան, «Հայուքիւնը օտարմանքիմ արվիլիք չու-նի» աշխատն ասեմ, որ ասոնց ըսածը, ա-յսինքն՝ «այս քայլըն մարտքիմ չեմ, ա՛յ մար միտք իր պարտնալիմ, եւ ա՛յ ալ մար ուղղութիւն կամ մտապարհ կը հար-թեմ»: Մեր ըսածը ա՛յս է եւ ոչ թէ մեր նախադասութիւններէն խեղաթիւրուած կերպով մէջբերուածը, զոր մեզի կը վե-րագրէս այս բառերով:— «Հայուքիւնը արվիլիք չունի»: Հայութիւնը անպայ-մանօրէն սորվելիք ունի միշտ, ինչպէս ամէն մարդ եւ ամէն ժողովուրդ, բայց ոչ՝ օտարներու միտքի թափթփուքէն եւ, մա՛նաւանդ՝ ո՛չ Նշանեաններու նման ստորագաւառութեան քարոզչութէ տառապող Հիւանդներէ: Մենք ամբողջական նախա-դասութիւններ կը գործածենք՝ յտակ եւ ճշգրիտ իմաստ տալու մեր բառերուն, մինչ ան հետեւողականօրէն եւ իր յոռի նպատակներուն յարմարող կերպով կը կրճատէ զանոնք՝ ընթերցողին միտքին մէջ շփոթ եւ նախադասութիւններու ըս-տեղծելու մտադրութեամբ: Ինչո՞ւ: Ծառ պարզ է եւ յստակ: Որոշած ըլլալով լաւ դատ մը տալ հայ զրոյի մը, որ համար-ձակած է ճարտարներէ կարգ մը հայ երե-տասարդներու սփիւռքահայ նոր մշակոյթ մը կերտելու միամտութիւնը (մեծամը-

տութիւնը չըսելու համար), միայն այս միջոցին կրնար դիմել: Որովհետեւ մեր զրոյին իսկական եւ աննախապաշար քն-նարկումը կրնար դժուարութիւններու եւ խճաճախտումի առաջնորդել զինք: Ան-կեղծ ըլլալու համար ըսենք, թէ երբ կը շփոթէ այդ գրութիւնը, Մարի Նշանեա-նը իբրեւ հայ քննադատ կամ տեսաբան պիտի չունէր մեզի համար, եւ ու-րեմն՝ չէինք կրնար զինք նկատի ու-նեցած ըլլալ: Ըստ երեւոյթին, օա-կայն, ինքնիրեն եւս կը պատշաճեցնէ մեր անտանձաւաշումը եւ կը մասնէ իր թա-կութիւնը՝ բարձրադասակ դնելով, թէ օտարներու միտքին թափթփուքով միայն կարելի է մշակոյթ կերտել:

Պիտի փափաքէնք, յամենայնդէպս, որ Նշանեաններ օտարներէն իսկապէս սորվին պէտք եղածը եւ, ասոր վրայ հիմ-նուելով՝ երբ եւ եթէ անհրաժեշտ ըլլայ, արտայայտեն իրենց տեսակէտը, բերեն իրենց նորութիւնը: Այդ պարագային ու միայն ա՛յդ պարագային, հայութիւնը կրնայ շնորհակալ ըլլալ եւ խնդրել իրենց՝ մէ, որ կերտեն այդ նոր մշակոյթը:

Մինչ այդ, մինչեւ պատահի «Բաշքը», պէտք է դէթ սորվին ճշդել իրենց սահ-մանները, եւ եթէ անպայմանօրէն կ'ու-ղին վաճառել իրենց միտքին գոհաբերը, այնք է նախադասութիւն տալ օտար-ներուն, որոնք վստահաբար պիտի թե-յագրեն իրենց վերադառնալ իրենց իսկու-թեան եւ ակունքներուն՝ նորութիւն բե-րելու համար միջադգային գրականու-թեան եւ մշակոյթին: Իսկ ամէնէն կարե-ւորը՝ կ'անհկալուի իրենցմէ, որ պատ-րանքներ չունենան երեք ու չեօրհին, թէ հայ գրականութիւնը անտէր ու ան-պաշտպան անդատան մըն է: Եթէ այդ-պէս կը խորհն, բացարձակապէս կը սը-խալին, ու կը թելադրուի իրենց, որ միանգամայն դիմէ համոզութիւն, թէ հայ գրականութիւնը ունի ի-դրականութիւն ու մշակոյթը անին ի-րենց մշտարթուն պահակները, որոնք կրնան զգաստութեան կոչել զիրենք եւ վերջ տալ իրենց սանձարձակութեան...

ԳԵՌՐԳ ԱՃԵՄԵԱՆ

Մ. Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն

ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻՆԱՄԱԿՆԵՐԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒՆ

Ա. ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

Ոնե է անձի նամակները կապուած են նրա կենսագրութեան հետ :
Հրաչեայ Աճառեանը եղել է մեր ժամանակների հայ բազմաժանանակ
լեզուաբաններից եւ բանասէրներից :

- 1876 Մարտի 8ին ծնունդ է Պոլսի Սամաթիա Նոր-Թաղում, հայրը եղել է հաս-
մեռած կողակար արհեստագործ, հոգացել է Յ հոգինոց ընտանիքին :
1889ին մտել է հանրայայտ կեդրոնական վարժարանը (թաղային տարրական
դպրոցն աւարտելուց յետոյ) : աշակերտել է գրող Սեփա Տէմիր-
ճրպաշեանին եւ նախկին Մխիթարեան, բանասէր Մատթիա Գա-
րուգաշեանին, 1840ին դասական գրաբարը յայտնաբերողներից :
1893-1894 ուսումնական տարում ուսուցիչ է Կեդրոնականի նախակրթարո-
նում եւ Գատը-գիւղի Արամեան վարժարանում :
1894-1896 ուսումնական տարում դասաւանդում է Կարինի Սանասարեան վար-
ժարանում, կազմում նրա հայերէն ձեռագրերի ցուցակը, որ ՀՀԹԹ-
դէս ամսօրեայն հրատարակում է 1896ին :
1896-1897 Թ.թ. Փարիզում հետեւում է ընդհանուր եւ համեմատական լեզ-
ւաբանութեան դասընթացների, յատկապէս անուանի լեզուաբան
եւ հայագէտ Անտուան Մեյէին աշակերտելով : 1897ին, արեւելա-
գէտների 11րդ գիտաժողովում կարդում է հրկու սրբիկ զեկու-
ցում եւ արժանանում գերմանացի հայագէտ Հայրիխ Հիւբշմանի
աշակերտութեանը : Ընդունում է Փարիզի լեզուաբանական ընկե-
րութեան անդամ : Լեզուաբանական պարագմունքներն աւարտում
է, բայց համալսարանական վկայական չի ստանում :
1898 Թ. մէկ կիսամեակ լսում է Հ. Հիւբշմանի դասախօսութիւնները՝ (այն
ժամանակ գերմանական քաղաք) Սարաբուրգի համալսարանում :
1898-1902 ուսումնական տարիներին Փրանսերէն եւ Թուրքերէն է դասաւան-
դում ինքնաշին Գէորգեան ճեմարանում, հայերէն տաղարանե-
րից եւ զանաքաններից պատրաստում է իւր «Տաղարանը», որ
յետոյ նուրբել է Հ. Ն. Ալկինեանին :
1902-1904 ուսումնական տարիներին ուսուցիչ է (հաւանաբար Փրանսերէնի)
Շուշիի թեմական դպրոցում :
1904-1906 ուսումնական տարիներին (հրեւի) Փրանսերէն է դասաւանդում՝
Թուրքի Արամեան վարժարանում :
1906-1907 ուսումնական տարիներին՝ Նոր Ոսյազէտի ծխական դպրոցում :
1907-1918 ուսումնական տարիներին՝ Նոր Նախիջեւանի թեմական դպրո-
ցում :

- 1918ին Հայ կաթաւորների շարքում է Կարինի ազատագրման համար, բայց զինադադար է հռչակւում, նա ապաստանում է Պարսկաստան, Բաքուի կռիւներին մասնակցելուց յետոյ:
- 1918-1919 ուսումնական տարում դասաւանդում է՝ Թեհրանի Հայոց վարժաարանում:
- 1920-1923 ուսումնական տարիներին՝ Ընդհանուր կենսաբանական վարժարանում:
- Ամէնուրեք ապրուստի միջոց ուսուցչական աշխատանքին զուգընթաց հրատարակում է Հայերէնագիտական յոդուածներ եւ ուսումնասիրութիւններ Վենետիկում, Վիեննայում, Թիֆլիսում, Մոսկուայում, երբեմն էլ տեղում: Ամուսնանում է օրիորդ Արուսեակի հետ, որը նրան օղնէ է աշխատութիւնների մաքրագրութեամբ: Վաղամեռիկ:
- 1923 թ. Օգոստոսի 30ին, երկու տարուայ տատանումից յետոյ ընդունում է Երեւանի ժողովրդական (յետոյ՝ պետական) համալսարանի դասախօսական հրաւերը եւ մեկնում Երեւան, ուր մինչեւ մահը՝ 1963, դասաւանդելով Հայ լեզուաբանութիւն, Հայոց լեզուի պատմութիւն, պատմա-համեմատական քերականութիւն, Փրանսերէն, պարսկերէն. պատրաստել է լեզուաբաններ:
1925. ուսուցչապետ (պրոֆեսոր):
- 1926 Յունիսի 20ին մահանում է կինը՝ Արուսեակը:
1933. բանասիրական գիտութիւնների դոկտոր:
1936. գիտութեան վաստակաւոր դոկտոր:
1936. ամուսնանում է օրիորդ Սոֆիայի հետ, որը միշտ պուրջուբացել է նրա վրայ: Որդեգրում են մի փոքրիկ աղջկայ, Քնարիկ անունով:
1937. Չեխոսլովակիայի Գիտութիւնների ակադեմիայի թղթակից անդամ:
1943. Հայաստանի Նորաստեղծ Գիտութիւնների ակադեմիայի իսկական անդամ:
- 1953 թ. Ապրիլի 18ին մահանում է Երեւանում:

Հր. Աճառեանը ամբողջ կեանքում զգուշութեամբ խուսափել է ոեւէ մէկին վերաւորելուց անձնական կամ դիտական խնդրով, լինի՝ բանաւոր, լինի՝ պրաւոր: Առաւել մեծ զգուշութեամբ խուսափել է քաղաքական վէճերից: Այսուհանդերձ, Սով. Միութեան մէջ անհատի պաշտամունքի դաժան տարիներին նա ամիսներ շարունակ բանտում ենթարկուել է հարցաքննութեան եւ վերջապէս ազատ արձակուել, աւելի բախտաւոր լինելով Երեւանի համալսարանի որոշ դասախօսներից, որոնք զանհիմն կերպով ռեպրեսիայի են ենթարկուել, ինչպէս գրել է Լ. Գ. Ղարիբջանեանն իր «Երեւանի պետական համալսարանը» աշխատութեան մէջ (Երեւան, 1965): Գիտութեան մէջ նուազ մասակար էր Նիկ. Մատի «Լեզուի նոր աստիճան», որին, սակայն, ուրիշ լեզուաբանների հետ զուգ է դառնում Հր. Աճառեանը. նրան հետացնում են դասախօսական աշխատանքից մինչեւ այդ ուսումնքի վերացումը Մոսկուայից: Նրա պաշտօնական կենսագրականներում այս «մանրութիւն» մասին յիշատակութիւն չկայ ի հարկէ: Այսուհանդերձ, Հր. Աճառեանը միայն Երեւանում կառավարութեան կողմից լայն հնարաւորութիւններ ստացաւ իր «Երեւանի գործերը գրելու եւ հրատարակելու, ինչպիսին են՝ «Հայերէն արձակագոյն գործերը գրելու եւ հրատարակելու», «Հայոց լեզուի պատմութիւն», «Հայոց անմեղեմութեան», «Լիակատար քերականութիւն հայոց լեզուի», եւայլն, որոնք բազմաշաւտար աշխատութիւններ են եւ մնայուն արժէք ունեն:

Հր. Աճառեանն առանց հիւանդանոցու քնի մէջ վախճանուեց 1953 թ. Ապրիլի 16ի գիշերը: Այժմ նա անունն է կրում Գիւտութիւնների ակադեմիայի Լեզուի ինստիտուտը: Ինչպիսի՞ օրինակելի կեանք:

Բ. ՀՐ. ԱՃԱՌԵԱՆԻ ԱՅՍ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Մինչև 1923ին Ներսէսում հաստատուելը եւ գիտական լայն շրջանակ մտնելը, Հր. Աճառեանի կեանքն անցել է այնպիսի խուլ տեղերում, ուր չի եղել մէկը, որի հետ նա զրուցէր լեզուաբանական հարցերի շուրջ, չի եղել հայ կամ օտար լեզուաբանական դրժեր վաճառող դրախտութիւն: Ուստի՝ նա արտաքին գիտական աշխարհի հետ իր կապերը պահպանել է նամակագրութեամբ, ինչպէս վկայում են նրա դեռևս անտիպ եւ մասամբ անպաշտպան նամակները: Գրել է նաև Մխիթարեան երկու միաբանութիւններին, որոնք լոյս են բնծայել նրա աշխատութիւններն իրենց «Համդէտ ամսօրեայ» եւ «Բագմալի» պարբերականներում եւ առանձին գրքերով:

Ստորեւ ժամանակագրական կարգով հրատարակուող 27 նամակների ուղղութեամբ են եղել 1998ից առ 4 Նոյեմբեր 1936 Վիեննայի Մխիթարեան միաբանութեան հետեւեալ հայրերին.

1. Հ. Յակ. Տաշեանին, նամակ 1-2.
2. Հ. Թով. Կէտիկեանին, նամակ 3-6.
3. Հ. Հմ. Համբարեանին, նամակ 7-10.
4. Հ. Ն. Ակինեանին, նամակ 11-15, 18-23.
5. Հ. Ս. Մատիկեանին, նամակ 16.
6. Վիեննայի Մխիթարեան բոլոր հայրերին, նամակ 17.
7. «Համդէտ ամսօրեայ» անդակալ խմբագրին, նամակ 24:

Բոլոր նամակներն ինքնադրերը Վիեննայի Մխիթարեան վանքի դիւանում են, իւրաքանչիւր վարդապետի նամակագրութեանը յատկացուած առաջիկութեամբ: Արքայապետ Գր. Վ. Մանեանի սիրալոյս արտօնութեան ու գիւտնապետ Հ. Օղ. Սէքուլեանի անձնուէր օգնութեան եւ որոնումների շնորհիւ՝ հրատարակութեան նպատակով լուսապատճեններն աշխույ առկայ բնութիւնը մամուլին, սակայն որոշ նշաններ ցոյց են տալիս, որ ստացուած բոլոր նամակները չեն պահպանուել. առաջին, օրինակ՝ Հ. Ն. Ակինեանը էր «Հրաշ-հայ Ամառնան» յօդուածում մէջբերել է Փարիզից 1896ի Յունուարի 7/19ին գրուած մի նամակ, որին չհանդիպեցինք (ՀԱ, 1953, էջ 451): Նամակները հրատարակում ենք առանց որեւէ փոփոխութեան կամ կրճատման, յարգելով ուղղագրութիւնը, մեր մանր ծանօթագրութիւններով: Նամակներում բառաւորական կամ լեզուաբանական խնդիրներ չեն լուծուել, այլ գործնական, կենսագրական բնոյթ ունեն:

Յորին շնորհակալութիւն ենք յայտնում Վիեննայի Մխիթարեան միաբանութեան Արքայապետ Գր. Վ. Մանեանին եւ Հ. Օղ. Սէքուլեանին, որոնք ոչ միայն թոյլատրեցին հրապարակումը, այլեւ յանձն առին վերանայել մեր թերի լուսապատճեններից մի քանիսը: Երախտագրաւ ենք Մխիթարեան վանքին, որ անկորուստ է պահում զոչոչութիւնների գնով ձեռք բերած հայկական մասուէրները:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Ժընևի համալսարան

Ֆրանսիա, 4. 11. 1984 թ.

digitised by A.R.A.R.@

1. Հ. ՅԱԿՈԲՈՍ ՏԱՀԵԱՆԻՆ (1)

1.

Ստորագրող(2)

Բ յուլիս [18]98

Գերապատիւ Հայր,

Մեծաւ շնորհակալութեամբ լսելով այն համակրանքը զոր նուազատեմէն համար կը տածէք, համարձակեցայ ուղարկել Ձեր Գերապատուութեան մի օրինակ իմ դուզնաքեայ աշխատութենէս եւ ներկայ նամակով զընդորեւ ժխնդամայն Ձեզմէ բան ժը՝ որուն կատարման յուսով եմ թէ Նորին Գերապատուութիւնը քան զիս զնուազատ նախանձախնդիր է :

Յայտնի է Ձեզ որ ասկէ չորս տարի առաջ կարին(3) եղած ժամանակս պատրաստած էի Սանատարեան վարժարանի(4) ձեռագրացուցակը(5) որ յետոյ մաս մազ տպուեցաւ ի Հանդիսի(6) եւ որ այժմ եւս առանձին պիտի հրատարակուի ըստ Գեր. Հ. Գրիգորի(7) Գրայմքարեանի ինձ դրած առանձին մի նամակին — Բայց այդ ցուցակը պատրաստած ժամանակս չուենեալով հայ տառածիւերու անուանակոշութեան մասին այն ծանօթութիւն-

(1) Հ. Յակոբոս Տաշեան (1800-1893), քեզմաւոր եւ ակամաւոր բանասէր, Վիեննայի Միւլթարեան միաբանութիւնից. ելնէր ժխնի թուրքահայ հայրէն ձեռագրաց մասնագործին Միւլթարեանց ի Վիեննա, 1805, 1104 մեծագիր էլ, ցարք որ տեսնի մէջ չգործադրուած. «Полное русское издание книг и рукописей», 1920, 724 մեծագիր էլ եւ «Видный в науке и литературе русский ученый», 1893, 199 էլ, որով սկիզբ դրեց հայերէնի հնագրութեան: Մեծ եւ արժանի համարում է ժայիկի ժամանակի եւրոպացի աստղագիր լեզուաբանները եւ բանասէրները յիշատակում: Հռչակաւոր ֆրանսիացի հայագէտ Անտուան Միլլէն նրանից հայերէն եւ հայ հին գրականութեան է սովորել Վիեննայում 1890ի ժմբանք, 1891ի գարնանը այցելել է Քիֆիս եւ Հայաստան:

(2) Ծրանեսայի Ալլա եւ Լուէն (Երեւանում՝ Էլզա-Լոթարինգի) դասաները գերմանացիների կողմից գրառուել էին 1870ին (աղաատգրուել են 1918ին եւ 1946ին): Ստորագրողը Ալլայի մարտագրութեան է, վաղուց ունեցել է համալսարան: 1896ին աշխույ դասաւանդում էր իրանագէտ եւ անուանի հայագէտ գերմանացի լեզուաբան Հայնրիխ Հիւրշմանը (1848-1908): Հր. Անտոնեան նրա հետ ծանոթացել էր 1897ին Փարիզում, Արեւելագէտների 11-րդ գիտատնտեսում, ուր ինքն էլ կարգացել էր ինչպիսի երկու զեկուցում (արդէս Ա. Միլլէի աշակերտ) եւ արժանացել Հիւրշմանի ուղադրութեանը, որը նրան հրաւիրել է Ստրասբուրգ՝ իր դասախոսութիւնները լսելու: Հիւրշմանը Միլլէի հետ եղել է Հրաշխայ Անտոնեանի խորհրդատու եւ ցնդելը հայերէն ստուգաբանութիւնների կենտոն հարաքերում:

(3) Կարին համ իրգրում, մինչեւ 1915ը պատմական Հայաստանի հայալստ քաղաքներից. եղել է հայկական գրչութեան հիմնաւոր կենսորոն, ունեցել է ժապուիթային կեանք, մի քանի վարժարաններ:

(4) Սանատարեան վարժարանը լողել է Կարինի հայկական գրչոցներից մէկը, հիմնուելու առում է առաջարկում, Անտոնեան ցուցակ կազմել է 1896ի ամբողջ ապրիլի մեկ ժողովում, որ գոյացել է Նուբիապատութիւններից եւ զնումներից:

(5) Հր. Անտոնեան, «Յուսակ հայերէն ձեռագրաց Սանատարեան վարժարանի» ի Կարին, 1900, 37 մեծագիր էլ. նախ՝ յայն է տեսել Հիւրշմանը ամսօրնայում 1898, թ. 1-12-ին լողելու առում է առաջարկում, Անտոնեան ցուցակ կազմել է 1896ի ամբողջ ապրիլի մեկ ժողովում ուսանելու:

(6) Հիւրշմանը բոլոր նամակներում Վիեննայի Միւլթարեան միաբանութեան Հիւրշմանը ամսօրնայում հանրայայտ բանասիրական հանգիսն է, հիմնուած 1867ին, ամառից, ըստ բանակում է մի քանի տարեկան, մերթ կենսական:

ները զորս աթմ շնորհիւ Զերդ «Ակնարկին» «Հայ Հնագրութեան» վրայ(7), ունինք, մի քանի սխալներ կը կատարած որ արդած ըլլան նոյն ցանկին մէջ, Այս սխալները կը կայանան մի միայն երկաթագիր գրերու տեսակին վրայ. ժամանակին եւ միայն այնպէս դիտէի թէ երկաթագիր ա խոշոր երկաթագիր միայն մեծութեան համար է. իսկ միջին երկաթագիր կը նշանակէ միայն կարճ երկաթագիր. նոյնպէս եւ փոքր երկաթագիր, Ասանց Բ կամ Բ ձեւերու մէջ խորութիւն դնելու. Հետեւաբար իմ ցանկին մէջ ամէն տեղում որ երկաթագիր անունը կայ, վերստուգութեան կարօտ է: Պարտ է ինձ աւելցնել սակայն թէ մնացեալները բոլոր, ստորագր եւ խղճամիտ կերպով պատրաստուած է: Ըստ որում նորին Գերապատուութիւնը կարին պիտի այցելէ, անշուշտ նաեւ Սանաս. վարժ. — եւ եթէ նորին Գերապատուութիւնը որ եւ իցէ տեսակէ տով կ'ուզէ հիմունքի առն ձեռագրաց գրի տեսակին վրայ, խոնարհաբար կը յայտնեմ թէ ի խոհեմութիւն լաւագոյն է մի անգամ եւս աչքէ անցնել. եւ ի Կարին իւրաքանչիւր ձեռագրի սկիզբը (43 հատը միայն) փակցուած եմ թուղթ մը որուն վրայ նշանակեալ է գրին տեսակը, թուականը, գրիչը եւն. նոյնպէս ձեռագրին արտաքին կողքին վրայ շատ խոշոր թուանշաններով փակցուած է ձեռագրին թիւը: Եթէ այս բոլորը չը պատուեցան չը քանդուեցան անխնայ, անաւանդ պաշտօնէից եւ տեսչաց ձեռքով, ցարդ մնալու են: Անշուշտ վարժարանը ստացած է նաեւ ուրիշ ձեռագիրներ, ինչպէս որ իմ վերջի օրերու ուրիշ ձեռագիր մը, թիւ 44. եւ այժմ ստացած են նաեւ Բուզանդ Փաւստոսի(8) հին ձեռագիր մը !! Հիմնալի բան, եթէ ստորագր է. կ'իմանամ թէ այս ձեռագրին մէջ վաղրաւոր(9) բառը գրուած է միւլով վաղրաւոր (զ հ. ոչ ղ(ատ)) . որ եթէ ստորագր է, սրբագրել պէտք է միւլով վաղը ձեւերը բառաբանաց մէջ ղնել զայս պէլ. զմարք քառէն. պրս. ԿՄ, ինչպէս կ'ըսէ Հիւրթման: Ուրեմն — եթէ նորին Գեր. ր ուզէ առն ցուցակիս վրայ բանասիրական կամ Հնագրական տեսութիւններ հիմնել, կ'ազատեմ իւրեն որ քարեհաւի մի անգամ աչքէ անցունել ձեռագիրները ինքնին կամ եթէ ժամանակ չունինք, զայս առաջարկել (եւ սորվեցնել) Սանաս. վարժարանի ներկայ Հայկաբանին պր. Պաշտուտեանի, որ անշուշտ յանձն պիտի առնէ, երբ Հայոց ներկայ ամէնէն աշխատաւոր բանասէրը առաջարկէ:

Ներքեցէ ինձ նաեւ Հետեւեալ տեղեկութիւնը տալ նորին Գերապատուութեան:

Կարին կան նաեւ Հետեւեալ ձեռագիրները. 1^o Ձեռագիր Շէկ-Աւետարան կոչուած որուն ուխտի կ'երթան. կը գտնուի Հայ աղքատ մէկուն տունը. 2^o Ձ ձեռագիր Կարնոյ մեր Շինոց դիւղի եկեղեցին, որոնցմէ մին շատ հին է, Բագրատունեաց ժամանակէն(10), բայց ոչ Սանաս. թիւ 1ին չափ

(7) Յակ. Տուրան, «Ակնարկ մը եայ հնագրութեան վրայ», Վիեննա, 1908, հատ. «Համալի աւստրիայ» 1897, Բ. 2-12 եւ 1898, Բ. 1-8: Հեղինակը էլ 43-49-ում տարբերակել է Գլխագիր երկաթագիր, Միջին-միջորդեան երկաթագիր, փոքր երկաթագիր, Անցման գիր, Բաղրագիր եւ Բաղրագիր տեսակները Հայ գլխագրութեան մէջ:

(8) Բուզանդ Փաւստոս. սոգո. արար Փաւստոս Բուզանդ (կամ Բիւզանդ), Երգ դարէ առաջին կէտի Հայ պատմագիր, իսկ ըստ որոշ բանասէրների (ինչպէս Նորայր Ն. Բիւզանդագի) նրա «Պատմութիւն Հայոց» գիրքը նոյն ժամանակ թայգմանուել է ստորերէն: — Իր նամակում արուած տեղեկութիւններից մի քանիսը (ձեռագրերի վերաբերեալ) Աճատեանը յայտնել է նաեւ ձեռագրացուցակի առաջարկում, որ ստորագրել է 1898ի Դեկտեմբեր 6ին:

(9) Վաղրաւոր. միայն Բուզանդն ունի այս բառը (Դ զպր., զլ մե եւ ի). վաղը բառը բացատրում է որպէս հասարակ, փոքր կաշին կամ շորի մի տեսակ:

(10) Բագրատունեաց ժամանակ. ձեռագրացուցակի առաջարկում՝ «Միմառ Բ. ի ժամանակ գրուած է»։ Հայ Բագրատունիների Թագաւորութիւնը կամ պետութիւնը գոյատեւել է 885ից 1045 թթ.:

Հին(11) 3⁰ նժանդակէս բաւականին ձեռագիրներն են առ Պալլարեան Էֆէնտի, որ ունի նաեւ Հնագիտական ուրիշ հաւաքածոյնէր, Առաջին երեք ձեռագրաց ցանկը եւ շինած էի, բայց այժմ Տրաքիզոն բանաստեղծեալ են— երեք տարիէ ի վեր— իմ միւս գիրքերուս հետ: — Պալլարեանի ձեռագիրները տեսած իսկ չեմ:

Աւելի կարեւոր է Հին գերեզմանատունը որ կը գտնուի լեռնակի մը վրայ Խաչկաւանքի գիծացը, անդ կը գտնուին աւելի քան ութ հարիւր — մինչեւ 1000 տարուան հնութեամբ (կարծեմ) տապանաքարեր, որոնց վրայ գեղեցիկ պատկերներ եւս կան. այսպէս միոյն վրայ ջուլթակ մը եռագլի, միւսին վրայ դաշտի մը, ճիւղա Գերմանացոց դարեջուրի դաւաթներուն նման դաւաթ մը եւն: Ասոնք ալ բոլոր, նաեւ ինչ որ կար դեռ ուրիշ արձանագրութիւն ի նմին գերեզմանատան օրինակած էի եւ, բայց ի Տրապիզոն բանաստեղծեալ են: — Յիշեմ վերջապէս Խաչկաւանքի փոքրիկ եկեղեցւոյն խորանին ետեւը դուրսէն անցուած կարմիր քար մը, որուն համար ժողովուրդը (եւ քահանայն ալ) կ'աւանդէ թէ Յունաց կայսրէն նուէր է. սոյնպէս եւ մի քանի արձանագրութիւններ պատերուն մէջ Հիւսուած քարերու վրայ եւ մեծ խաչքարի մը վրայ Խաչկաւանքի բակի սանդուխին քով որ ունի 800 տարուան հնութիւն: Այս բոլորն յայտնելով Ձեր Գերապատուութեան, կարծեցի կտաւարած ըլլալ Ձեզ հաճելի դործ մը, որ այնքան հետամուտ էք հայ Հնագորութեան եւ հայ բանասիրութեան:

Հաճեցէք ընդունել իմ ամենախորին յարգանքներս:

Ձերդ ն. ծ. (12)
ՀՐԱՋԵԱՅ ԱՃԱՌԵԱՆ

(11) Ձեռագրացուցակում Սանասարեան վարժարանի թ. 1 Ձեռագիրը Աւետարան է, գրուած 998թ.:

(12) Ն. Ծ. Եւանկելում է հնուստո ծառայոյ, որ այն ժամանակներու քաղաքավարական արտայայտութիւն է եղել: Կայ նաեւ ուրիշ նախնական:



● Սիրելի Յակոբեան, իբրեւ առաջին հարցում անկասկած հետաքրքրական պիտի ըլլար խօսիլ ձեր վաղ շրջանի գործերում մասին, այսինքն՝ լուսարձակի տակ բերել իրապաշտ մօտեցումով եւ բանաստեղծական թախիծով յայտնուած եւ ձեռնարկուած ձեր այն պատմութիւնը, զորս դուք ստեղծագործեցիք Եգիպտոսի մէջ, Հայաստան մերգաղթելէ առաջ, ազգայնով ձեր ամփրակամ շրջապատին:

Երբ այսօր արագ ակնարկ մը կը նետեմք այդ կտաւներուն վրայ, մեմք հոն կը տեսնեմք կեանքի բիրտ իրականութիւնը՝ իր ամենայն գիծերով: Օրինակ, ձուկ տապալակ կմռնէր բերքի ազրեգութիւնը, տառապանքն ու պատուէրներ, կտոր մը հացի կարօտ կօշկակարը, կարի մեքենային առջեւ նստած միհարակազմ ու դալկադէմ երիտասարդը, որուն դէմքի գիծերը ձերմ են, մէկ խօսքով՝ մեմք հոն կը գտնեմք աշխատարար եւ ընչազուրկ մարդը: Այդ օրերուն, ասկէ շուրջ երեսուն տարի առաջ, ի՞նչ կը փորձէիք ըսել, երբ վրձնէիք ձեր կերպարները կը վերցնէիք, ասելի ճիշդ՝ նկարչութիւնը իբրեւ արտայայտչամիջոց ընտրելով ի՞նչ նպատակ կը հետապնդէիք:

— Գիտէ՞ք ինչ, նպատակ մը չեմ ունեցած երբոր նկարած եմ, բայց անդամադրելի մղում մը կայ դէպի ա՛յն՝ ինչ որ ես պէտք է նկարեմ, այդ բանը, Թերեւս միակ ճիշդ բանը ա՛յն է, որ եթէ այսինչ կամ այնինչ կացութիւնը նկարած եմ, պարզապէս անոր համար, որ անդամադ-

ԴԷՍ ՍՈՒ ԴԷՍ

ՅԱԿՈԲ

ՅԱԿՈԲԵԱՆԻ

ՀԵՏ

րելի մղում մը խորտած է մէջս: Այս պարագային, երբ դուք կը խօսիք իմ նկարած պատմութիւններու բովանդակութեան մասին, ըսենք՝ ձեր տեսած նկարներէդ այդ խեղճուկրակ դերձակը, որ իր մեքենային առջեւ մտադրազ նստած է կամ յիշեցիք ձուկ տապալակը... Վերջը, այդ շրջանին, զիս շրջապատող մարդկանց մէջ զիս շատ յուզած են յատկապէս այդ խեղճուկրակները, եթէ կ'ուզէք ասել ժողովրդական բառով ըսեմ՝ տեսակ մը զաւարթները: Գիտէ՞ք, Թերեւս պատահական չէ անշուշտ իմ հակումս կամ համակրանքս դէպի այդ մարդիկը, այդ նկարներուն մէջ Թերեւս ես կը տեսնեմ իմ եղբայրներս, այսինքն՝ ինքի պէս մարդիկ: Եղբայր բառը այստեղ չեմ ուզեր օգտագործել ցուցադրական ձեռնով, ըսենք՝ խեղճ մարդիկը զիս յուզած են Թերեւս այն հիմնական պատճառով, որ ես զիս խեղճ մարդ մը կը զգայեմ, Թերեւս այդպէս ալ եմ մինչեւ հիմա, բայց այդ ժամանակ յատկապէս ես տեսակ մը հողեպէս ընկճուած եւ թոյլ մարդ մըն էի, եւ ընական կերպով իմ համակրանքս պէտք է երթար դէպի այդ խեղճները: Յետոյ, այդ մարդիկը նկարելու տեսակ մը անդիմադրելի մղում կար, եւ երբ կը տեսնէի այս տիպարները, չէի կրնար հանգիստ մնալ եւ անոնց խեղճութիւնը, որ նաեւ կ'արտայայտուէր այս մարդոց ֆիզիքական ձեւին մէջ, կ'անդրադառնար նկարելու ոճին վրայ: Այս պարագային, նկարելու ձեւս ալ կը բխէր բուն նիւթէն, որ ինքնին խեղճութեան արտայայտութիւն մըն էր՝ ձեռով ալ...

● Այսինքն՝ խորքի եւ ձեւի հաշտեցում մը, ներգործութիւն մը տեղի կ'ունենար եւ խորքին ծեւտ կը ձեւաւորուէր ճանի իր շեղանկարչական լեզուն:

— Ընդհանրապէս: Եւ բնական է, որ այս մթնոլորտէն կու գար նաեւ նկարներուն գունային մթնոլորտը, որ ժամանակի ընթացքին մեծ փոփոխութեան մը չէ ենթարկուած, մեղմ, գորշ գոյներ, տխուր գոյներ (այդ նկարներուն մէջ ուժեղ, ցայտուն, կենսաւորաւ գոյներ չկան): Եւ, ըստ իս, այդ մէկը շատ բնական էր, որովհետեւ իմ նկարած մարդկանց շատ կը յարմարէր, իրենց գոյնն էր տեսակ մը, մոխրագոյնը իրենց կեանքի, իրենց էութեան գոյնն էր: Այնպէս որ, ինչպէս ըսի, այդ մարդիկը որեւէ ձեւով օգտագործելու նպատակ մը չեմ ունեցած, ես ուղղակի չէի կրնար անտարբեր անցնիլ այդ մարդոց ի տես, խեղճուկրակ մարդու կերպարանքը զիս կը յուզէր եւ ես կ'ուզէի անպայման նկարել: Ինչո՞ւ համար՝ չեմ գիտեր: Նկարչութեան միջոցով իմ մէջն գտնուող հուզական յուզումը թեւեւ կ'ուզէի Հանգստացնել կամ արտայայտել, թերեւս այդ եղան է հիմնական պատճառը, թերեւս նաեւ ատոր համար, որ այդ տեսակ նկարներ նկարող նկարիչներուն գործերը զիս միշտ յուզած են:

● Հաւանաբար կեանքի խտացումը իմաստը այդ հոգեկենդանութեան մէջ կը տեսնէիք եւ գտնուէք պատասխան յանձնելու մերթն մղումը կը ըլլար գիտակցութեան դիրքաբաշտում մը, որ սպիտակ կտակին վրայ կը ձեւաւորուէր իրեն գիտակցութեան մօտեցում, ընկերային աշխարհա-հայեացք, ինչ որ կը գտնուէր շատ մը ար-ւեստագէտներուն մօտ: Ձեր սթարազայինն նման իմաստաւոր մը կրնա՞նք կատարել, այսինքն՝ գիտակցութեան մօտեցումը որոշ դեր մը ունէ՞ր:

— Գիտե՞ք, չեմ կրնար ըսել, որ ես իրապէս այդ տեսակ նպատակ մը ունեցած եմ: չեմ մտածած, որ նկարս պէտք է միջոց ըլլայ որեւէ ուրիշ նպատակի համար: Ընդհանուր առմամբ՝ իմ համակրտնքս միշտ ալ գացած է թոյլերուն եւ խեղճե-րուն, կ'ուզեմ շնորհիւ ասիկա, որովհետեւ յատկապէս այդ ժամանակ ես անտարբեր



Յ. Յակոբեան
Եգիպտոսի իր աշխատանքակիճ մէջ

չեմ եղած մարդկային իմաստով այդպի-սի կացութիւններու դիմաց, եւ միշտ ալ դիրքաբաշտած եմ ի նպատակ թոյլերուն, խեղճերուն, տկարներուն, պարտաւածնե-րուն: Իսկ ոչ մէկ ատեն ես չեմ մտա-ծած, որ նկարներովս կրնամ որեւէ բան փոխել եղած կացութեան մէջ կամ ընդ-հանդիպել չեմ մտածած, որ այդ կացու-թեան դէմ բողոքեմ նկարելով: Ուղղակի՝ ընդհանուր առմամբ խեղճ մարդ մը երե-ւի միշտ ալ պիտի սիրէ խեղճերու հետ ըլ-լալ, քան զօրաւորներու, որոնցմէ միշտ ալ վախցած պէտք է ըլլայ կամ կը վախ-նայ:

● Հակառակ անոր, որ ծնած ու մեծ-ցած էք Եգիպտոսի մէջ, սակայն յըս-տակ կայ մը չեմք կրնար գտնիլ ձեր այդ շրջանի պատառներում եւ եգիպտական, այս պարագային՝ փարաւոնեան դարաւոր արւեստին միջեւ: Մինչդեռ, այդ գոր-ծերուն մէջ շատ ակնի զգալի կերպով կը տեսնենք եւրոպական անդադարներ, ա-րտնք, կը կարծենք, արդիւնքն են որոշ ա-տեն մը ձեր Եւրոպա կեցութեան եւ գե-ղանկարչական կազմաւորման: Ինչպէ՞ս կրնա՞նք բացատրել այս կացութիւնը: Փա-րաւոնեան արտեստը ձեզ երբեքից չէ՞ հետաքրքրած, որեւէ ատեն չէ՞ մտածած օգտուիլ եգիպտական արմաւազանի-րու, որմանկարներուն եւ քանդակագոր-ծութեան այդքան հարուստ արանդներէ:

Հետաքրքրական է իմանալ, թե այդ ա-
կումքները ուսումնասիրելու եւ անցնելու
ունենալու փորձեր կատարած է՞ք, իսկ ե-
թէ չէ՞ք կատարած՝ պատճառը ի՞նչ է։

— Անշուշտ պէտք է ըսել, որ փոր-
տառնաւոր արուեստը աշխարհի ամենագե-
ղեցիկ արուեստն է, հին եւ կենդանի ար-
ւեստ է, բայց եւ ուղղակի որեւէ կապ
չեմ գտնուում, թէ եւ շատ մեծ հիացումով
գիտած եմ այդ գործերը։ Հիմնականին
մէջ, եւ աշխատած եմ եզրիպտոսի մէջ,
եզրիպտական շրջանակներու մէջ եւ ունե-
ցած եմ եզրիպտացի ընկերներ, բարեկամ-
ներ, նկարիչներ, քանի մը տարի եզրիպ-
տական Ակադեմիայի ազատ դասընթացը-
ներուն հետեւած եմ եւ կրնամ ըսել, որ
իմ ժամանակի եզրիպտոսի նկարչական
կեանքին մասնակցած եմ՝ իբրեւ եզրիպ-
տոսի մէջ ապրող նկարիչ։ Բայց այստեղ
պէտք է նաեւ նշել, որ եզրիպտական ար-
դի արուեստը ուժեղ կերպով եւրոպական
արուեստի ազդեցութիւնը կրած է, ընդ-
հանուր առմամբ՝ եւրոպական արուեստի
ոլորտին մէջ է, քանի որ եզրիպտացի ժա-
մանակակից նկարիչներէն շատերը իրենց
կրթութիւնը ստացած են կամ Եւրոպայի,
կամ Յիւստանիայի եւ կամ Ամերիկայի մէջ,
եւ պէտք է ըսել, որ այսօր, եզրիպտոսի
մէջ, ազգային որոշակի գիծագիծ ունե-
ցող ուժեղ արուեստագէտ մը չէ յայտնու-
ած, զէթ իմ ապրած շրջանին։

● Յստակացում մը կատարելու համար
պէտք է ըսել, որ վերջին տասը-քսան
տարիներուն եզրիպտոս տուաւ սեփական
նկարչական տեղ, ազգային ցկարչութիւն
մշակող ինքնատիպ անուններ, որոնք եւ-
րոպացի քննադատներու եւ արուեստի
շրջանակներու ուշադրութիւնը գրաւե-
ցին։ Օրինակ, Ատամ Համինը, Հիլմի
Թումին։ Տեսա՞ք է՞ք ասանց գործերը...

— Անկեղծօրէն ըսած՝ ես ծանօթ չեմ
նորագոյն սերունդին։

● Փամի ող եզրիպտոսի մասին կը խո-
սինք, հետաքրքրական պիտի ըլլար լսել
ձեզ՝ ձեր մանկութեան մասին։ Որովհե-
տեւ ամէն արուեստագէտ խոր եւ քաջան
կապերով կապուած կ'ըլլայ իր մանկու-
թեան, շարունակ կ'ապրի այդ մանկու-
թիւնը, վերջուշի մահով կը վերադառ-

նայ ա՛յդ աշխարհը, որ երագներու, քաղ-
ցրը յայտնուի, տառապանքի, սիրոյ, ա-
ռաքիմ ապրումներու, առաջին փորձա-
նութիւններու աշխարհն է, կեանքին բաց-
ւազ առաջին պատուանձն է, վերջապէս՝
հեքիաթային աշխարհն է՝ թէ՛ իր երագ-
ներով, թէ՛ իր ուրախութիւններով եւ թէ
իւր վիշտերով։

Եւ զարմանալի չէ, որ ժամանակի հա-
լովայքին հետ քիւրքագացած մանկու-
թիւնը յաճախ կ'այցելէ արուեստագէտ-
ներուն՝ իրեն ստեղծագործ յիշողութիւն
եւ քաղցրագոյն ապրումներու շտեմա-
րան։ Մանրամասնելով կրնանք հարց
տալ՝ ինչպիսի՞ միջավայրի մը մէջ ձեր
աչխը կեանքին բացուեցան, հետաքր-
քրական ի՞նչ փորձառութիւններ ապրե-
ցաք, երբ օկսաք մկարել, եւ այլն,
եւ այլն...

— Անշուշտ փոքր տարիքէն սկսած եմ
նկարել եւ այս բանը ինծի յատուկ բացա-
ռիկ պարագայ մը չէր, որովհետեւ, ինչ-
պէս դիտէք, գրեթէ բոլոր երեխաներն ալ
կը սիրեն նկարել, եթէ իրենց առիթ տըր-
ւի։ Թուղթ արուի, գոյներ ու վրձին տըր-
ւին։ Ես ալ, երեւի շատ փոքր տարիքէն
սկսալ, եւ կրնամ ըսել, որ առաջին նը-
կարը ինծի համար նկարած է իմ հայրը,
երբ շորս-հինգ տարեկան էի։ Թեքեա ա-
ռիկա առաջին անգամն էր, որ նկարչու-
թեան հետ շփուեցայ...

Հայրս շատ շուտ կորսնցուցի, եօթը
տարեկան էի, երբ մահացաւ, բայց քա-
ղէն սկսած էի նկարել, սիրել նկարչու-
թիւնը եւ այդտեղէն ալ սկսաւ։ Բայց,
զժրախտաբար, իմ մանկութիւնն եզրիպ-
տոսի մէջ չանցաւ։ Ես ստիպուեցայ բաժ-
նուել իմ ընտանիքէն, երբ տասը տարե-
կան էի, կիպրոսի Վիկտորիանա վարժա-
րանը գացի եւ այնտեղ ալ քաղցրեցին
դիւս։ Վարժարանին մէջ կային քանի մը
տղաք, որոնք նկարչութեամբ կը զբա-
ղէին, իսկ երբ մէկը կը նկարէ, տեսակ
մը կ'առանձնանայ իր ընկերներէն, ան-
միջապէս ուշադրութիւն կը դրաւէ եւ կը
սկսին հետաքրքրուել իրմով։ Այդպէս ալ
եղաւ։

Վիկտորիանայի մէջ իմ առաջին ու-
սուցիչն եղաւ Առաքել Պատրիկը, որ հի-

մա Հայաստան է, եւ ես շատ մեծ սիրով կապուեցայ իրեն եւ ան շարունակ քաջալերեց զիս: Ծառ երկար չմնաց: Յետոյ եկաւ Օննիկ Աւետիսեանը, որուն հետ ես շատ մեծ մտերմութեամբ կապուեցայ, զրեթէ տառնըլորս տարեկանէս մինչեւ Հայաստան դալս, մինչեւ քառասուն տարեկանս, այսինքն՝ քսանընէնդ տարի մենք շատ մտերմեանք եղանք եւ ան մեծ ապէս օգտակար եղաւ ինծի, անդադար իրեն հետ յարաբերութեան մէջ եղայ, միշտ ալ զիս մղեց նկարելու եւ ձեւով մը ինք եղաւ իմ ուսուցիչս: Պէտք է ըսել, որ մանկութիւնս Եզրիպտոսէն դուրս անցաւ եւ երբ վերադարձայ, արդէն պատահի էի եւ հաստատուեցայ Աղեքսանդրիտ, ծնողքիս մօտ:

Ես միշտ ալ նկարիչ ըլլալու ձգտում ունեցած էի, բայց նկարիչ ըլլալը այնքան ալ հեշտ չէր: Դուք զիտէք, որ արտասահմանի մէջ որքան դժուար է ընդհանրապէս արուեստով զբաղուիլը, անդործնական բան է եւ արուեստով զբաղուող մարդկանց համար կ'ըսեն, որ զմարդ պիտի չըլլայ, անօթի պիտի մեռնի: Պէտք է ըսել, որ այդ տեսակ մթնոլորտի մը մէջ ես սկսայ նկարել եւ ամէն ինչ ըրի, որպէսիք Գահիրէ հաստատուիմ, ուր կար նկարչական բարձրագոյն հաստատութիւն, Գահիրէի Պօզ' արք կար, եւ միշտ ալ կը մասնակցէի, որ այդ տեսակ կըրթութիւն մը անպայման պէտք է ստանամ, մանաւանդ՝ որ իմ սիրելի ուսուցիչս՝ Օննիկ Աւետիսեանը Գահիրէ կ'ապրէր եւ կ'ուզէի իրեն մօտ ըլլալ:

● Անկասկած, վարդերով զարդարած համբու մը վրայ չաղիք ձեր առաջին քայլերը եւ ապրեցաք արուեստի ընդհանրապէս ճիշդ մտայնութեամբ արուեստաւորի մը վերապահութեամբ դառնալովս:

— Ընդդ այդպէս: Եւ այդ ժամանակ ալ, քառասունըլորս թուականին եւ հաստատուեցայ Գահիրէ եւ բախտը ունեցայ մասնակցելու եզրիպտոսէն նկարչներու տարեկան ցուցահանդէսին: Այդ տարիներուն, Եզրիպտոսի մէջ շատ գեղեցիկ եւ օգտակար դործունէութիւն մը կար, խումբ մը հայ մտաւորականներ միու-

թիւն մը հիմնեցին, Հայ Մշակոյթի Բարեկամներու Միութիւն, այսպէս կը կոչուէր, եւ քանի մը հողինոց այդ խումբին նպատակն էր հայ մշակոյթը ծանօթացընել օտարներուն՝ կազմակերպելով ցուցահանդէսներ: Պէտք է ըսել, որ այս ցուցահանդէսները մեծապէս նպաստեցին մեր մշակոյթը օտարներուն եւ, ինչու չէ, նաեւ հայերուն ծանօթացնելու դործին:

Իմ բախտէս՝ առաջին ցուցահանդէսը քառասունըլորս թուականին տեղի ունեցաւ: Այդ օրերուն, ես բոլորովին երբեք տեսարդ եւ փոխակ մէկն էի, այդ ցուցահանդէսին մէջ կային տարբեր մեծ եւ փոքր նկարներ՝ Տիրան կարտպիսեանը, Օննիկ Աւետիսեանը, Աշոտ Զօրեանը, Բիւզանդ կոնստանտինը եւ շատ ուրիշ նկարիչներ, եւ ինծի ալ առիթ տուին, որ իրենց հետ մասնակցիմ: Երեք նկարներ նկարած էի եւ առիթ ունեցայ առաջին անգամ ցուցադրելու եւ, զարմանալի կերպով, այդ ցուցահանդէսը ինծի համար շատ կարեւոր դէպք մը եղաւ, որովհետեւ նկատուեցան նկարները, նոյնիսկ գնուեցան, ինչ որ անհաստատելի բան մըն էր, եւ այդ գնողներէն մէկը Վահէ Սէթեանն էր, Պէյրութ ապրող այդ շատ արուեստասէր հայը:

Այնպէս որ՝ կրնամ ընդհանուր առմամբ ըսել, որ երիտասարդութեանս ըսկիզբը ես նկարչութեամբ զբաղած եմ բաւական անկազմակերպ ձեւով, չիմանալով որ ինչ պէտք է ըլլայ նկարչութիւնը, բայց սիրելով նկարելը, մանաւանդ՝ որ ուսուցիչներս կամ ինծի մօտ մարդիկ զիս քաջալերած են:

● Ամէն արուեստագէտ, ըլլայ մըկարիչ, արձանագործ, բանաստեղծ, երաժիշտ կամ արուեստի այլեւ մարզի մէջ իմնագիմք որոնող ստեղծագործ մարդու խառնուածք ունեցող ձեւէ անհատ, անաչիւն հերթիմ, կ'ապրի կարեւոր հանգըրանք մը, որ փնտրութիւնն է: Առեւտրական, արուեստագէտներու կիսմէի այս առաջին շրջանը կը յատկանշուի չափազանցեալ աւելանքով՝ համազօգ այս կամ այն արուեստագէտի ուղիքն, կամ՝ այս կամ այն դպրոցին, շարժումին: Այդ հանգըրան-

Օրն, իբրև ուսուցիչ կամ ձեր էությունը ներգրաված մտադրար, ո՞ր արուեստագետները կամ դպրոցները կլսան ինձ ձեզ, այլ խօսքով՝ ո՞ր գեղանկարիչները եւ դպրոցները գգայիօրէն իրենց մասնակցութիւնը քերթիմ ձեր սեփական դիմագիծի յայտնաբերման եւ բիրեղացման աշխատանքին մէջ:

— Անկեղծօրէն ըսած՝ ես դժուար թէ կարենամ պատասխանել նման բարդ հարցի մը, որովհետեւ ես որոշակի բան մը չեմ կրնար ըսել, բայց մէկ բան կրնամ ըսել յստակօրէն. առաջին երեք նկարները, զորոք ես ցուցադրեցի, իմ առաջին նկարներն էին, ուր ես ինքզինքս արտայայտեցի: Եւ կրնամ ըսել, որ հետագային որեւէ կարեւոր փոփոխութիւն թեւեւ չկատարուեցաւ, քանի որ այդ լըրջանին, իբրեւ մարդ, ես արդէն կազմաւորուած էի, բայց ես այդչափ չէի գիտակցեր իմ վիճակին:

Գիտէք, երբոր մարդը տեսակ մը վիճակի մէջ է, տեսակ մը ինքզինքէն դժգոհ վիճակի մէջ է՝ կ'ուզէ ինքզինք փոխել: Եւ յաճախ այդ տեսակ վիճակի մէջ եղող մարդը կը փնտռէ, իբրեւ օրինակ, մարդիկ, որոնք իրեն նման չեն, այսինքն՝ իր մօտ պակտող բաները երբ կը գտնէ ուրիշներու մօտ, կը տարուի անոնցմով: Ես այդ տեսակ լըրջան մը ունեցած եմ, չեղելու բուն իմ էութենէս. քանի որ տեսակ մը չէի ընդուներ իմ այդպէս ըլլալս, իմ խեղճութիւնս կամ թուութիւնս անտանելի էր ինծի համար: Բայց տարիներու ընթացքին, վերջի վերջոյ, ես եկայ այն եզրակացութեան, որ ես չեմ կրնար փոխուիլ շատ եւ ինչ որ եմ, այդ ալ պէտք է ըլլամ՝ ուղեւ կամ ոչ: Եւ պէտք է ըսել, որ որոշ խորխորութիւն կամ որոշ յոգնածութեան շրջան մը ունեցած եմ, նոյնիսկ որոշ չափով յուսահատութեան շրջան մը, երբ վեցեօթ տարի ես ընդհանրապէս չեմ նկատած, համոզուած ըլլալով, որ որեւէ արդիւնք չեմ կրնար տալ:

● Իսկ երբ փարիզ գացիք եւ ուզակի շփում ունեցաք արուեստի բոլոր հասանքներուն, շարժումներուն եւ նորագոյն նորարարութիւններուն հետ, աւելի ճիշդ քացատ-

րութեամբ՝ երբ Յակոբ Յակոբեան անուանիւ առաջին գագաթնաժողովին մէջ, ի՞նչ տաղանակներ ցնցեցիմ ձեզ եւ ի՞նչ միջոցառումներու դիմեցիք՝ կարենալ հակագրելու համար ձեր ինքնուրոյն դիմագիծին սպառնացող հրապարիչ երաւելներուն:

— Որոշ չափով տեղեակ էի Փարիզի մէջ գոյութիւն ունեցող նկարչութեան՝ թերթերու, գրքերու միջոցաւ, բայց երբ Փարիզ գացի, ինքզինքս լրիւ ունշացած գտայի, վերջնականապէս յուսահատեցայ, եւ ես ինծի ըսի, երբեւեցէ ինծի համար չիմա ոչ եւ է, որ ես կարենամ նկարչութիւն ընել: Որովհետեւ ո՛չ միայն մեծ վարպետներու գլուխ-գործոցներու ներկայութեան այդ յուսահատութիւնը ազդեցայ, այլեւ, Փարիզի մէջ ապրող իմ ոտքակից նկարիչներու հետ շփուելով՝ ես տեսայ, որ շատ աւելի քիչ օժտուած մարդ եմ, քան այդ մարդիկը: Եւ անկեղծօրէն պէտք է խոստովանիմ, որ այն զգացումը սենեցայ, որ բրբեռ նկարիչ ու չինչ կը ներկայացնեմ, ճիշդ չէ, որ ես նկարչութեամբ զբաղեմ, քանի որ իմ տարեկիցներս կամ աւելի երիտաւորը մարդիկ հասած էին այնպիսի՝ հրաշալի արդիւնքներու, որոնք ինծի համար անհասանելի էին, անկարելի երազ էին:

Բայց արդէն մէյ մը Փարիզ եկած էի, մանաւանդ՝ որ ալ պարտաւորութիւն մը ունէի, քանի որ Եգիպտոսի հայ գաղութը հոգացած էր իմ կեցութեանս ծախսերը եւ վերադարձիս եւ պարտաւոր էի տեսակ մը հաշուետու ըլլալ այդ մարդոց առջեւ: Այս մէկն ալ գիտ հոգեպէս ահաւոր չափով ընկճեց, որովհետեւ ես այն զգացումը ունեցայ, որ կը խաբեմ այդ մարդերը: Այս հոգեվիճակը ապրեցայ եւ այդպէս ալ վերադարձայ Եգիպտոս, առանց արդիւնքի: Բայց այս անգամ հաստատ որոշելով, որ ի՛նչ որ ալ ըլլայ՝ ես պէտք է շարունակեմ նկարելը, ուրիշ ելք չունիմ: Եթէ կ'ուզեմ անձիս հանդէպ իմ ունեցած համարումս բարձրացնել եւ մարդոց յարգանքը վայելել, Սակայն պէտք է ըսեմ, որ Փարիզը իմ մէջն նաեւ



Եզրիպտական շրջանի պատասանորդ՝ Վերնակը՝ ուրիշ կարեւոր համոզում մը հաստատեց։ — Ով ինչ կ'ուզէ թող ընէ, ամէն նկարիչ պէտք է ի՛ր նկարը նկարէ, ամէն արուեստագէտ պէտք է դռնէ ի՛ր ուղին, բայց սարսափելին ա՛յն էր, որ չէի դիտեր, թէ ո՛ւր կը գտնուի այդ ուղին, ո՛ւր պէտք է փնտռէ՛ք չէի գիտեր։ Եւ ես երբեմն կը մտածէի, որ դուրսն է ինձմէ, Փարիզը պէտք է տայ, բայց Փարիզը չտուաւ։

● Ամենատպալմ ցուցահանդէսներ տըւած է՛ք Գաեիթի, Երեսմի, Մոսկուայի, Փարիզի եւ այլ քաղաքներու մէջ։ Ամկանկած, Փարիզի մէջ այս տարի ձեր տուած ցուցահանդէսը յատուկ մշակակութեամբ աւանգու շուրջ քանդակից տարիսի յարմար վաւերական ճկարիչ Փարիզ վերադարձող Յակոբ Յակոբեան արուեստագէտին կեանքին մէջ։ Հարցումը հետեւեայն է. «Ո՞րն է այն ցուցահանդէսը, որ ամենէն աւելի ոգեւորած է ձեզ,

(Երեսն, Նոյեմբեր 1979)

յետոյ՝ ո՞րն է այն վայրը, ուր դուք ձեզ համոզուտ կը զգաք, երբ կը ցուցադրէք ձեր այս կամ այն մկարտւարները»։

— Նախ ըսեմ, որ Փարիզի ցուցահանդէսը ինձի համար ալ անակնկալ էր։ Անշուշտ բացառիկ բան մըն էր, որ իմ կ'անջնայ մէջ պատահեցաւ, տարիկա ո՛չ չ'աղբուած էր, ո՛չ նախատեսուած էր եւ ոչ ալ ես ինքս պատրաստուած էի այդ անակն ահապահ ցուցահանդէսի մը։

Անցեալ տարի Մոսկուայի մէջ իմ անհատական ցուցահանդէսս բացուեցաւ, յանկարծ Մովսէսական Միութեան կուլտուրայի միմստրութիւնը որունց ցուցահանդէսը տեղափոխել Փարիզ։ Կատարուած իրողութեան մը առջեւ գտնուեցայ, բայց անշուշտ պէտք է ըսեմ նաեւ, որ ինձի համար հաճելին ա՛յն էր, որ քանի մը հայ եւ ֆրանսացի նկարիչներ, անուանի, Նոյնիսկ համալսարանին մակարդակով նկարիչներ, որոնց ես ծանօթ էի. ինչպէ՛ս՝ Գառզու, Ժանսեմ, Ծարթ, իրենք համակրանքով նայեցան իմ ցուցահանդէսին եւ իրենց զոհանակութիւնը յայտնեցին եւ ըսին. «Յուշահանդէսը յաւ ցուցահանդէս է, դուն թեզ լաւ զգայ, Յակոբ»։ Այդ եղաւ իմ ամենամեծ ուրախութիւնը։ Ասկայն, դիտէ՛ք ինչ իբրեւ հայ նկարիչ, որ Հայաստանի մէջ կ'աղբորիմ, սա իմ անկեղծ համոզումս եւ զգացումս է, որ թերեւս ինձի համար աշխարհի ամենակարեւոր ցուցահանդէսները Հայաստանի մէջ իմ տուած եւ տալիք ցուցահանդէսներն են. ես այս բանը անկեղծօրէն կ'ըսեմ եւ համոզմամբ կ'ըսեմ, եւ պէտք է աւելցնեմ, որ Հայաստանի մէջ տուած Նոյնիսկ իմ առաջին անհատական ցուցահանդէսը շատ աւելի կարեւոր եղած է, քան թէ ուրիշ որեւէ քաղաքի մէջ եղած կամ ըլլալիք ցուցահանդէս։ Որովհետեւ եթէ քու պարծ կընես սիրցնել քու ժողովուրդիդ, երբ հայութիւնը կը գրէ քու արուեստդ, մի վայրնար ուրիշ ժողովուրդներէն, որովհետեւ այլեւս ամէն տեղ ալ կընաս ինքզինքդ առօրինակ եւ հանգիստ զգալ։

Հարցազրույցը վարեց
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱՆՈՍԵԱՆ

(Մնացեալը յաջորդիւ)

Նոր Պարբեր

Ա Ր Ա Գ Ի Լ .

(ԽԱՐԱԳԻՐ՝ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ)

Վերջերս Համազգայինի Հա՛հ Սեթեան տպա-
րանին լոյս տեսաւ շատ ինքնատիպ ևս գրաւիչ ար-
պոմ-գրքոյի՝ «Արագի» անունով, խմբագրու-
թեամբ Պօղոս Սնապեանի:

Հատորը քննարկելի ճաշակով նկարագրուած
է: Գրեթէ ամէն էջի մէջ կը գտնենք ճարտի արա-
ղիձին պատկերը, այլապէս դիւրեւորով ևս մեկ-
նով: Յայտնակէս երկարատեւ աշխատանք հա-
տարուած է՝ արագիւր ներկայացնող նկարներուն
ծոխ հաւաքածոն կազմելու համար: Հատորը թղթ-
թաղթը այս սիրելի թռչունը կը պտէ յանախ
մէջ օտաքի վրայ կեցած զառանգ իր կերպարան-
քով, երբեմն թռչելի պահուն, թեւատարած ևս
վեհալուք, երբեմն իր բռնի մէջ, հայկական
տաճարի մը զմբէթին վրայ:

Կարճ լատնարան մը կը բացատրէ յիշեալ
ալպոմ-գրքոյի պատրաստելու և հրատարակելու
գրգռապատճառը:— «Այս ալպոմը կազմուեցաւ քա-
րկիւմը հագինքրու հետ բնութեամբ ևս քննարկման
մէջ պահ մը առանձնանալու մղումով»:

Միայն քննութեան հետ հաղորդուելու սէրն ու
ծարուել լին տնայաւ, որ Պօղոս Սնապեանը մղած
են նման գործ մը դուրս հանելու: Հայրենի երկ-
րին, հայեցի ապրումներուն և աւանդութիւննե-
րուն կարօտն ալ իր կարեւոր դերն է ունեցած
մեծարկի իրադրութեան մէջ:

Ո՞վ չի դիտեր, թէ արագիւր որոշ լափով հայ
թռչուն է, մեր զգացումներուն խորհրդանշը, մեր
պատմութեան, յայտնուն և ուրախութիւննե-
րուն բաժնեկիցը: Մեկ խոսքով՝ հայրենի երկրի-
քին և զայտնունը զարդն ու օդին Որքա՞ն երա-
զեր ունինք նուիրուած արագիւրն, որքա՞ն կար-
տալի հայ սրտեր դարձրով սղնուած են անոր
որհնարեղ ժամանումը մեր զիւղերու երգիչներուն
կամ բարոյներուն վրայ:

Ան աղպային և մարդային այս ապրում-
ներն են, որ կը թրթռան ալպոմ-գրքոյի իւրա-
քանչիւր էջին մէջ: Կարելի չէ առանց յուզումի
թերթատել պտենը:

Խմբագիրը՝ Պօղոս Սնապեան, զեղատիպ նը-
կարները կենդանացող բազմաթիւ գրուածքներ



յախոյած է հարել նոյն տանն, որոնք արագիւր
մեզի կը ներկայացնեն իրրիւ թռչուն մը, որ հա-
տարիմ է իր սեպիկ կոնդուն պահպանման,
հաւատարիմ է իր սերունդներու տնապարտ դո-
յապահման, ինչպէս նաեւ հաւատարիմ՝ իր ընտա-
նական սիրոյն:

Հատորի առաջին պատմութեան կը պատկանի
Ա. Ահարոնեանի գրչին: Պարզութեամբ, ալ
մարդկայնական խորութեամբ գրուած սքանչելի
պատմութեան մը, ուր մենք կը գտնենք, զոչ մը
արագիւրն ապրած ողբերգութեան ընդմէջէն,
մարդկային կեանքի վիշտն ու առաւելանքը:

Ալպոմ-գրքոյի մէջ, էջ առ էջ թղթատե-
լով, կը հանդիպինք քաղմութիւն ուրիշ ծանօթ պը-
րոյներու լափածոյ կամ արձակ գրութիւններուն,
բոլորն ալ նուիրուած ճարտի արագիւրին: Հոն են
Յ. Թումանյանը, Արմէն Գաբուն, Ա. Իսահակ-
եանը, Կոմսը, Վ. Յոթովնեցը և ուրիշներ:

Այս ալպոմին ընթերցումը իսկական վայելքի
և յուզումի պահեր կ'ընծայէ մ'չ միայն հասուն
մարդոց, որոնք կ'ապրին անցեալի յիշատակնե-
րով, այլեւ՝ մանուկներուն և պատանիներուն,
որոնք վստահաբար կը յափառակոխ հրաշալի
այս թռչունի տեսքով ևս առաջինութիւններով:

Մ. ԻՇԽԱՆ



«ՄՈՒՍԱ ԼԵՌ»

ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Անցեալ տարի, Հայաստանի Գիտութիւնների Ազգային Գրադարանի ընտանիք հասկումներն եւ ազգագրութեան բաժանումները աւագ գիտաշխատող, բանասիրական գիտութիւններու թեկնածու Վերժինէ Սիւլադեանի շնորհիւ ինչ խորագրով բանաստեղծական ժողովածուն, որ զեւայ ցաղթածայինների բանասիրական մշակայքներին նուիրում առաջին փորձն ու երաժարակութիւնն է մեզանում, ինչպէս իր հաստատել Գէորգ Տաղչիւնան, Հրապարակման քննարկի տեղեւ տարւած Չորդ Համարին մէջ:

Հայաստանեանկ մուտ լեռներնու բանահիւան հարստութիւնը ի մի խմած այս հաստը ունի բացառիկ արժէք՝ իրեն առաջինը իր տեսակին մէջ եւ իրեն հոգեմտաւոր հարուստ նիւթեր ամփոփած հրաշարակութիւն:

25 տարւած վրայ երկարած մեղաւորն աշխատանքի արդիւնք հանդիսացող այս ուղարկա գործը իր բաղկանայ երկու մասն, — Հնեքանութիւնն խորագրող կողմ լանկան առաւելաւորութիւնը եւ բանահիւան նիւթերու բաժնը:

«Հնեքանութիւն» մէջ ընթերցողին իր ներկայացուին այն բոլոր տեղեկութիւնները, որոնք անհրաժեշտ են թէ՛ գիտական եւ թէ՛ քանութեան իմաստով: Տասը էջերու վրայ երկարած այս գրութիւնը ընթերցողին իր ներկայացնէ Մուտ լերան աշխարհագրութիւնը, առաւելաւորութեան համա՝ որդեգրուած ուղղութիւնը, բանահիւան աշխատանքներու հարմարութիւնը, կուսակաւած նիւթերը խմբակարգուելու եւ համակարգուելու խնդիրները, նիւթ գիտական մշակման գիտականութիւնները յաղթահարելու նպատակով իր որդեգրած եղանակը, զոր ան փոխ տուն է բանասիրութեան գիտող խորհրդի լեւի՛նէ՛ գիտելով աւելոր մական բանական վերլուծման հայկական փոխերու համակարգին:

Անդրադառնալով այս առաւելութեան, Գէորգ Տաղչիւնան իր զրէ՛. «Այստեղից էլ, ժողովածուն աւելի է ալմե՛հարում արծարծած զանազան հարցերի տարբեր կողմերին վերաբերող վիճակագրական աղիւսակների ակալութեամբ, ըստ անհրաժեշտութեան ու պատշաճի՝ վիճակագրական աւելայների կիրառմամբ»:

Ժողովածուին աւելոր բաժնը նուիրուած է բանահիւան նիւթերուն: Հնե ամփոփումն են տարբեր տեղերու պատկանող 1230 զրութիւն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀԱՅ ԱՅԴԵՐՈՒՄԻՆԻՆԻՆԻ
ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՆԱԽԳԻՐ ԵՎ ԻՆՏՐՈԴՈՒԿՈՒԿՈՒՄԸ

16

ՎԵՐԻՆԵ ՍԱՊՈՒՆԸ

ՄՈՒՍԱ ԼԵՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԱՀԻՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

անոնց կարգին՝ 32 հեքիաթ, 12 առակ եւ մանրավէպ, 11 առանգոյթ եւ սեպուաւանկան գրայք, ըն խաղիկ, 20 փառնեցողային, 14 հայրենասիրական, գիտութիւն եւ տարագրութեան երգեր, 678 առանձնացումներ, 33 հանրուկ, 71 տեղեք, 52 օղանք, 22 երգում, 300 դարձումներ:

Յատուկ արժէք ունին երազական խաղերով զետեղուած մեն ու փոքր, տարբեր ընդթի՛ 10 երգերը, զոր մանրապատկեր վրայ արձանագրած է Վ. Սիւլադեան, իսկ խաղագրութեւ կատարած է երաժշտագէտ Գարո Չալիկեան:

Ժողովածուին վերլուծութեան արուած են նաեւ բանահիւան նիւթերուն մէջ գործածուած բաներու բառարան, բնագործի նախագրութիւններ, բանաստեղծներու կենսագրական համառոտ առեւտիներ եւ նիւթերու առեւտին ու տեղի կէն ամփոփումներ:

Այս ամբողջական արգիւնքին հասնելու համար, Վերժինէ Սիւլադեան այցելած է Հայաստանի այն բոլոր շրջանները, ուր ապրած է թեկուղ մուտ լեռնի մէջ ընտանիք, վիճակագրական տուեաններ հաղորդած է 7 հազար մուտ լեռնիներու եւ հարցրութեւն է Մուտ լերան վեց զիւղերէն 80 բանաստեղծ:



**ՔՆԱՐԻԿ ՊՕՅԱՃԵԱՆ
ԿԸ ՄԱՄՆԱԿՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂՆԵՐՈՒ
ՀԱՄԱՇԱՐՀԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Վերջերս, Մարտի մէջ կայացած բանաստեղծներու համախարային համագումարին (Հոկտեմբեր 24-էն 28), իրենց մասնակցութիւնը բերած են Չարսառ, Արիսիա Կիրակոսեան եւ Քնարիկ Պոյանճեան:

Համագումարը կայացած է Մարտի Հասան Բ. Յարզաւորի հովանաւորութեամբ, իսկ ձեռնարկին ծախսերը հոգացուած են Իւնկաքոյի, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան եւ ժիջադասին եման կազմակերպութիւններու կողմէ:

Տեսաւ համագումարին, Քնարիկ Պոյանճեան ներկայացուցած է տեղւոյն բանաստեղծութիւններու իր երկերը հաւաքածոն՝ «Էլաստորուած ցայեմին» խորագրով, որ կը բաղկանայ 32 բնութեաներէ եւ հրատարակուած է Մատրասի մէջ:

Աւելին, ամերիկահայ բանաստեղծուհին համագումարին կարգացած է «Ստեղծագործութիւնը իրեն զարդացումի ազդակ» թեմայով գեկուցում մը, ինչպէս եւ յորս բանաստեղծութիւններ իր ստեղծագործութիւններէ՝ երեքը անգլերէն եւ մէկը հայերէն լեզուով: 18 Հոկտեմբերի Նիստին, Թայփէն համալսարանի արուեստի եւ մշակութի բաժանմունքին նախագահ՝ Թին-տէն Չանկ պինգ պարզեցուարած է գրականութեան պատուան սոց-թորայի տիտղոսով:

**«ՊԱՏՈՒԻ ՀԱՄԱՐ»Ը
ԱՐԱՐԵՐԵՆՈՎ**

Անշուշտ Շիլլանգագէի «Պատուի համար»ը այս տեսակ է արարելէն լեզուով, Դամասկոսի

մէջ (1893), Սուրբոյ մշակոյթի նախարարութեան հրատարակատունէն, Պոզոս Սարահանի թարգմանութեամբ:

Վաթնական թուականներուն Հայաստան ներդրած երիտասարդ թարգմանիչը ծնած է Գամիլի: «Պատուի համար»ը արարելով հրատարակուած իր առաջին թարգմանական գործն է, որ կը բազուի ամփոփ կենսագրականով մը: Դասական արարելով (Սահաւոյի) կատարուած այս թարգմանութիւնը կը յատկանշուի թարգմանիչին բնականորէն ծանցումով եւ իր պարզ լեզուով:

**«ԶՕՐԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿԸ
ԿԸ ՉԵՌՆԱՐԿԸ
ԵՂԵՌՆԻ ԱՐԽԻՆԵՐՈՒ
ՀԱՌԱՔՄԱՆ**

Անշուշտ աշան գումարուած իր տարեկան ժողովին, «Զօրեան» Հիմնարկի տնօրէնը, խորհուրդը, ի միջի այլոց, որոշած է ձեռնարկել Հայկական Յեղասպանութեան ընդ արիւններու հուարման աշխատանքին:

Ըստ տեղեկներու խորհուրդի նախագահ Լեւոն Չարզուտեանի, այս ծրագիրը կենսական նշանակութիւն ունի մեր ժողովուրդին համար, եւ զօմանակն է, որ այդ աշխատանքները մաս կազմեն ընդհանուր ու ամբողջական ծրագրի մը, որուն անհրաժեշտութիւնը զգացած ենք երկուք տանէ ի վեր, ամէն տեղ:

Գիտական Հիմնաւ դրաց եղանակի փոստաւաւաքման ու արիւններու կազմակերպման ջոգաւաքական նշանակութիւնը ընդգծելէ ետք, Չարզուտեան ասեցուցած է, թէ այս ծրագիրը իր տեսակին մէջ առաջինն է, որ պիտի փորձէ ի մի խմբի, ծանօթ եւ անծանօթ ու շէջ մը ամէն տեղ ճշուած ըստ արիւնները, աշխատանք մը՝ որուն իրականացման համար տարասփեւ հայ ժողովուրդը պէտք է լինէ իր նիւթական մասնակցութիւնը:

Մտալին երկար դասը պիտի ընդգրկէ արիւններուն հրատարակութեան աշխատանքը, իսկ մինչ այդ հաւաքուած արիւնները պիտի գրուին գիտական հետաքրքրութիւն ունեցող մասնագէտներու եւ այլ Հիմնարկներու արամարդութեան տակ:

«Զօրեան» Հիմնարկի տնօրէններու խորհուրդին մաս կը կազմեն պատմաբաններ Բիլլըրտ Յովհաննէսեան եւ Ռաւրյա Սիւնի, գրականագէտ Ճոյն Գարսամ, լեզուաբան Յամիկ Սերոբեան, փիլիսոփայութեան դասախօս Կարպիս Քորթեան, իրաւաբան Լեւոն Կիրակոսեան եւ խորհուրդի նախագահ Լեւոն Չարզուտեան:

ՀԱՅ ՏԵՍԱՆ

ՀԱՅ ՏԵՍԱՆ

ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԽՈՐՀԷ՝ ԵՒ ՄՏԻՐ

(Խոհեր եւ հայեացքներ դպրեկանքի մասին)

- Ամբիլիաս, 1984, 290 էջ, բարձրորակ տպագրութիւն:

ՖՐԱՆՑ ՎԵՐՅԷԼ

ՄՈՒՍԱ ՏԱՂԻ ՔԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ

— Հատոր Ա. —

- Ամբիլիաս, 1984, 347 էջ, բարձրորակ տպագրութիւն:

●

— Հատոր Բ. —

- Ամբիլիաս, 1984, 267 էջ, բարձրորակ տպագրութիւն:

(Թարգմանեց՝ ՏՈՔԹ. Բ. ՓԱՓԱՋԵԱՆ)

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

ՀԱՄԱՆՈՒԱԳ. ԹԱԻՆՐԺԻ — Գերբուածներ —

Կարապետ Թաթուլեան, Պէյրութ, 1984, «Արագ» տպարան:

ՅՈՒՆԵՍԿՈ — ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ — ալպամ —

Հրատարակութիւն՝ «Գրական հմբակ»ի, Լոս Անճեյլըս, 1983, «Ալֆօ» հրատարակչատուն:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ «ՍՓԻՒՌԻ» ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ (1958-1978)

Սազօ Օգնայեան, Պէյրութ, 1984, «Էտվա» տպարան:

ՀԱՅԿԱՆ
ԵՐ. ԵՐԵՐԱՆ

ԼԻԲԱՆԱՆ

Հատաժամանակ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատաժամանակ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
المدير المسؤول
السيد اوتين كارنيك قزانيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTERAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
•
ԲԱԿԻՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ
Խմբագիր
ՊՐՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրության անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
Ս. ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ
B. P. 11 - 8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898

كانون الثاني ١٩٨٥

digitised by A.R.A.R.@